



ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ  
ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ







Շուշանիկա ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆՑ

# ՎԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

A  $\frac{I}{9058}$

„ՀԱՅԱՍՏԱՆ“  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1966



Այս գրքի հեղինակ Շուշանիկա Նիկիտիչնա Մանուշարյանցի կյանքի ուղին մեծ է ու հետաքրքրական:

Իր հարազատ հարավային քաղաք Ստավրոպոլում ավարտելով դիմ-նագիւն, Շուշանիկա Մանուշարյանցը 1907 թվականին, տասնութամյա հասակում, գնում է Պետերբուրգ և ընդունվում իգական (Բեսսովևյան) բարձրագույն դասընթացը: Նույն տարին հանաքար մտնում է պարտիական միջավայր: 1912—1914 թվականներին ապրում է Կապրի կղզում, ուսումնասիրում արվեստ, գրականություն, իտալերեն լեզուն: Հենց այդտեղ էլ ծանոթանում է Ա. Մ. Գորկու, Ֆ. Ի. Շալապինի, Ի. Ա. Բունինի հետ...

1917 թվականի Ռեուցիոյան Պետրոգրադի Շուշանիկա Նիկիտիչնան վարում է Պետրոգրադի հեռուգրական գործակալության գրական բյուրոն: 1918 թվականի դարնանը նա տեղափոխվում է Մոսկվա և աշխատում Համառուսաստանյան ԿԳԿ-ի հրատարակչությունում: Այդ նույն թվականի հունիսին մտնում է կոմունիստական պարտիայի շարքերը: 1919 թվականին նա ընդունվում է հենց նոր ստեղծված Պետհրատ և աշխատում է դրադարանում, իսկ հետո՝ իբրև հրատարակչության խմբագրական կոլեգիայի քարտուղար:

1920 թվականի մարտի 14-ից Շ. Ն. Մանուշարյանցը Վ. Ի. Լենինի գրադարանավարուհին էր: 1924—1930 թվականներին Շուշանիկա Նիկիտիչնա Ն. Կ. Կրուպսկայայի գրադարանավարուհին էր (Կրեմլում), այնուհետև 25 տարի շարունակ ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի գիտական աշխատող: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով ու մեդալներով:

Այժմ Շ. Ն. Մանուշարյանցը մեծ վաստակ ունեցող թույլագրու է: Նա չի դադարեցնում իր հասարակական և ստեղծագործական գործունեությունը, աշխատավորության, դպրոցականների առջև հանդես է գալիս Վ. Ի. Լենինի մասին հետաքրքիր գրվածքներ պատմելով, պարբերաբար աշխատակցում մամուլին:

## ШУШАНИКА НИКИТИЧНА МАНУЧАРЬЯНЦ В БИБЛИОТЕКЕ ВЛАДИМИРА ИЛЬИЧА

(На армянском языке)

1—1—3

Издательство «Айастан»

12—66

Ереван, 1966

## ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈՒՍԱՐԵՆ

Վլադիմիր Իլյիչ Լենինի վերաբերյալ ամեն մի նոր գիրք ընթերցողի մոտ հոգեկան հուշմունք է առաջ բերում: Նա անհամբերությամբ թերթում է էջերը, ցանկանալով գտնել թանկագին կերպարի դեռևս անհայտ, նոր գծեր, թեկուզ ամենափոքր, բայց այնքան թանկագին: Այդ տեսակետից Շ. Ն. Մանուշարյանցի գրքուկը մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Շուշանիկա Նիկիտիչնային կյանքը հսկայական երջանկություն է շնորհել՝ ավելի քան երեք տարի նա աշխատել է որպես Վ. Ի. Լենինի գրադարանավարուհի: Նա ամեն օր շփվում էր նրա հետ, կատարում նրա մանձնարարությունները, օգնում նրան աշխատանքում, ապահովելով անհրաժեշտ գրքերով: Իսկ Վլադիմիր Իլյիչի համար գրքերը մարտական լենք էին նրա անդադրում տեսական ու պրակտիկ գործունեության մեջ, սոցիալիզմի համար, մարդկության բարգավաճման համար մղած տխրահաղթական պայքարում:

Աշխատելով Վ. Ի. Լենինի գրադարանում, ընկեր Մանուշարյանցը, այն ժամանակ երիտասարդ կոմունիստ, իրեն գրուեորել է որպես անբասիր կատարող, ճշտապահ ու նախաձեռնող: Վլադիմիր Իլյիչը գոհ էր իր գրադարանավարուհուց: Մանուշարյանցի մասին նա մի անգամ ասել է.

— Դեռ ոչ ոք ինձ այդքան լավ չի սպասարկել:

Վ. Ի. Լենինի գրադարանը տեղավորված էր Կրեմլի նրա աշխատասենյակում: Այն հումեմատաբար մեծ չէր. այնտեղ հաշվվում էր ընդամենը մոտ



երկու հապար գիրք, բայց դրանք ընտրվում, դառավորվում, լրացվում կամ ուրիշներով փոխարինվում էին միայն Վլադիմիր Իլյիչի ցուցումով կամ էլ նրա համաձայնությամբ: Լենինը լավ գիտեր այդ գրքերից յուրաքանչյուրը:

Իր բրոշյուրում Շուշանիկա Նիկիտիչնան շատ հետաքրքիր բաներ է պատմում գրադարանում աշխատանքի կարգի և Վլադիմիր Իլյիչի ցուցումների մասին, գրքերի վրա նրա նշումների և այն մասին, թե նա ինչպիսի խնամքով էր վերաբերվում գրքերին, սիրում դրանք: Բերվում են Վ. Ի. Լենինին որպես ընթերցողի ու սրպես հեղինակի բնութագրող նոր փաստեր: Արժեքավորն այն է, որ այդ բոլոր հարցերը լուսաբանող նյութերը հեղինակը քաղում է իր հիշողություններից, որոնք ամրապնդվում են լենինյան փաստաթղթերով:

Շ. Ն. Մանուչարյանցի բրոշյուրի էջերից ընթերցողը տեսնում է իմաստուն ու պառնանջկոտ Լենինին, որը խստությամբ պատժում էր անփութության ու փնթիության համար, և սիրալիր, բարի, կենսախինդ, ուրախ կատակներ հասկացող, մարդկանց ու կյանքը՝ իր բոլոր գրսնորումներով կրքոտորեն սիրող Լենինին:

Հեղինակը բերում է Վ. Ի. Լենինի այն հույժ կարևոր նամակը, որ «III Ինտերնացիոնալ: 6—7-ը մարտի, 1919» բրոշյուրի անփույթ հրատարակման առթիվ գրել էր պետական հրատարակչություն՝ Վ. Վ. Վորոպկին: Այդ նամակը շատ բնորոշ է աշխատանքի լենինյան ոճի համար: Խորապես պայրացած, Վլադիմիր Իլյիչը խիստ արտահայտություններով քննադատում է բրոշյուրի վատ հրատարակումը և տեղն ու տեղը տալիս է գործերն ուղղելու ճիշտ ու կոնկրետ ցուցումներ:

«Պահանջում եմ. 1) Ուղղել կպցնելու միջոցով: (Մեղավորներին բանտ նստեցնել և ստիպել փակցնել բոլոր օրինակներում):

Հաղորդել ինձ.

2ա) Զանի՞ օրինակ է տպագրվել:

2բ) Զանի՞սն է տարածվել:

3) Վերահրատարակություն սլատշան ձևով: Սրբագրությունը ցույց տալ ինձ:

4) Այնպիսի կանոնների սահմանում, որպեսպի լույս ընծայված ամեն մի բանի համար պատասխանատու լինի որոշակի սնձ (պահել պատասխանատու անձանց զրանցումների գիրք):

5) Կարգավորման այլ միջոցներ. Եղյալիսիք մշակել և ուղարկել ինձ»:



Հիշելով անմոռանալին, ընկ. Մանուշարյանցը ցույց է տալիս, թե որքան ընդարձակ էր Լենինի նետաքրքրությունների շրջանակը, թե ինչ մարցերի վրա էր նա ուշադրություն դարձնում սովյալ պահին: Վլադիմիր Իլյիչի օգտագործած գրքերն ամենաբազմապես էին. փիլիսոփայության, սոցիոլոգիայի, պատմիայի պատմության, ամեն տեսակ գիտական պորբլեմների վերաբերյալ: Վ. Ի. Լենինը միշտ ձգտում էր ձեռքի առնել ունենալ իր տեսադաշտում գտնվող բոլոր հարցերի վերաբերյալ սպառիչ նյութեր:

Վ. Ի. Լենինի գրադարանում կային ոչ միայն աշխատանքում իրեն պետք եկող գրքեր, այլև այնպիսիները, որոնց նա դիմում էր անասելի ինտենսիվ աշխատանքից ցրվելու համար: Լենինի մոտ աշխատանքը երբեմն այնպես լարված էր, որ նա ինքն էլ դրա տեմպը «կատաղի» էր համարում: Եվ ակամայից ուրախությամբ ժպտում ես, կարդալով այն էջերը, որտեղ ընկ. Մանուշարյանցը պատմում է, թե ինչ համառությամբ էր Վլադիմիր Իլյիչը պահանջում իր համար ճարել Նաժիմիևի «Հիշողություններ Տոլստոյի մասին» գիրքը: Նրան նետաքրքրում էին թե՛ Պանանայի մեմուարները, թե՛ Հայնեի բանաստեղծությունները, թե՛ Դյոթեի «Ֆաուստը», և թե՛ շատ ուրիշ գրքեր: Մեզ վիճակվել է տեսնել, թե ինչպես հաճախ էր կարճ թույլներին Վլադիմիր Իլյիչը պահարանից ընտրում էր մի գիրք և բավականությամբ վերընթերցում սիրած հեղինակի ծանրոք էջերը:

Ուշադրության են արժանի գրքի վրա արված Լենինի նշումները: Դրանք շատ-շատ են և մեզ օգնում են լավ ուսումնասիրել գրքի վրա աշխատելու Վլադիմիր Իլյիչի մեթոդը: Դրանք կարճ են, արտասովորիչ և միշտ խոր ու բովանդակալից: Երկու-երեք բառում, ընդգծումներում պարզ արտահայտված են Լենինի մտքերը, նրա վերաբերմունքը ընթերցանի նկատմամբ: Շ. Ն. Մանուշարյանցը բավական հանգամանալի է օգտագործում գրքերի վրա արված Վլադիմիր Իլյիչի նշումները, մեկնաբանում դրանք: Մենք յոմանում ենք, թե ինչպես մեկ անգամ նայելով Մոստովետի գործկոմի գործունեության վերաբերյալ բողոքը, Լենինը ընդգծել է. «Տեստեսական հարցեր—8: Կազմակերպական հարցեր—46» բառերը: Եվ լուսանցքներում գրել է. «Այլանդակություն: Պետք է ընդհատապես լինի»: Ուսանելի է: Այստեղ թե՛ քննադատություն կա, թե՛ պրակտիկ ցուցում: Այսպիսին էր Լենինյան ոճը:

Շուշանիկա Նիկիտիչնան ճիշտ է գրում, որ գրքերի վրա արված Վ. Ի. Լենինի նշումները լրիվ ուսումնասիրելու համար սպասանքվում են գիտա-

կան աշխատողների կոլեկտիվ ջանքեր: Սակայն բրոշուրում տրված տեքստով էլ այդ նշումները, անկասկած, ընթերցողի մոտ որոշակի ձեռաբերություն են առաջացնում:

Այս կամ այն գիրքն ստանալու Վլադիմիր Իլյիչի ցանկությունը պատահական չէր, այն միշտ կապված էր որևէ տրակտիկ անհրաժեշտության հետ: Հեղինակը, օրինակ, բերում է Խրիստո Կաբակչիկի պատմածը, թե ինչպես էր Վլադիմիր Իլյիչը հետաքրքրվում բուլղարական մասսայական ազիտացիոն գրականությամբ: Եվ հենց դրանով է բացատրվում նրա հստակարարությունը գրադարանավարուհուն՝ ճարելու բուլղարա-ռուսական բառարան: Շատ օգտակար կլինե՞ր հետևել պահանջած գրքի վերաբերյալ Լենինի յուրաքանչյուր հարցման սուրիվ նման կախվածությանը:

Կոմսոմոլի III համագումարում Վ. Ի. Լենինի արտասանած ճառի հրապարակման պատմությունից, որ շարադրում է ընկ. Մանուչարյանցը, երևում է, թե ինչ սիրով ու հուզասարությամբ էր Լենինը վերաբերվում մեր երիտասարդությանը: Նա երիտասարդությանը կոչ էր անում անդադրում սովորել կոմունիզմ, կոռուցել կոմունիզմ, չխնայելով սեփական ուժերն ու գիտելիքները:

Վլադիմիր Իլյիչի հասարակական-քաղաքական և գիտական ամբողջ գործունեության համար բնորոշ է տեսության ու պրակտիկայի անխզելի կապը: Լենինի գիտական աշխատությունները ծնվում էին ոչ թե կյանքից կտրված, այլ աշխատավորության հետ սերտ շփման պայմաններում, հաշվի առնելով նրանց փորձը, դրանք եղել են, մի տեսակ, նրա առօրյա գործունեության շարունակությունը: Ընկ. Մանուչարյանցը դա ցույց է տալիս Վլադիմիր Իլյիչի «Մեծ նախաձեռնություն» և «Պարենհարկի մասին» աշխատությունների վրա:

Շ. Ն. Մանուչարյանցի գրքովը, որը գրվել է ժուռնալիստ Ի. Ռ. Մոշնինի ստեղծագործական աշխատակցությամբ, կարդացվում է մաքիշտակությամբ: Այն միտք է արթնացնում, ցանկություն առաջացնում հետազայում ևս սշակել հեղինակի շոշափած հարցերը, է՛լ ավելի ուշադիր ուսումնասիրել մեծ Լենինի ստեղծագործական լաբորատորիան: Կարծում եմ, որ ընթերցողն այս գիրքը կընդունի և կգնահատի ըստ արժանվույն:

Լ. Ա. ՅՈՏԻԵՎԱ

1904 թվականից ՍՄԿՊ անդամ:

## ԱՆՄՈՌՍԱԼԻ ՕՐ

Իշում եմ Պետհրատի առօրյան, ուր՝ ես աշխատում էի շՈ՛ւական թվականներին, սկզբում որպես գրադարանա-վարուհի, իսկ հետո խմբագրական կոլեգիայի քարտուղար։

Այդ հիմնարկն այն ժամանակ ղեկավարում էր Վլադիմիր Իլյիչ Լենինի ղինակիյներից մեկը՝ Վ. Վ. Վորովսկին։ Այն տեղավորված էր Ռյաբուշինսկու նախկին առանձնատանը, որը գտնվում էր Մոսկվայի Մալաչա նիկիտսկոյա փողոցի վրա։

Հրատարակչությունում գործերը շատ էին։ Պահանջվում էր կարգավորել թե՛ ղեղարվեստական, թե՛ գիտական և թե՛ քաղաքական գրականության թողարկումը, մասսաներին տալ հոգեկան ու ղաղափարական այնպիսի սնունդ, որն օգնեիր նրանց ավելի լավ յուրացնելու պրոլետարական ռեոլյուցիայի նպատակներն ու խնդիրները, սովորեցնել թե՛ ինչպես գործնականում կենսագործել սոցիալիստական մեծ և հսյա-կապ գաղափարները։

Մինչև հիմա հստակորեն պատկերացում եմ, թե ինչպես հրատարակչության առանձնատան աստիճաններով բարձրա-

նում էր վսեյնչակազմ Բրյուսովը՝ նուրբ ու ինտելիգենտ դեմքով։ Այդ ժամանակ տպագրվում էր նրա նոր բանաստեղծությունների գրքույկը։ Շինելը հաղին անցնում էր Սերաֆիմովիչը։ Նրա աչքերը թախծոտ էին (հենց նոր ռազմաճակատում զոհվել էր նրա որդին՝ Մոսկովյան կոմերիտմիության ղեկավար Անատոլին)։ Թնդուն բասով ընդունարան էր մտնում Թիկենդ Մայակովսկին։ Նա սովորաբար գալիս էր ոստեր ունեցող մեծ ձեռնափայտով, այն դնում իմ սեղանին և վրասափորեն ասում.

— Վորովսկու մոտ եմ գնում։

Կրունկներով ամուր թխկթխկացնելով, հրատարակչության վարիչի աշխատասենյակն են մտնում միանգամից երեք հաճախորդ։ Նրանցից մեկը ոչ բարձրահասակ, շիկահեր, շեղ օձիքով վերնաշապիկ հագած սլոես Նսենինն էր...

Նկավ 1920 թվականի գարունը, և իմ սովորական հրատարակական կյանքը անսպասելիորեն փոխվեց։ Մեկ անգամ աշխատանքային օրվա վերջում ինձ իր աշխատասենյակը կանչեց Վադլավ Վադլավովիչ Վորովսկին և ասաց.

— Ինձ հենց նոր վանդահարեցին Վլադիմիր Իլյիչի քարտուղարությունից։ Նրան հարկավոր է գրագաբանավարուհի։ Հարցնում են, թե արդյոք չի՞ կարելի դրա համար ձեզ ազատել։

Նա խիստ հուզվեցի։ «Կկարողանամ արդյոք աշխատել մեծ Լենինի մոտ, գլուխ կհանե՞մ» — այս միտքը անմիջապես ծագեց իմ գիտակցության մեջ։ Տատանվում էի։ Իմ կասկածները հայտնեցի Վորովսկուն։ Նա զարմացավ.

— Ի՞նչ եք ասում. յուրաքանչյուրը երազում է գոնե տեղինել Լենինին, իսկ ձեզ հնարավորություն է ընձեռվում աշխատել անմիջականորեն նրա ղեկավարություն տակ։ Մի վախե-

ցեք, չէ որ դուք լավ գիտեք դրադարանային գործը: Դե, վճարեք: Կես ժամից նորից կվանգահարեն: Ես պետք է պատուսխանեմ: Համաձայն եք:

— Այո՞, — հաստատուն արտասանեցի ես:

— Այ, դա հիանալի է, — ինձ հետ միասին ուրախանալով, ասաց Վորովսկին և, խորամանկորեն նայելով ինձ, ավելացրեց. — Միայն թե շատ շո՛ւթեմ տանաք:

Երբ Վորովսկուն նորից ժողկոմսովետից ղանգահարեցին, նա պատասխանեց, որ ես համաձայն եմ, բայց սուսժամ ինձ բաց թողնելու ոչ մի հնարավորություն չունի, և այդ պատճառով ես սկզբնական շրջանում կտրող եմ Վլադիմիր Իլյիչի գրադարանում աշխատել միայն երեկոները:

Հաջորդ օրը գնացի ժողկոմսովետ: Ինձ դիմավորեց Սոֆիա Բորիսովնա Բրիչկինան: Նա ժողկոմսովետի գրասենյակի վարիչն էր, բայց ժամանակավորապես, Լիդիա Ալեքսանդրովնա Ֆոտիևայի արձակուրդի կապակցությամբ, փոխարինում էր նրան որպես ԺԿՍ-ի քարտուղար և Վ. Ի. Լենինի անձնական քարտուղար:

Սոֆիա Բորիսովնայի հետ ես ծանոթ էի: Նա գիտեր, որ ես արդեն վաղուց է ինչ գտնվում եմ պարտիական միջավայրում, հետաքրքրվում եմ ռևոլյուցիոն գրականությամբ և դիտվում գրադարանային գործով:

Մի անգամ Բրիչկինայի հետ խոսելիս Վլադիմիր Իլյիչը նշել է, որ այժմ, երբ արդեն իր անունով ստացվում է բավականին շատ գրականություն, իր համար դժվար է մենակ դրանք կարգավորել: Պահանջվում է հատուկ աշխատակից: Սոֆիա Բորիսովնան ասել է, որ ինքը կաշխատի դրա համար համապատասխան մարդ ընտրել, Լենինը համաձայնել էր:





Վ. Ի. ԱՆԻՔԻ աշխատասենյակը և գրադարանը:

Դրան հաջորդել էր ԺԿՍ-ի քարտուղարության հեռախոսա-  
յանըր Պետհրատ՝ Վորովսկուն...

Եվ ահա ես ժողովոմսովհատում եմ:

— Այսօր,— ասաց Բրիչկինան,— Վլադիմիր Իլյիչը ձեռ-  
նդունել չի կարող. նա մեկնել է: Իսկ այժմ, ժամանակ չկորց-  
նելու համար, խորհուրդ եմ տալիս ծանոթանալ նրա գրա-  
դարանին:

Ես մտա ժողովրդական կոմիտարների սովետի նախագա-  
հի աշխատասենյակը, ուր գտնվում էր գրադարանը: Ամենից  
առաջ ուշադրություն դարձրի այն բանի վրա, թե որքան հա-  
մեստորեն է այն կահավորված: Զարմացրեց նաև դրերի ոչ  
մեծ քանակը: Ինձ թվում էր, թե Լենինը պետք է ունենար  
վիթխարի գրադարան: Ավելի ուշ իմացա, թե բանն ինչումն  
է: Վլադիմիր Իլյիչը գրքի պալատից ստանում էր Սովետա-  
կան Ռուսաստանում լույս տեսնող յուրաքանչյուր գրքից մի  
պարտադիր օրինակ, նրա համար շատ գրականություն դուրս  
էր գրվում տարբեր գրադարաններից, գրքեր էին ուղարկվում  
նաև արտասահմանից: Բայց նա աշխատասենյակում էր պա-  
հում միայն այն գրականությունը, որը նրան հարկավոր էր  
ընթացիկ աշխատանքների ու տեղեկանքների համար: Ես  
նկատեցի բազմաթիվ աշխարհագրական և օպերատիվ քար-  
տեղներ: Դրանք կախված էին պատերից, փռված սեղանների  
վրա: Քաղաքացիական պատերազմ էր գնում, և Վլադիմիր  
Իլյիչին, որը զլխավորում էր Բանվորա-գյուղացիական  
պաշտպանության խորհուրդը, հարկ էր լինում միշտ օգտվել  
այդ քարտեղներից:

Վ. Ի. Լենինի գրադարանի հետ իմ թուլցիկ ծանոթությու-  
նից հետո, Սոֆիա Բորիսովնան ասաց, որ վաղը ցերեկվա



ուղիղ ժամը շորսին պետք է գամ դրույցի՝ Վլադիմիր Իլյիչի մոտ:

Ուրախ հուզմունքը պատեց ինձ, չէ որ հանդիպելու էի մի մարդու հետ, որի անունը հսկայական սիրով ու հարգանքով կրկնում են ամբողջ աշխարհի աշխատավորները...

Առաջին անգամ ես Հենինին տեսել էի 1917 թվականի ապրիլի 3-ին: Նա այն ժամանակ Պետրոգրադ վերադարձավ իր վերջին էմիգրացիայից: ՌՍԴԲՊ Պետրոգրադի կոմիտեի քննիչների հետ մտա Ֆինլանդական կայարանի գլխավոր սրահը, ուր հանդիպեցի Վլադիմիր Իլյիչին ու նազեժդա Կոնստանտինովնային...

Ավելի ուշ, 30-ական թվականներին, Ն. Կ. Կրուպսկայայի հետ ունեցած դրույցի ժամանակ խոսք բացվեց Պետրոգրադում Վ. Ի. Հենինի հետ հանդիպման մասին: Ես նազեժդա Կոնստանտինովնային հիշեցրի, որ Ա. Մ. Կոլոնտայր այն ժամանակ կարմիր վարդերի ու մեխակների մի ծաղկեփունջ մատուցեց իրեն: Նա ասաց.

— Թե ես այնքան հուզված էի, որ ուշադրությույն չդարձրի դրա վրա: Հուզված էր նաև Վլադիմիր Իլյիչը:

...Վաղը ես նորից պետք է տեսնեմ Հենինին և խոսեմ նրա հետ:

Նշանակված ճիշտ ժամին՝ 1920 թվականի մարտի 14-ին, հուզմունքով ոտք դրի Ժողկոմսովետի նիստերի դահլիճ: Եվ իսկույն տեսա Վլադիմիր Իլյիչին: Նա հենց նոր էր դուրս եկել իր աշխատասենյակից, հագել էր վերարկուն և, հավանաբար, պատրաստվում էր ինչ-որ տեղ մեկնելու: Ես կանգ առա և շփտեի, թե ինչ անել: Ինձ այդ վիճակից դուրս բերեց Ն. Գ. Կրասինան, ԺԿՍ-ի քարտուղարներից մեկը:

— Վլադիմիր Իլյիչ,— ասաց նա,— եկել է գրադարանավարուհին աշխատանքի վերաբերյալ ձեզ հետ զրուցելու համար:

Իսկ Լենինը, ժպտալով, արդեն գալիս էր ընդառաջ, ձեռքը դնելով ինձ սարդած:

— Բարե ձեզ: Այդ դո՞ւք եք գրադարանավարուհին:

Իմ ամբողջ հուլմունքն իսկույն չքացավ: Վլադիմիր Իլյիչը ինձ առաջարկեց նստել և սկսեց հարցումներ անել:

— Դուք մասնագետ եք: Արդյոք գիտե՞ք գրադարանային գործը:

Նստատասխանեցի, թե հատուկ դասընթացներ չեմ անցել, բայց դրքեր սիրում եմ և դրանց հետ աշխատելու որոշ փորձ ունեմ:

— Իսկ դուք արդյոք կարո՞ղ եք ցանկացած ժամանակ ճարել ինձ համար անհրաժեշտ գիրքը:

— Կաշխատեմ:

Վլադիմիր Իլյիչը նայեց ինձ, մի պահ մտքերի մեջ ընկավ, կարծես թե ինչ-որ բան ծանր ու թեթև անելով, ապա արտասանեց.

— Դե, այն դեպքում ծանոթացեք իմ գրադարանի հետ:

— Նստե՛ք: Այդպես, — մի տեսակ անսովորական դուրս թռավ բերանիցս:

— Այդ ե՞րբ:

— Երեկ:

Դա Լենինին մի փոքր զարմացրեց: Նստե՛ք, — ասաց, — ասաց, որ նախօրյակին եղել եմ այստեղ և ընկ. Բրիչկինայի խորհրդով մի փոքր ծանոթացել գրադարանի հետ:

Լսելով ինձ, Վլադիմիր Իլյիչն ասաց.

— Վաղը եկեք աշխատելու: Յոռու ժամանակ:

## «ԻՆՉ ՆՈՐ ԲԱՆ ԿԱ.»

**Ա**ռաջին երկու տարին ես աշխատեցի թե՛ Վլադիմիր Իլյիչի գրադարանում և թե՛ Պետհրատում: Իմ օրվա ուժիմն աշխատեցի էր. օրվա կեսը զբաղվում էի հրատարակչությունում, հետո գնում ժողովրդասովետ: Այստեղ ձեռնամուխ էի լինում գրադարանային գործին. աչքի էի անցկացնում նոր լույս տեսած գրքերը (գրանք պարբերաբար ստացվում էին մեծ քանակությամբ), ընտրում, իմ կարծիքով, ամենաանհրաժեշտները և գրանք դարսում Վ. Ի. Լենինի գրասեղանին ուղղահայաց դրված սեղանին: Գրանցում էի գրքային նորությունները (գրա համար առանձնացված էր հատուկ մատյան), լրացնում կատալոգի քարտերը, կարգի բերում գրապահարանները, ընտրում Վլադիմիր Իլյիչի խնդրած գրականությունը, ուրիշ գրադարաններից դուրս էի դրում նրան անհրաժեշտ գրքերը:

Ճաշի ընդմիջումից հետո (զա սովորաբար երեկոյան ժամը վեցին էր լինում) աշխատասենյակ էր մտնում Վլադիմիր Իլյիչը: Մինչև այժմ իմ հիշողության մեջ մնացել է անմոռանալի մի պատկեր: Աշխատասենյակի պատուհանից ներս էին լցվում գարնանային արևի ուրախ ճառագայթները: Դրանք

վառ լուսավորում էին այն դուռը, որտեղից գալիս էր Հենինը: Ձեռքերով ծածկելով աչքերը, նա եռանդով ու ամուլզգությամբ լի, ասում էր.

— Ա՛-ա՛, գրադարանավարուհին արդեն այստեղ է: Բա-  
րն ձեզ: Ի՞նչ նոր բան կա:

Հետո նա աչքի էր անցկացնում իմ ընտրած գրքերը, մի քանիսը դնում մի կողմ:

— Այ, սրանք ես կվերցնեմ ինձ հետ.— ասում էր Հենինը և ամեն անգամ ավելացնում.— Հետևեցեք, թե ես ինչ գրա-  
կանություն եմ տուն տանում:

Մնացած գրքերը ես ժամանակավորապես տեղավորում էի գրապահարանի ներքևի բաժնում: Հետո դրանք դարձում հա-  
րեան սենյակներից մեկի գրադարակներին կամ ուղարկում ուրիշ գրադարաններ:

Ընթերցված գրքերը Վլադիմիր Իլյիչը ետ էր բերում: Դրանցից շատերի վրա կային նշումներ. «Հենին», «Հենինի օրինակը», «Պահել առանձին», «Դենել Հենինի սեղանին», «Պահել իմ գրադարանում» և այլն: Երբեմն գրքերի և ժուռնալ-  
ների կազմերի վրա նա կարգադրություններ էր դրում: Օրինակ, «Իմ գրադարանի համար հավաքել մի կոմպլեկտ» («Բյուլետեն ՀԱՄԿ-ին», 1920, № 10), «Արտատպել» («Բյուլետեն ԱԳՓԿ», 1920, № 6: Բովանդակության մեջ ընդգծված է «Դիվանագի-  
տությունը և բանկերը» հոդվածը), «Կոմպլեկտը հավաքել, կադմել, ընթացիկ Ա՝-ները զնեկ թղթապանակ» («Իշխանու-  
թյունը սովետներին», 1919, № 8—9). «Հատուկ» թղթապա-  
նակում և կադմել» («Շենեղելինիկ «Պրավդի»», 1919, № 12), «Պահել գաղտնի» («Ռեուլյուցիոն Ռուսաստանը», 1921, № 10):

Նայելով «Սովետական Ռուսաստանի էլեկտրիֆիկացիան»  
Ընկ. Կրթիժանովսկու ղեկուցումը և պրոֆ. Ռամզինի ու Ալեք-  
սանդրովի հարակից ղեկուցումները բանվորների, գյուղացի-  
ների և կարմիրբանակայինների դեպուտատների Պետրոգրա-  
դի սովետի 1921 թվականի հունվարի 20-ի և 22-ի պլենար  
նիստում» գիրքը, Վլադիմիր Իլյիշը երկու անգամ ընդգծել  
է նրա անունը, իսկ անվանաթերթերի վրա նշել «ՆԵ Լենինի  
օրինակը», (իմ գրա(գարան)-ը)։

1921 թվականի սեպտեմբերի 9-ին Լենինը ստացավ «Հա-  
ղարդում ռեսպուբլիկայում դիտա-տեխնիկական աշխատանք-  
ների մասին» գիրքը (Մետալուրգիայի գծով դիտական գոր-  
ծիչների Համառուսաստանյան համագումարի աշխատանքնե-  
րի համառոտ տեսություն, պրակ 5, 1921)։ Գրքի մեջ գրված էր  
ժողովմասովետի գործերի կառավարիչ Ն. Պ. Գորբունովի երկ-  
տողը՝ հասցեագրված Վ. Ի. Լենինին։ Երկտողի վրա կար Վլա-  
դիմիր Իլյիշի մակագրությունը. «Իմ գրադարանում, դնել  
առայժմ սեղանին»։

Վլադիմիր Իլյիշը երբեմն գրքի վրա ուղղումներ էր կա-  
տարում, լրացումներ մտցնում, վիճակագրական հաշվումներ  
անցկացնում, նշում տպարանների թողած սխալները։ Գրքի-  
րից մեկի կաղմի վրա նա նշել է. «Տե՛ս էջ 17, ծիծաղելի  
վրիպակ է»։ Տասնյոթերորդ էջում Լենինը սրբագրական ուղ-  
ղում է մտցրել՝ «բյուրոկրատիզմ» բառը դարձնելով «դեմո-  
կրատիզմ»։

Ծանոթանալով «Մոսկվայի սովետի գործունեության հա-  
մառոտ տեսությունը» բրոշյուրին (Պետական հրատարակ-  
չւթյուն, 1920), Վլադիմիր Իլյիշը դրա վրա արել է հետևյալ  
նշումները.



«Լենին . . . . .

ՏԵՆ՝ ա ո ա ն ձ ն ա պ ե ս էջ 7

էջ 10

Մոսսովետի գործկոմի զարժուենությունը  
...Գործկոմի մի նիստին ընկնում է 35 մասնակից  
անդամ և ըննարկված 10 հարցի վերջիններս կարելի  
է բաժանել 5 խմբի.

- |                                 |      |
|---------------------------------|------|
| 1) Քաղաքական հարցեր, դրանց թիվը | —1   |
| 2) Տնտեսական հարցեր             | —8   |
| 3) Կազմակերպական հարցեր         | —46  |
| 4) Առողջապահության հարցեր       | —1   |
| 5) այլ հարցեր                   | —11» |

Այլանդակություն:

Պետք է հակառա-  
կը լինի

Այդ գործույթին կցված էր մի դիադրամմա, որը ցույց էր  
տալիս Մոսկվայի պլենումի գործունենության ընույթը՝ Ուշա-  
դրավ է, որ Վլադիմիր Իլյիչը հավելվածի վրա գծել էր իր  
դիագրամման, որի համաձայն Մոսսովետը պետք է տնտեսա-  
կան հարցերին առավել մեծ ուշադրություն դարձներ:

Որոշ գրքերի շապիկների վրա Լենինը շարադրել էր այն  
կամ այն աշխատողին ուղղված խնդրանք՝ նայել իր նշած  
էջերը: Այսպես, Սմիլգային ուղարկվեց Գ. Մ. Կրժիժանովսկու  
«ՌՍՖՍՌ տնտեսական պրոբլեմները և Պետական ընդհանուր  
սլանային հանձնաժողովի (Պետսլանի) աշխատանքները»  
գիրքը (պրակ 1, Մ, 1921): Այդ գրքի քառասունհորդ էջին,  
որտեղ բերվում էին երկրի 1921 թվականի երկրորդ կիսամ-  
յակի վառելիքային ռեսուրսները բնութագրող տվյալները,  
Վլադիմիր Իլյիչը խնդրում էր հատուկ ուշադրություն դարձնել:


1 Լենինյան ժողովածու XXXV, էջ 196 (ռուսերեն):

2 Նույն տեղը, էջ 197:





# Деятельность Пленума Моссовета (характер и количество обсуждаемых вопросов).



մոսկովայի պլենումի գործունեությունը բնորոշող դիագրաման  
վ. Խ. Անիբի ուղղումներով:

Գրքի վրա իր նշումները Հենինը ամենից շատ կատարում էր քիմիական և հասարակ, կարմիր և կապույտ մատիտներով, հազվադեպ՝ թանաքով:

Հիշում եմ, երբ ես ձեռնամուխ եղա գրադարանի աշխատանքներին, Վլադիմիր Իլյիչն սասաց.

— Խնդրում եմ զրգերը շտեղափոխել: Ես սովորել եմ դրանց այն դասավորությանը, ուր ինձ մոտ սահմանված է:

— Այդ դեպքում ես անելիք չունեմ,— ասացի ես:

Հենինը ժպտաց ու ասաց.

— Գնացեք տուն հանգստանալու:

— Վլադիմիր Իլյիչ,— դիմեցի ես նրան,— խոսքը ոչ միայն սովյալ պահի մասին է, այլ ընդհանրապես աշխատանքի:

Այստեղ ահա, առաջին պահարանում, օրինակ քաղաքական գրականությունը գտնվում է գեղարվեստականի հետ: Մյուս պահարանները նույնպես պետք է ստուգել:

— Լավ,— համաձայնեց Լենինը,— նայեցեք, գուցե, իրոք, ինձ մոտ այստեղ ամեն ինչ չէ, որ կարգին է: Մտածեք, թե ինչպես լավացնել: Բայց «սպտանին» խնդրում եմ ձեռք չտալ:

«Պտտաններ» (դրանք երկուսն էին) Վլադիմիր Իլյիչն անվանում էր պատվող գրադարականերին, որտեղ գրված էին գրքեր, ժուռնալներ և այլ նյութեր (դրանցից մեկը պատրաստված էր նրա նախագծով): Դրանք գրված էին գրասեղանի երկու կողմերում:

Այ «սպտանի» վրա գտնվում էին բառարանները և տեղեկատու նյութերը, պարտիայի համագումարի արձանագրությունները, նրա ծրագիրն ու կանոնադրությունը, «Պարտիական աշխատողի տեղեկատուն», սովետների համագումարների և Համառուսաստանյան ԿԳԿ-ի նիստերի արձանագրությունները. «ՌՍՖՍՌ դատակազմության կանոնադրության նախագիծը», «ՌՍՖՍՌ քաղաքացիական կողքսի նախագիծը», Կոմինտերնի կոնգրեսի բյուլետենները և դրան վերաբերող օտար լեզուներով նյութեր:

Ստանալով «Համառուսաստանյան ԿԳԿ VII գումարման տեսիայի որոշումներն ու բանաձևերը», այդ գրքին կցած երկտողի վրա Վ. Ի. Լենինը նշել է. «Տեղեկատուն պտտանի վրա, NB»:

Երբ լույս տեսավ «ՌՍՖՍՌ էլեկտրիֆիկացման պլանը: Ռուսաստանի էլեկտրիֆիկացման գծով Պեա. հանձնաժ. պեկուցումը սովետների 8-րդ համագումարին» գիրքը (1920), Վլադիմիր Իլյիչը խնդրեց դրան կցել Արևմտյան Սիրիերի քար-

տեղը, արդյունաբերութեան ընդհանուր սխեման և կազմել: Դիրքը կազմվեց և զրվեց «պտտանի» վրա: Հիշում եմ այսպիսի մի դետալ: Այդ գրքի կողի վրա անունը ճնշելիս «էլեկտրի-ֆիկացիա» բառի մեջ սպրդել էր մի սխալ: Վլադիմիր Իլյիչը կարմիր մատիտով «ո» տառը (էլեկտրոֆիկացիա) ջնջեց և դարձրեց «ի»:

Ես առաջարկեցի նորից կազմել տալ գիրքը: Բայց Լենինն առաջ:

— Չարժե:

Այդ նույն «պտտանի» վրա զրված էր Վ. Դալի վելիկոռուսական կենդանի լեզվի բացատրական բառարանի չորս հատորակը, Դ. Դե-Վիվոյի կազմած Խալու-ռուսական բառարանը, Ն. Յազիկովի Ֆրանս-ռուսական բառարանը, Ի. Պավլովսկու Դերմանո-ռուսական բառարանը, Ա. Ալեքսանդրովի Անգլո-ռուսական բառարանը, «Կիևսկայա ստարինա» ժուռնալի խմբագրութեան կազմած ուկրաիներեն լեզվի բառարանը և այլն:

«Պտտանի» ձախ կողմում զրված էին ընթացիկ նյութերով թղթապանակները, թերթերի վերջին համարները և այն դրականությունը, որի վրա տվյալ պահին աշխատում էր Լենինը:

Վ. Ի. Լենինի աշխատասենյակում կար ընդամենը վեց դրապահարան: Դրանցից երեքը գտնվում էր դրասեղանի հետևի մասում: Մեկում զրված էին Մարքսի, էնգելսի, Լենինի և այլ մարքսիստ հեղինակների աշխատությունները, իսկ մնացած երկուսում՝ հանրագիտարանային բառարանների հիմնական հրատարակությունները, կոմունիստական շարժման և սովետական ռեսպուբլիկայի արտաքին քաղաքականության վերաբերյալ զրականությունը, ռազմական զրբեր ու քար-

սեղներ, ժուռնալներ և այլ նյութեր: Երկու պահարան դրված էր աջակողմյան պատի տակ: Դրանցից առաջինում գետնեղված էին ռուսական և օտարերկրյա կլասիկների գեղարվեստական գրականության երկերը, երկրորդում՝ ռուս ուսուցիչին գեմոկրատների երկերը: Առանձին պահարանում պահվում էր արտասահմանյան սովետակգվարդիական գրականությունը:

Գրադարանում բոլոր գրքերը դասավորված էին ըստ բաժինների, իսկ նրանց ներսում՝ հեղինակների ազգանունների այբուբենով, — մի խոսքով այնպես, որ հարմար լիներ գրանց օգտագործել, արագ գտնել այն, ինչ հարկավոր էր, չկորցնելով թանկարժեք ժամանակը:

Վ. Ի. Լենինի աշխատասենյակում կար շատ լեզուներով 2 հազար գիրք: Գրականության մի մասը, մոտ երեք հազար հատոր, պահվում էր նրա րնակարանի կողքի սենյակում:

Որոշ ժամանակ Լենինին ուղարկվող առանձին գրքեր պահվում էին Ն. Պ. Գորբունովի աշխատասենյակում գտնվող պահարանում:

Հիշում եմ, թե ինչպես մի անգամ Վլադիմիր Իլյիշը սրուշեց նայել Գորբունովի աշխատասենյակում գտնվող գրքերը և ինձ տարավ իր հետ: Մենք պետք է հարևան միջանցքի անցնեինք ժամապահի մոտով: Շտապելուց ես մոռացա վերցնել անցաթուղթը, և ժամապահը ինձ կանգնեցրեց:

— Հուսով եմ, որ դուք ինձ կհավատաք և թույլ կտաք ներան, — ասաց Վլադիմիր Իլյիշը:

Ժամապահը ինձ թույլ տվեց անցնել:

Գրադարանում սահմանված կարգը Վլադիմիր Իլյիշին դուր եկավ: Գրքերը, ժուռնալները, թերթերն ու մյուս նյութերը իրոք միշտ նրա ձեռքի տակ էին:

Այդ կասկածալիցութեամբ հիշում եմ... Վլադիմիր Իլյիչի մոտ հաճախ էր գալիս Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին։ Լենինը միշտ ինչ-որ անհամբերութեամբ էր սպասում նրան։ Եվ երբ Գորկին երևում էր, Վլադիմիր Իլյիչը գնում էր նրան ընդառաջ, նստեցնում կաշվե խոր բազկաթոռին, իր աթոռը մոտեցնում նրան, և սկսվում էր բարեկամական զրույցը։ Մենք՝ Ժողկոմսովետի աշխատակիցներս, որ աշխատում էինք նիստերի դահլիճում (առանձին աշխատասենյակներ չունեինք) լսում էինք Լենինի կենսախիսնդ ծիծաղը և Գորկու խուլ բասը։

Ալեքսեյ Մաքսիմովիչի հետ ես ծանոթացել էի դեռևս 1912 թվականին, երբ ապրում էի Իտալիայում, Կապրիում։ Այդ ժամանակից ի վեր մենք շատ ենք հանդիպել։ Նա ինձ է նվիրել իր մի բանի լուսանկարներն ու գրքերը՝ ջերմ ընծայագրերով։

Մի անգամ Վլադիմիր Իլյիչին այցելելուց հետո, Գորկին ինձ պատմեց.

— Երբ ես Լենինի մոտ էի, նա մեծ գոհունակութեամբ էր խոսում իր գրադարանի մասին և, ցույց տալով գրապահարանները, նկատում է. «Տեսնում եք, թե ինչպիսի կարգ կուայստեղ։ Դա գրադարանավարուհին է ինձ օգնել»։ Ի պատասխան, ես նրան ասացի. «Գիտեմ, ձեզ մոտ աշխատում է իմ ծանոթը՝ հայուհի Շուշանիկա Մանուչարյանցը»։

Հետագայում Վլադիմիր Իլյիչը ինձ թույլ տվեց ոչ միայն ջոկել «պաշտանի» վրա եղած գրքերը, այլև այն լրացնել տեղեկատու գրականութեամբ։ Առաջին անգամ խնդրեց հավաքել «Կենսորոնական վիճակագրական վարչության բյուլետենների» կոմպլեկտը։

Վիճակագրական նյութերին Վլադիմիր Իլյիչը շատ ուշա-



գրութիւնն էր դարձնում: Նա հասարակական-տնտեսական երևույթներին մոտենում էր խիստ գիտականորեն, ձգտելով դրանք ուսումնասիրել օբյեկտիվ տվյալներով, այդ երևույթները ճիշտ գնահատելու և առավել ճիշտ որոշում հանելու համար:

Այսպես, նա ինձ հանձնարարեց գտնել «Կոստրոմայի նահանգի վիճակագրական տեղեկութիւնների ժողովածուն», «Նյութեր աշխատանքի վիճակագրութեան վերաբերյալ» (պրակ 7, 1919), «1920 թ. օգոստոսի 28-ի բնակչութեան մարդահամարի նախնական արդշունքները», «Ռուսաստանի վիճակագրական տարեգիրք: 1915—1918», «Վիճակագրութեան լրաբեր» գրքերը և այլ տեղեկատու նյութեր:

Լենինը լայնորեն օգտւում էր արտասահմանում հրատարակվող վիճակագրական գրականութիւնից: Հիշում եմ, թե ինչպես նա ինձ խնդրեց վերադարձնել («պատանի» վրա) «Գերմանական վիճակագրութիւնը 1920 թվականին» և «Աշխարհագրական-վիճակագրական ատլաս»-ը (նույնպես գերմաներեն) տեղեկատուները, որոնք ես տեղափոխել էի ուրիշ տեղ:

Մշտապես լրացւում էր տեղեկատու գրականութեան շարքում եղած «Բանվորական և գյուղացիական կառավարութեան օրենսդրութիւնների և կարգադրութիւնների ժողովածու»-ի կոմպլեկտը:

Մի անգամ ես Վլադիմիր Իլյիչին առաջարկեցի ճարել հանրագիտարանային նոր բառարանը (Բրոկհաուզի և Էֆրոնի հրատարակութեամբ, 28 հատորով): Լենինը կանգնած էր գրասպասարանի մոտ և նայում էր նոր ստացած գրքերը: Գլուխը բարձրացնելով, նա հարցրեց.



— Իսկ դուք ստույգ գիտե՞ք, որ այդպիսի հրատարակություն կա:

— Իհարկե:

— Դե, այդ դեպքում ճարեք:

Ուզում եմ նորից ընդգծել, թե Լենինը ինչպիսի խստությամբ էր պահպանում գրքերն օգտագործելու սահմանված կարգը: Լայնորեն հայտնի է նրա երկտողը Ռումյանցևյան Թանգարանի գրադարանին (ալժմ Վ. Ի. Լենինի անվան ՍՍՌՄ պետական Լենինի շքանշանակիր գրադարան): «Եթե, ըստ կանոնի, տեղեկատու հրատարակությունները տուն չեն տրվում, ապա հնարավոր չէ՝ արդյոք ստանալ երեկոյան, գիշերը, երբ գրադարանը փակ է: Առավոտյան կվերադարձնեմ»<sup>1</sup>:

Մի անգամ ես Վլադիմիր Իլյիչին գրեցի, արդյոք չի կարելի պարզել, թե մյուս գրադարաններից ինչ գրքեր կան նրա մոտ: Եվ ստացա այսպիսի պատասխան. •

«Ինձ մոտ կան.

1) Թոմսոն — «Աշխատանքի կազմակերպումը»

և 2) Լաբրիոլ»<sup>2</sup>:

Վլադիմիր Իլյիչը խնամքով էր վերաբերվում նաև իր անձնական գրադարանում եղած գրքերին: Նրա խնդրանքով կազմվեցին Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի բրոշյուրները, Ն. Գ. Չերնիշևսկու և Ա. Ի. Գերցենի երկերը, ինչպես նաև Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի ռու-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր հատ. 35, էջ 491 (բոլոր մեջբերումները վերցված են չորրորդ հրատարակությունից):

<sup>2</sup> Լենինյան ժողովածու XXXV, էջ 356:

սահան երկու հրատարակութիւնները: Այդ գրքերի թարգմանութիւնները, որ կատարել էին Գ. Վ. Պլեխանովը (ժնկյան հրատարակութիւն, 1905) և Պ. Օսովսկին (Վ. Վ. Վորովըսկին), չեն ինքն համարում էր լավագոյնը:

1920 թվականի գեղեցիկագոյնի վերջերին ուկրաինացի աշխատողներից մեկը Վ. Ի. Լենինին նվիրեց Վ. Դուրբովսկու կազմած ուկրաիններեն լեզվի բառարանի չորս հատորակը: Լենինը ուշադրութեամբ նայեց գրքերը, դրանցից մեկի կազմի վրա դրեց սպիտակ էջերը և նույնպէս խնդրեց կազմել տալ:

Վլադիմիր Իլյիչը հաճախ էր վրդովում գրքերի վատ կազմելու պատճառով:

— Մալում ես թե, ցրիվ է գալիս, — ասում էր նա:

Բայց երբ ստացվում էին լավ հրատարակված գրքեր, նա անկեղծորեն ուրախանում էր դրանցով:

Խիստ զբաղված լինելով հանդերձ, Լենինը խորամուխ էր լինում նաև գրադարանային գործի մանրունքներին:

Հիշում եմ այսպիսի մի դեպք, կապված դրասկապարաններում գրականութեան տարբեր բաժինների միջև միջնորդների դնելու հետ: Դրա համար ես օգտագործում էի քարտեր: Բայց Վլադիմիր Իլյիչը ինձ ասաց, թե քարտերը հարմար չեն, բոլոր հետև հեշտութեամբ ընկնում են, պետք է ինչ-որ ուրիշ բան անել: Նա իսկույն լեթթ թղթից պատրաստեց իր նմուշը և այն ցույց տվեց ինձ:

— Հասկացա՞ք, — հարցրեց նա:

Ես այնքան էլ լավ չէի հասկացել, բայց վերանայեցի չհամարձակվեցի և պատասխանեցի:

— Այո:

Հաջորդ օրը Վլադիմիր Իլյիչին խոստովանեցի, որ երեկ իրեն այնքան էլ լավ չհասկացա: Իսկ երբ նա բացատրեց, թե բանն ինչումն է, խնդրեցի թույլ տալ մտածելու ինչ որ մեկ ուրիշ բան, որովհետև նրա օրինակը ինձ այնքան էլ հարմար չթվաց: Նա շառարկեց: Շուտով իմ պատվերով գրքերի համար միջնորդներն ստացվեցին Ռիդայից: Ես դրանք արագորեն տեղադրեցի, մակագրություններ արեցի: Աշխատասենյակ է մտնում Լենինը, նայում գրասլահարաններին և զարմացած հարցնում.

— Այս ի՞նչ է:

— Միջնորդներ, — պատասխանում եմ ես:

— Երևի Գերմանիայի՞ց է: Խորամանկ գերմանացիներ:

— Ո՛չ, Ռիդայից է: Ես մեր լիազոր-ներկայացուցչություն ուղարկեցի նմուշը, և Լատվիայում այն պատրաստեցին:

Վլադիմիր Իլյիչը ծիծաղեց և սասաց.

— Ես չգիտեի, որ դուք գերմանացիներից խորամանկ եր:

Նա բնակարան գնաց շատ լավ տրամադրությամբ, և նրա ծիծաղը երկար ժամանակ հնչում էր միջանցքում: Դրանից հետո աշխատասենյակ մտավ ժամասլահներից մի ընկեր և հետաքրքրվեց, թե ինչով հմ ես այդպես ծիծաղեցրել Լենինին...

Ինչպես արդեն նշեցի, Վլադիմիր Իլյիչը առաջարկեց հետևել այն գրքերի վերադարձնելուն գրադարան, որոնք ինքը ստան էր տանում: Եթե ընկերներից որեէ մեկը աշխատասենյակում նրանից գիրք էր խնդրում, նա միշտ առաջարկում էր ինձ համար երկտող թողնել, ընդ որում հայտարարելով.

— Իմ գրադարանավարուհին խիստ է:

1922 թվականի մայիսի 18-ին էսենների դատավարության

դծով հանձնաժողովին պետք եկան Վլադիմիր Իլյիչի գրա-  
դարանից մի բանի սպիտակգլարդիական գրքեր, որոնք  
հրատարակվել էին արտասահմանում: Դրանց թվում Դենի-  
կինի «Ռուսական խռովության ուրվագծեր»-ը և Վիշնյակի  
«Սև տարի»-ն: Այդ գրքերը ես պատրաստեցի և առանձնաց-  
րի մինչև Վ. Ի. Լենինի գալը: Իսկ երբ նա եկավ, հաղորդեցի  
հանձնաժողովի խնդրանքը, բայց հիշեցրի, որ Դենիկինի  
«Ռուսական խռովության ուրվագծեր» գրքի վրա կան ի՞նչ  
Լենինի նշումները: Վլադիմիր Իլյիչն ասաց.

— Կարելի է: Ոչինչ: Ձէ որ նրանք վերադարձնելու են:

Ահա մի փաստ էս: Աշխատասենյակի դրասեղանին դրված  
էր «Ռուսաստանի երկաթուղիները» տեղեկատուն, որից Վլա-  
դիմիր Իլյիչը մշտապես օգտվում էր: Նա այնտեղ տարբեր  
գույնի՝ կարմիր, կապույտ, մանիշակագույն և սև մատիտնե-  
րով դրառումներ, ընդգծումներ և նշումներ էր արել: Տեղե-  
կատուն մեծ արժեք էր ներկայացնում: Մի անգամ այն ան-  
հետացավ: Լենինը շատ էր վշտացած և Լ. Ա. Ֆոտիևային  
խնդրեց գտնել տեղեկատուն, իսկ իր նշումներով օրինակի  
փոխարեն վերցնողին տալ ուրիշը: Լիդիա Ալեքսանդրովնան  
հարցրեց մեզ՝ բուխրիս և նրանց, ովքեր լինում էին ժողովո-  
ւովնալում: Մենք բոլորս շատ հուզվել էինք: Բայց տեղեկա-  
տուն այդպես էլ չգտնվեց: Ստանալով մեկ ուրիշ օրինակ,  
Լենինը վրան գրեց. «Լենինի օրինակը» — և մեզ ղգուշացրեց,  
որ իրեն հարկավոր գրքերը չթողնենք աշխատասենյակում,  
բանի որ սրուշ ընկերներ մեծ հանցանք չեն համարում իրենց  
հետաքրքրող գրքերը վեցնելը:

Երբ սկսեց մեծ թվով լույս տեսնել հաշվետվական, տեխ-  
նիկական և այլ գրականություն, որպիսիք Լենինը ստանում

էր գրապալատից, ես առաջարկեցի բոլոր ավելորդ գրքերը սլարքերաբար «վերացնել», այսինքն՝ դրանք հանձնել ուրիշ գրադարանների: Վլադիմիր Իլյիշը ծիծաղեց.

— Այո, դուք լավ եք մտածել, սկսեք է «վերացնել», թե չէ գրքերի հետևում դուք արդեն չեք երևում:

Նա ինձ հետ համաձայնեց, բայց խնդրեց խոսել նադեժդա Կոնստանտինովնայի հետ՝ նրան անհրաժեշտ գրականություն վերաբերյալ և Մարիա Իլյինիչնայի հետ, որը, կարծեմ, ինչպես նկատեց Վլադիմիր Իլյիշը, «Գորկայի» սովխոզի համար գլուղատնտեսական գրականություն է հավաքում:

Իմ հարցմանը Ն. Կ. Կրուպսկայան ինձ պատասխանեց հետևյալ երկտողով.

«... Գրքերից ինձ հարկավոր են մանկավարժությունը (նոր լույս տեսած բոլոր գրքերը լրիվ), հանրամատչելի գրականությունը, աշխատանքի կազմակերպումը, այդ հարցերին վերաբերող օտարերկրյա ամբողջ գրականությունը, առանձնապես ժուռնալայինը: Հարկավոր է նաև հակակրոնական պրոպագանդայի վերաբերյալ գրականությունը... Ինչ վերաբերում է կրկնօրինակներին, ապա եղած կրկնօրինակները կարելի է հանձնել 1-ին տան ընթերցարանին»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Նկատի է ունեցվում Սովետների 1-ին տունը, ինչպես այն ժամանակ անվանվում էր «Նացիոնալ» հյուրանոց:



## ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ ԵՐԿՏՈՂԵՐԸ

**Բ**ացի բանավոր հանձնարարություններից, Վ. Ի. Լենինից ես ստանում էի նաև բաղմամբիվ գրավոր հանձնարարություններ: Պահպանվել են մի քանի տասնյակ այդպիսի երկ-սուղեր: Դրանցից յուրաքանչյուրն անձամբ ինձ համար մեծ արժեք է ներկայացնում, որովհետև դրանց հետ են կապված 20-ական թվականների վերաբերյալ Վլադիմիր Իլյիչի մասին իմ հիշողությունները: Լենինի երկտողերը՝ իրեն անհրա-ժեշտ գրականության նշումներով, դեռևս սպասում են իրենց հնաազոտողին: Դրանք կօգնեն առավել լրիվ ցույց տալ Վլա-դիմիր Իլյիչին՝ որպես ընթերցողի: Այդ թեման առաջժամ քիչ է ուսումնասիրված և, ըստ էության, չի մշակված: Սույն բո-շյուրում ես կցանկանայի համառոտակի կանոգ առնել Լենինի միայն առանձին երկտողերի վրա:

Դժվար է ցույց տալ գիտություն, կուլտուրայի, հասարա-կական-բաղադրական կյանքի որևէ բնագավառ, որով հետա-բրբրված չլինել Վլադիմիր Իլյիչը: Միանգամայն հասկանալի է, որ դա իր արտացոլումն է գտել նաև նրա կրճատ ու օպե-րատիվ երկտողերում:

Առաջին Երկտողում, որ ես Վլադիմիր Իլյիչից ստացա 1920 թվականի մարտին կամ ապրիլին, ասվում էր.

«Գ ր ա դ ա ր ա ն ա Վ ա ր ու ի ու մ

Զի՞ կարելի արդյոք

1) յուրաքանչյուր ժողկոմատի բոլոր հրատարակությունները հավաքել առանձին թղթապանակում կամ ըստ գրադարակների:

2) նույն ձևով. ՌԿՊ Կենտկոմի և տեղական պարտկոմիտեների հրատարակությունները»<sup>1</sup>:

Այդ հանձնարարությունը ես կատարեցի սխտեմատիկորեն՝ գրադարանում տարած իմ ամբողջ աշխատանքի ընթացքում:

Շուտով ես համոզվեցի, որ Վլադիմիր Իլյիչը շատ ուշադիրությամբ հետևում է պարբերական գրականությանը, մըշտապես նրանից օգտվում է, նշում է թերթերում, ժուռնալներում, բյուլետեններում և ժողովածուներում հրապարակված իրեն անհրաժեշտ նյութերը:

Մի անգամ Վ. Ա. Ֆոտիևան ինձ հանձնեց Լենինի հետևյալ առաջադրանքը. «Հավաքել «Եժենեդելնիկ «Պրավդի», «Լեֆոկ բյուլետենների», «Կոմինտերնի բյուլետենների», «Կոմունիստականների» կոմպլեկտները և դրանք պահել կամ առանձին թղթապանակներում, կամ պատվիրել ինքնակարիչներ կամ ինքնակազմիչներ, այդ կարգի ինչ-որ բան: Սովետական իշխանության մասին տեղական հրատարակությունները պահել հատուկ տեղ և մոտ: Հավաքել նաև «Ադիտացիա-

<sup>1</sup> «Իշխություններ Վ. Ի. Լենինի մասին», մ. 2, Հայպետհրատ, 1958, էջ 727:

19202.  
Հայկ. խոսք

Եւստիօքիան

Հեղինակ

Ստորագրած եւ ստորագրող  
Հայկ. խոսք  
Եւստիօքիան  
ՈՍ ՈՍ ԿԱՆ.

2) Մոֆ : ստորագրած է՛Կ ԲԿԿ  
և մեծագույն ստորագրած ?

Լենինի առաջին երկուորդ զբաղաբանավարտում, գրված  
1920 թվականի զարեանը:

յի ու պրոպագանդայի լրաբերը» և ՌԿ(բ)Պ Կենտկոմի հրա-  
տարակուժյունները»:

Մի անգամ ինչ-որ մեկը Լենինի համար Պետրոգրադից  
բերեց երկու ժուռնալ. «Էկոնոմիստ» № 3 և «Նովայա Ռոսսիա»  
№ 2: Դա պարսիայի Կենտկոմի հերթական պլենումի աշխա-  
տանքների ժամանակ էր: Նիսան սկսելուց առաջ Վլադիմիր  
Իլիչը, տեսնելով ինձ, խնդրեց անցնել իր մոտ աշխատասե-  
յակ: Ես անհանգստացա և մտածեցի, թե ինչ որ բան է պա-

տահել: Եկա ու սպասում եմ: Մտալ վլադիմիր Իլչիշը և, ցույց տալով ինձ ժուռնալները, ասաց.

— Այ սա ես չեմ ստացել:

Ես շատ շփոթվեցի և ասացի, թե մեղավոր եմ, որովհետև չեմ հետևել դրանց ստացմանը: Վլադիմիր Իլչիշը պատասխանեց.

— Ոչ թե դուք եք մեղավոր, այլ նա, ով պետք է ժամանակին ինձ պարբերական դրականություն ուղարկի:

Հայտնի է, թե Հենինը ինչպիսի ուշադրությամբ էր վերաբերվում գիտական կոմունիզմի հիմնադիրների աշխատություններին: Նա, մասնավորապես, հանգամանորեն ուսումնասիրում էր Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի նամակները:

1920 թվականի հուլիսին Վ. Ի. Հենինը խնդրեց Հ. Կուզելմանին գրած Կ. Մարքսի նամակները: Ես այդ գիրքը գտա, բայց Կ. Կուզելու առաջաբանով: Վլադիմիր Իլչիշն այդ կապակցությամբ ինձ գրեց.

«Եղել է

մի հրատարակություն ևս,

իմ առաջաբա-

նով»:

Որոշ որոնումներից հետո ևս ճարեցի այն, ինչ պահանջում էր Վլադիմիր Իլչիշը: Դա 1907 թվականին հրատարակված «Կ. Մարքսը: Նամակներ Հ. Կուզելմանին» գիրքն էր: Այն գերմաներենից թարգմանել էր Հենինի քույրը՝ Մարիա Իլչինիչնան: Գիրքը լույս էր տեսել Պետերբուրգում Վ. Ի. Հենինի խմբագրությամբ ու առաջաբանով:

Վլադիմիր Իլչիշին հետաքրքրում էին Մարքսի գրած նա-

մակաները նաև քաղաքական այլ գործիչներին, հատկապես ռուս գործիչներին: Կ. Մարքսի «Փիլիսոփայության ազգաստույթունը» գրքի շապկի վրա Վ. Ի. Լենինը նշել է «Լենինի օրին[ակը]: NB կա Կ [արլ] Մ [արքսի] նոր ն[ամա]կը Անենկովին շՅ. XII. 1846»:

Լենինից ես ստանում եմ ամենատարբեր պրոբլեմներին վերաբերող գրքերի պահանջներ: Բերեմ նրա մի քանի երկտողերը, որոնք ցույց են տալիս, թե դրանք գրականության ինչպիսի լայն դիապազոն են ընդգրկում:

1920 թվականի նոյեմբերի 10-ին Լենինը գրում է.

«Արդյոք չի կարելի ինձ համար ճարել (մի շաբաթով ընթերցելու համար)

Գոլովաչև-Պանաևի «Հիշողու-

թյուններ» գիրքը: ՍՊՔ. 1890»:

Նույն թվականի նոյեմբերի 30-ին՝  
«Խնդրում եմ ինձ համար ճարել  
Անտոնիո

Լաբրիոլի

1) «Պատ[մական] մատերիալիզմ»-ը:

2) Փիլիսոփայության վերաբերյալ  
ռուսերեն և

ֆրանսերեն»

Ահա ևս երեք երկտող.

«Խնդրում եմ ինձ համար ճարել հետևյալ գիրքը.



10/11 1920 Բահադուր Քարա

Քարա-ն Զաքարյան (ապրիլի  
և յոկո, ապրիլի) Կարա:

Զոհարեա-Պարա: "Ստան-  
Ստան" 1890.

Վ. Ի. Լենինի 1920 թվականի նոյեմբերի 10-ի երկտողը:

«Պարզեցման սխտեմը Մետաղական»

արդյունաբերության մեջ: Հոլցմանի նախաբանով:

Մետաղադործների կենտկոմի հրատարակչ. 1919. 87

էջ:

«Խնդրում եմ ինձ համար ճարել Հեղեղի

ռուսական թարգմանությունները

1) Լոգիկան

2) Ֆենոմենոլոգիան:

Պատ(մա) — Փիլիսոփայական ընկերության

հրատարակչություն, Ռադլովի խմբագր.:

«Խնդրում եմ ինձ համար ճարել

Դատիկի Համաշխարհային պատերազմը և

Ռուսաստանի մուսուլմանների պատ[մական]

խնդիրները: 1916» գիրքը:

Գառիկի գիրքը գտնել շահադուլեց: Մեծ դառնությամբ այդ մասին ես հայտնեցի Վլադիմիր Իլյիչին: Նա հանդիստ ասաց.

— Դե ինչ արած, ոչինչ անել չես կարող:

Երբեմն կենինը հաղորդում էր գրքերի ոչ ճիշտ անունները: Այսպես, օրինակ, նկատի ունենալով «Յու. Լամոնոսովի հիշողությունները 1917 թվականի մարտյան ռեոլյուցիայի մասին» գիրքը, նա գրում է.

«Խնդրում եմ ինձ համար ճարել Լ ո մ ո ն ո ս ո վ ի «Հիշողությունների փետրվարյան ռեոլյուցիայի մասին» գիրքը:

(Ասում են, Գանեցկին այն ինձ ուղարկել է Ռեզայից)»<sup>1</sup>:

1920 թվականի սեպտեմբերին ես ստացա այսպիսի բովանդակությամբ մի Երկտող:

«Խնդրում եմ ինձ համար ճարել Ն. Ռոմկովի «1917. X. ռեոլյուցիայի մասին» (եւ ունեի) կամ «քնույթի մասին և այլն» գիրքը (1918 թվականի, հաստ գիրք է):

22/IX կենին»<sup>2</sup>,

և ուսքը «Հոկտեմբերյան հեղաշրջումը» ժողովածուի մասին էր, որը կազմել էր Ա. Պոպովը, խմբագրել և «Ռեոլյուցիայի բնթացքը» առաջաբան հոդվածը գրել՝ Ն. Ա. Ռոմկովը, 1918 թվականի հրատարակություն:

Յանկանալով ստանալ Առնոլդի Քոչերիի «Արդյունաբերական հեղաշրջումը Անդրիայում XVIII հարյուրամյակին» գիրքը, կենինը գրել էր.

<sup>1</sup> Կենինյան ժողովածու XXIII, էջ 315:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 216:

«Խնդրում եմ ինձ համար ճարել հետևյալ գիրքը (ռուսերեն) Թոյնբի. «Անգլիայի արդյունաբերական] կյանքը»<sup>1</sup>:

Վ. Ի. Լենինը գիտեր մի քանի օտար լեզու: Նա կատարելապես տիրապետում էր գերմաներեն, ֆրանսերեն և անգլիերեն լեզուներին, փոքր ինչ վատ գիտեր իտալերեն, հոյակապ գիտեր լատիներեն և հունարեն, կարգում և թարգմանում էր լեհական և չեխական գրքեր, ուսումնասիրում էր բուլղարերենը և շվեդերենը: Չեխերենի մասին, օրինակ, նա գրել է. «Հետաքրքրական է, շատ մոտ է լեհերենին, բազմաթիվ հին ռուսերեն բառեր ունի»<sup>2</sup>:

Լենինը բառարաններ շատ էր օգտագործում և դրանց շատ հրատարակություններն ուներ:

1920 թվականի սեպտեմբերի 14-ին նա գրում է.

«Խնդրում եմ ինձ համար

ճարել

Բուլղարա-

ռուսական

բառարանը»:

Բառարանը ես չկարողացա գտնել. բայց ճարեցի պրոֆեսոր Վ. Ն. Շչեպկինի բուլղարական լեզվի դասագիրքը: Երբ այդ մասին հաղորդեցի Վլադիմիր Իլյիչին, նա ասաց.

— Առայժմ թող դասագիրքը մնա, իսկ բառարանը կարելի է չփնտրել: Եթե այն պետք գա, ես կհայտնեմ:

Ինչպես հետագայում պարզվեց, Վլադիմիր-Իլյիչը Բուլ-

---

<sup>1</sup> Լենինյան ժողովածու, XXIII, էջ 316:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 37, էջ 313:

դարա-ոռւսական բառարանը խնդրել էր հետևյալ հանդամանքների կասկածաբանութիւնը:

1920 թվականի օգոստոսին նա իր աշխատասենյակում գրուցում է բուլղարական և միջազգային բանվորական շարժման նշանավոր գործիչ խորհուրդի Կաբակչիևի հետ, որը Մոսկվա էր եկել Կոմունիստական Ինտերնացիոնալի II կոնգրեսին մասնակցելու համար: Կաբակչիևը Հենինին ասում է, որ Բուլղարիայի կոմունիստները աշխատավորութեան մեջ բազմական ադիտացիա են տանում ոչ միայն ժողովների, դեմոնստրացիաների և թերթերի միջոցով, այլև մի շարք թարգմանական ու օրիգինալ բրոշյուրների և գրքերի հրատարակման միջոցով, որոնք անց են կացնում Հոկտեմբերյան ռուլյուցիայի սկզբունքներն ու լոզունգները: Վլադիմիր Իլյիչը իսկույն ևեթ հետաքրքրվեց այդ մասսայական գրականութեամբ և խնդրեց իրեն ուղարկել Բուլղարիայում հրատարակվող բոլշևիկյան նոր բրոշյուրները: Այդ խնդրանքը կատարվեց: Մի քանի օրից հետո ընկ. Կաբակչիևին նորից հրավիրեցին Կրեմլ:

«...Հենինը ինձ դիմավորեց,— այդ մասին հիշում է խորհուրդի Կաբակչիևը,— ուրախ ու ժպտեցիս:

Նրա առջև սեղանին դրված էր այն բրոշյուրների ու գրքերի կույտը, որոնք ես էի նրան ուղարկել:

— Այո, դուք հասցրել եք կարճ ժամանակում ստեղծել հիանալի ագիտացիոն գրականութիւն...

Եվ նա սկսեց թերթել օրիգինալ բրոշյուրներից մի քանիսը ու ինձ հարցնել դրանց բովանդակութեան մասին...

— Այսպիսի գրքուկների հրատարակումն ու մասսայական, տարածումը ներկա պահին կոմունիստների կարևորա-

Прощу мене  
поуказати  
Словом  
Филарето-  
русским

IX - 1920

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ 1920 թվականի սեպտեմբերի 14-ի երկտողը:

գույն խնդիրներից մեկն է, — կրկնում էր Լենինը, և հետաքրքրվում էր, թե ինչ հարցեր են շոշափվում ու դարձացվում մեր օրիգինալ բրոշյուրներում:

— Իսկ դժվար է բուլղարերեն սովորելը, — հանկարծ հարցրեց Լենինը:

Նա պատասխանեց, որ դա ամենևին էլ դժվար չէ, որովհետև ուսերենն ու բուլղարերենը ազգակից լեզուներ են, եր-



կուսի հիմքում էլ ընկած է հին սլավոնական գրական լե-  
զուին: Այդ ժամանակ լենինն ինձ խնդրեց, եթե հնարավոր է,  
որքան կարելի է շուտ, իր համար ճարել Բուլղարա-ռուսական  
բառարանը:

Ես հաճույքով խոստացա, բայց ինձ հաջողվեց խոստումս  
կատարել միայն շատ ժամանակ անց... Մի քանի տարի  
առաջ «Պրավդա»-ում հրատարակվեց Վլադիմիր Իլյիչի կարճ  
նամակը իր գրադարանավարուհուն, որտեղ լենինը խնդրում  
է ճարել Բուլղարա-ռուսական բառարան: Հավանաբար լե-  
նինը անհամբեր սպասել է այն հնարավորությունը, որ Բուլ-  
ղարա-ռուսական բառարանի օգնությունը անձամբ նայի իմ  
սոված բրոշյուրներն ու գրքերը, և գուցե նաև հետևի մեր մի  
քանի այլ հրատարակություններին...<sup>1</sup>:

1921 թվականի գարնանը Գեորգի Դիմիտրովը բուլղարա-  
կան կոմունիստական պարտիայի Կենտկոմի անունից լենի-  
նին նվիրեց Բուլղարա-ֆրանսիական և Ֆրանս-բուլղարական  
բառարանի առաջին մասը՝ ընծայագրով: Այդ բառարանն այ-  
ժեմ էլ գտնվում է լենինի կրեմլյան աշխատասենյակի  
«պատանի» վրա:

1920 թվականի նոյեմբերի 10-ին ես Վլադիմիր Իլյիչից  
ստացա հետևյալ երկտողը.

«Խնդրում եմ ինձ համար ճարել և

կազմել

Դե-Վիլովյի Իտալո-ռուսական բառարանը: Օգեսա, 1894»:

---

<sup>1</sup> «Բուլղարական ընկերների հիշողությունները լենինի մասին», Պատ-  
քաղհրատ, Մ., 1958, էջ 43—49 (ռուսերեն):

Երբ այդ հանձնարարությունը կատարվեց և ես ասացի, որ Խտալո-ռուսական բառարանը գտնվում է «պատտանի» վրա, Վլադիմիր Իլյիչը ժպտաց և զարմացած հարցրեց.

— Արդեն կատարված է: Այդպես արա՞դ:

Հետո սովորականի պես շնորհակալություն հայտնեց.

— Մերսի, մերսի:— Եվ անմիջապես.— Ամուսոս, որ ժամանակը չի բավարարում իտալերեն կարդալ:

Վլադիմիր Իլյիչը ստանում և կանոնավոր կերպով նայում էր Խտալական սոցիալիստական պարտիայի օրդան «Ավանտի» («Հառաջ») օրաթերթը: Բայց նա չէր ուզում սահմանափակվել միայն դրանով:

Այսպիսով, Լենինը հետաքրքրվում էր ոչ միայն սովետական, այլև այն հրատարակություններով, ինչ լույս էր տեսնում արտասահմանում: Նա ուշադիր աչքի էր անցկացնում արտասահմանից ստացվող գրքերի ու ժուռնալների ցուցակը և դրանք վերադարձնում էր իր նշումներով ու կարգադրություններով, որոնցով խնդրում էր ճարել նշված գրքերը: Այսպես, 1921 թվականի փետրվարի 6-ին Լենինը այդպիսի մի ցուցակի վրա գրել էր.

«Խնդրում եմ ինձ վերադարձնել այս և ուղարկել նշված 2 գրքերը»<sup>1</sup>:

Երեք-չորս օրից հետո ես Վլադիմիր Իլյիչից ստացա գրքերի ու բրոշյուրների հերթական հայտը: Ահա այդ փաստաթուղթը.

---

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXXVI, էջ 189:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՐԲՆՐԻ ՈՒ ԺՈՒՌՆԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ  
ՎՐԱ ԱՐՎԱԾ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՇՈՒՄՆԵՐԸ՝

1921 թվականի փետրվարի 9-ից ոչ շուտ

հնդրում եւ ուղարկել ընդգծվածները և այս ցուցակը վե-  
րադարձնել ինձ:

Հենին

Արտասահմանից ստացվող գրքերի ու ժուռնալների ցուցակ\*

| Հեղուկ                      | Հեղինակը                         | Անունը                                               | Հրատարակ-<br>չությունը    | Հրատարակված<br>ամիսը | Տպարանի<br>նախնիքը | Գրանակը |
|-----------------------------|----------------------------------|------------------------------------------------------|---------------------------|----------------------|--------------------|---------|
| Գեղմա-<br>նեհեհ<br>83       | <u>Frans Mehring</u>             | <u>Freiligrath u. Marx in<br/>ihrem Briefwechsel</u> | <u>Dietz</u>              | 1 20                 | <u>Stuttgart</u>   | 1       |
| 943                         | <u>Fr. Engels u.<br/>K. Marx</u> | <u>Reichsgründung u.<br/>Kommune</u>                 | <u>P. Singer</u>          | .                    | <u>Berlin</u>      | 1       |
| 944                         | <u>Karl Marx</u>                 | <u>Die Klassenkämpfe in<br/>Frankreich</u>           | .                         | .                    | .                  | 1       |
| Անգլի-<br>բեհ<br>397<br>398 | <u>H. N. Brails-<br/>ford</u>    | <u>The War of Steel<br/>and Gold</u>                 | <u>Bell and Sons</u>      | 1918                 | <u>London</u>      | 1       |
| 335,5                       | <u>Z. Kahan-<br/>Coates</u>      | <u>The Life and Work<br/>of Friedrich Engels</u>     | <u>The Com.<br/>Party</u> | 1920                 | <u>London</u>      | 1       |

<sup>1</sup> Հենինյան ժողովածու XXXV, էջ 214:

\* Թարգմանություն.

Ֆրանց Մերինգ «Ֆրայլիգրատը և Մարքսը իրենց նախակազրույթուն-  
ներում»:

Ֆ. Լեդելս և Կ. Մարքս «Կապիտալիստական հիմնադրումը և կոմունան»:

Ահա արտասահմանից ստացվող գրքերի ու ժուռնալների  
ցուցակի վրա արված Վլադիմիր Իլյիչի մի կարգադրությու-  
նն է.

«Խնդրում եմ ինձ ուղարկել կապույտ մատիտով ընդգրծ-  
վածը:

Հենին»<sup>1</sup>:

4/ V 1921

1921 թվականի հոկտեմբերի 25-ին Հենինը գրել է.  
«Նաժիվինի

դիրքը

խնդրում եմ վերադարձնել

Սոց [իալիստական] ակադեմիա],

իսկ ինձ համար գտնել

նույն հեղինակի

Nachiv in

«Tolstois Denk —

würdigkeiten»-ում տպված հոդվածը:

«Graphischer Kunstverlag,

Wien» հրատարակություն:

Մեր հարցումին ԺՏԳԽ-ի (Արտասահմանյան գիտության և  
տեխնիկայի բյուրո) գիտա-տեխնիկական բաժնի Բեռլինի

Կարլ Մորբու Վիսակարգային պայքարը Ֆրանսիայում»:

Գ. Ն. Բրայլսֆորդ «Պողպատի և ոսկու պատերազմը»:

Զ. Կազան-Կոուստ «Ֆրիդրիխ Էնգելսի կյանքն ու գործունեությունը»:

<sup>1</sup> Հենինյան ժողովածու XXXVI, էջ 229.





«Տոլստոյի օրագիրը»

ինձ հարկավոր չէ.

ինձ հարկավոր են նա ժիվի և ի հիշողությունները Տոլստոյի մասին, որը լույս է տեսել գերմաներեն:

«Tolstois Denkwürdigkeiten»-ում<sup>1</sup>:

Ավելի ուշ Վլադիմիր Իլյիչից ստացա հետևյալ հանձնարարությունը.

«Խնդրում եմ ինձ համար գտնել հետևյալ գերմաներեն գիրքը.

Օտտո Բաուեր. «Տնտեսական քաղաքականության նոր կուրսը Սովետական Ռուսաստանում»:

25/IV լենին<sup>2</sup>:

Վլադիմիր Իլյիչի խնդրանքով դուրս էին գրվել նաև Հընդկաստանի վերաբերյալ գրքեր:

1921 թվականի հուլիսին նա առաջադրանք է տալիս ընտրել «Ռուդե սլավո» («Կարմիր օրենք») թերթի կոմպլեկտը, որը վերաբերվում է Չեխոսլովակիայի կոմսլարտիայի 1921 թվականի մայիսյան համագումարին: Նույնը նա խնդրում է նաև գերմանական «Յորլերտս» («Հառաջ») թերթի վերաբերյալ, որը լույս էր տեսնում Ռայխենբերգում՝ Չեխոսլովակիա<sup>3</sup>:

Վլադիմիր Իլյիչը, իբրև շատ կազմակերպված ու կարգապահ մարդ, տանել չէր կարողանում թափթիվածությունը,

<sup>1</sup> «Հիշողություններ Վ. Ի. լենինի մասին», մ. 2, 731:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 730:

<sup>3</sup> Տե՛ս լենինյան ժողովածու XXXVI, էջ 288:

քաշքշուկը: Նա աշխատում էր, որ գրականությունը ևս միշտ ժամանակին հասնի իրեն:

Մի անգամ ես Պետհրատից Վ. Ի. Լենինին ուղարկեցի սպիտակ էմիգրանտների կողմից արտասահմանում հրատարակվող «Սմենա վեխ» ժուռնալի 8-րդ և 9-րդ համարները: Այդ ժուռնալը մենք ստանում էինք համապատասխան օրդանների միջոցով, որոնք ենթարկվում էին ԳՊՈԽ-ի նախագահի տեղակալ Ի. Ս. Ունշիխտին: Ժողկոմսովետի նիստերից մեկի ժամանակ Ունշիխտը Լենինին է հանձնում ժուռնալի 11-րդ համարը: Մի քանի օր անց Լենինը ստանում է իմ ուղարկած «Սմենա վեխ»-ի 8-րդ և 9-րդ համարները: Նման դանդաղկոտությունը նրան դաշրացնում է, և Պետհրատի իմ գրության վրա նա գրում է.

«Ընկ. Մանուշարյանցին: Նա արդեն մի շաբաթ առաջ Ունշիխտից ստացել եմ «Սմենա վեխ»-ի № 11-ը:

Հավանաբար, Պետհրատը, եթե 8 և 9 համարները նրանից են, հիմար քաշքշուկի օրինակ է:

Ստուգեք, թե նրանք ինչպես են ստանում. ո՞վ է այդ գործը տանում նրանց մոտ: Պետք է նրան վճնդել:

Իմ անունից գրեք Կամենևին, Զինովևին և Ունշիխտին.

Թե ինչպես են (փոստո՞ւլ, հասցեո՞ւլ, հատուկ անձի միջոցո՞ւլ, որտե՞ղ է այդ անձը) նրանք ստանում «Սմենա վեխ»-ին և նման բաները:

Նա պետք է ստանամ ժամանակին:

24/1 [ 1922 ] Լենին»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXXVI, էջ 406:

լենինի դիտողությունը հաշվի առնվեց և հատուկ գրա-  
կանության առաքումը նրան կանոնավորվեց։

1922 թվականի հոկտեմբերի 2-ին Գորկայից վերադառ-  
նալու<sup>1</sup>ն պես լենինը հիվանդությունից հետո նորից ձեռնա-  
մուխ եղավ աշխատանքի։ Մեկ անգամ նա աշխատասենյա-  
նից մտավ Ժողկոմսոցետի նիստերի դահլիճ և, ինձ դիմելով  
«խնդրում եմ գտնել այս ժուռնալները» խոսքերով, հանձնեց  
այսպիսի մի երկտող։

«Սոց[իալիստական] վես[տնիկի] № 20-ը»<sup>2</sup>

Մարտովի

«Մեր պլատֆորմը»

և Գուրեիչի<sup>3</sup>

«Վոլյա Ռուսիի» № 3-ը»<sup>3</sup>։

Արտասահմանյան գրականությունը պահպանվում էր  
լենինի աշխատասենյակում առանձին պահպանում։ Սա  
քնացի այնտեղ։ Մինչ ես ժուռնալներն էի փնտրում, Վլադի-  
միր Իլյիչը ձեռքին թղթեր ու զրքեր բռնած աշխատասենյա-  
նում զանդադրեց ետ ու առաջ էր քայլում, կենտրոնացած  
ինչ-որ բանի մասին մտածելով։ Նա ինձ հիշեցրեց, որ «Սո-  
ցիալիստիչեսկի վեստնիկ» ժուռնալը փոքր չափսի է։

1 «Սոցիալիստիչեսկի վեստնիկ» — ՌՍԳՐՊ արտասահմանյան պատգա-  
մավորության օրգան։ Լույս էր տեսնում ամիսը երկու անգամ Ռ. Աբրա-  
մովիչի, Ֆ. Դանի և Լ. Մարտովի սերտ մասնակցությամբ։

2 «Վոլյա Ռուսիի» (Քաղաքականության և կուլտուրայի ժուռնալ, Պրա-  
գա, 1922, № 3)։ Վ. Գուրեիչի «Իշխանության պրոբլեմները» նոր Ռուսաս-  
տանում հոդվածը։

3 «Լենինի ինստիտուտի գրառումները», III, 1928, էջ 97։ (ռուսերեն)։

Մարտովի «Մեր պլատֆորմը» հոգովածը ոչ թե ժուռնալի 20 համարում էր, ինչպես նշված էր երկտողում, այլ 19-րդ նրբ ևս այդ մասին հաղորդեցի Լենինին, նա ասաց.

— Կարող է պատահել, ես սխալվել եմ:

Վերցնելով ժուռնալը, Վլադիմիր Իլյիչը պնաց իր բնակարանը:

Երբեմն Վ. Ի. Լենինը խնդրում էր այն գիրքը, ժուռնալը կամ թերթը, որոնք վկայակոչում էր ընկերներից որևէ մեկը: Օրինակ, այն բանից հետո, երբ 1921 թվականի հունվարի 28-ին նրան այցելեց Ս. Մ. Գորկին, ես ստացա հետևյալ երկտողը.

«Խնդրում եմ գտնել (կոմպլեկտով)

Ռաբոչի կրայը

Իվ.-Վոդնեսենսկում:

(Ի ս կ ա կ ա ն պրոլետարական բանաստեղծների խումբակ)

Գումում է Գորկին  $\left\{ \begin{array}{l} \text{Ժիլին*} \\ \text{Արտամոնով} \\ \text{Սեմյոնովսկի}^{1} \end{array} \right.$

1921 թվականի դեկտեմբերի 5-ին Վլադիմիր Իլյիչը զրույցում է Ի. Ի. Սկվորցով-Ստեպանովի հետ: Հետո նա գրում է. «Խնդրում եմ ինձ համար ճարել.

Գալկին (Գորկ) «Երաշտի մասին» բրուշուրը»<sup>2</sup>:

Իսկ 1922 թվականի նոյեմբերին այդ նույն ընկերոջ հետ գրուցելու ժամանակ Լենինը խնդրեց «Պեչատ ի ուկոլյուցիա»

\* Հավանաբար գրավորիպակ է, եղել է բանաստեղծ Ի. Ժիլին:

<sup>1</sup> «Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին», մ. 2, էջ 729:

<sup>2</sup> «Լենինի ինստիտուտի գրառումները», III, 1928, էջ 94:

ժուռնալի 1921 թվականի № 3-ը և «Պրավդա»-ում տպագրված Սկվորցով — Ստեպանովի հոդվածները:

Վլադիմիր Իլյիչը հետաքրքրվում էր նաև գեղարվեստական գրականությամբ: Այսպես, 1921 թվականի հունիսի 6-ին Լ. Ա. Ֆոտիևային գրած նամակում ասված է.

«Գրադարանավարուհուն խնդրեցեք ինձ համար ժամանակավորապես գտնել «Հայնե, 2 հատոր բանաստեղծություններ և Գյոթե, Ֆաուստ, երկուսն էլ գերմաներեն, լավ կլինի փոքր չափսի»<sup>1</sup>:

Մի անգամ Վ. Ի. Լենինը խնդրեց նաև Սինկլերի ստեղծագործություններն անգլերեն լեզվով:

1922 թվականի ամռանը Վլադիմիր Իլյիչը Գորկայում էր: Հունիսի երկրորդ կեսին նրա առողջական վիճակը բարելավվեց: Հուլիսի 12-ին Լ. Ա. Ֆոտիևային գրած երկտողում նա խնդրում է սկսել իր համար պատրաստել հետևյալ գրքերը (և ուղարկել ցուցակները) «1) գիտական, 2) գեղարվեստական, 3) քաղաքական (վերջինս բոլորից հետո, քանի որ այն դեռևս թույլ չի տրվում)»<sup>2</sup>:

Կատարելով այդ խնդրանքը, ես կանոնավոր կերպով Գորկա էի ուղարկում ստացվող գրքերի ցուցակները: Դրանց թվում շատ գեղարվեստական երկեր կային: Դժբախտաբար այդ ցուցակները մինչև հիմա չեն դառնում:

Պահպանվել են միայն, թեև ամենևին էլ ոչ լրիվ, այն որոշ գրքերի, թերթերի ու ժուռնալների ցուցակները, որոնք Վ. Ի. Լենինը օգտագործել է 1922 թվականի ամռանը և աշնանը

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXXV, էջ 260.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 351.



Գորկայում: 32 անուն թերթեր, շատերը անգլերեն լեզվով, որոնք լույս էին տեսնում Լոնդոնում, Նյու-Յորքում, Կալիֆոռնիայում: Մի քանի թերթի գերմաներեն, ֆրանսերեն և իտալերեն: Ժուռնալներ՝ «Կոմունիստիչեսկի Ինտերնացիոնալ»-ը, «Պոդ զնամենեմ մարքսիզմա»-ն, «Կրասնայա նով»-ը, «Կրասնայա կնիդա»-ն, «Կնիդա ի ռեդկուցիա»-ն, «Օգոնյոկ»-ը և այլն: 137 ժուռնալ անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով, Մարքսի և Էնգելսի երկերի երկու հատորները, Հեգելի «Ոգու ֆենոմենոլոգիան» և «Լոգիկայի գիտությունը»: Մի քանի աշխատություններ սովետական պետության էկոնոմիկայի և քաղաքականության վերաբերյալ: Գեղարվեստական դրականություն, մասնավորապես Գորկու «Իմ համալսարանները» և այլ գրքեր:

Գորկայում եղած ժամանակ Վ. Ի. Լենինը հետաքրքրվում էր գրող Կորոլենկոյի ստեղծագործությամբ: Այսպես, օրինակ, նա մի անգամ խնդրեց «Վ. Գ. Կորոլենկոն իր նամակներում: 1883—1922 թթ.», «Կորոլենկո Վ. Գ. և Կյանքը և ստեղծագործությունը»: Հոգիվածների ժողովածու Ա. Բ. Պետրիշչևի խմբագրությամբ, Պետրոգրադ, 1922: Այդ գրքերի վրա կան լենինյան նշումներ, ընդգծումներ և ջնջումներ:

Մենք գիտեինք, որ Վլադիմիր Իլյիչը գոհ էր գրքերի ուղարկումից: 1922 թվականի օգոստոսի 31-ին նա գրել է.

«Գրքերի համար շատ շնորհակալ եմ: Այժմ դրանք այնքան շատ են ինձ մոտ, որ սկսելու եմ կուլտերով վերադարձնել: «Աուֆբաու»-ի համար նույնպես շնորհակալ եմ...»<sup>1</sup>:

«Աուֆբաու» («Վերականգնում») ժողովածուի 1-ին և

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXVI, էջ 494.

2—3-րդ համարները, որը 1921 թվականի հունիսից լույս էր տեսնում Մյունխենում գերմաներեն և ռուսերեն լեզուներով, Վլադիմիր Իլյիչին ուղարկվեցին 1922 թվականի օգոստոսի 7-ին՝ իր խնդրանքով:

Երբեմն ինձ էլ էր հարկ լինում Վլադիմիր Իլյիչին երկտող գրել այս կամ այն խնդրանքով: Դրանց վրա չենինը սովորաբար անում էր իր նշումները:

1920 թվականի նոյեմբերին ևս թողեցի հետևյալ երկտողը.

Վլադիմիր Իլյիչ.

Բարի եղեր ինձ գրել հետևյալի մասին.

1) Ի՞նչ անել Թիֆլիսից ստացվող թերթերը.

Այո:

2) Արգյոթ ձեզ պե՞տք են Թիֆլիսում հրատա-

րակվող գրքերը (կցում եմ ցուցակը):

Խնդրում եմ:

3) Մի ընկեր լուրջ է սպիտակ գլարդիակն «L'Europe nouvelle». Paris\* ժուռնալի կոմպլեկտը: Եթե ձեզ հետաքրքրում է, ապա կարելի է ձեռք բերել:

«Պրավդա»-ի խմբագրությունը՝ Լուսով-ի և ուրիշ ալի գրականություն բաժնին հանձնելու համար:

Այդ երկտողին ևս կցել էի Թիֆլիսում հրատարակված գրքերի հետևյալ ցուցակը:

«Վ. Ա. Իշկով: Բանվորական շարժումը և պետական զարգացումը Անգլիայում XVII-ի II կեսին և XIX հարյուրամյակին:

Անդրկովկասի և Վրաստանի արտաքին բաղադրականություն փաստաթղթերը և նյութերը:

\* «Նոր Եվրոպա»: Փարիզ:

Ն. Ն. Ժորդանիա 2 տարում (1917 թվականի  
Մարտի 1-ից մինչև 1919 թվականի Մարտի 1-ը), Զե-  
կուցումներ և հատկու

Արսևան Կրիլինսկիի Մայրամասերում ռուսական  
քաղաքականության ակնարկներ 1918 թվականի հայ-  
վրացական հարաբերությունների պատմությունից:

Կորիլի 1920 թվականի կարմիր զորքը Հայկու-  
կան ռեզիստանսի գործիչները Թուրքահայաստանում և  
մեզ մոտ:

Խնդրում  
եմ

Բ Ո Ւ Ր Ը:

Երկտողի և զրքերի ցուցակի վրա Վլադիմիր Իլյինը արել էր համապատասխան նշումներ և ընդգծումներ: Ես այս պատ-  
տաթղթերը բերեցի այնպես, ինչպես դրանք արված են լի-  
նինյան ժողովածուում<sup>1</sup>:

Նաչելով Լենինին դրած իմ երկտողերի վրա նրա արած  
նշումները, ես այն ժամանակ զարմանում էի, զարմանում  
եմ և հիմա, թե դրանք որքան լակոնիկ էին, որոշակի. «Այո»,  
«խնդրում եմ». որքան հասկանալի են նրա ընդգծումները մեկ,  
երկու, երեք դեպքով, որքան արտահայտիչ են նրա պայմա-  
նական նշանները:

Բերեմ իմ երկտողերից ես մեկը և նրա վրա արված Լի-  
նինի նշումը 1922 թվականի ապրիլի 13-ին ես գրել եմ.

«Վլադիմիր Իլյին: Արդյոք դուք թույլ չե՞ք տա ազիտա-  
ցիոն-պրոպագանդիստական բնույթի բրոշյուրների կրկնօրի-  
նակները, ինչպես նաև Ձեր երկերի հատորների մի-մի օրի-  
նակը առլ արամվայի և էլեկտրոկայանների բռնվորների»

<sup>1</sup> Տե՛ս Լենինյան ժողովածու XXXV, էջ 180—181:

Նոշտոնը,  
նոթընը,

Կ. Մախուր (Գաղ-  
տերաթ)

և Կ. Մովսիս Բաբուշ-  
կարյան,

և Մուշ. և Դոգրաթ և Մե  
Տայրազ և Դեմ  
և Մոս Բրուսյան

Ծովաթ և Մուսկովսկոյ  
(Բոս) Տայրազ և Մոս

Վաղիմիր Իլիչի Երկտողը ճերպապան Բարտուղարին:

բջիջներին: Հեղինակային օրինակները պահվում են Ձեր գրադարանում (հատորներ IV, VII (1,2 մասերը), XIV (1,2 մասերը), XIX)»:

Վլադիմիր Իլիչը ալդ երկտողի վրա նշում է. «Համաձայն եմ: Լենին»<sup>1</sup>:

Մի անգամ Վլադիմիր Իլիչին պետք եկավ իր այն բրոշյուրը, որը հրատարակվել էր դեռևս մինչև ռեոլյուցիան և այդ ժամանակ դարձել բիբլիոգրաֆիական հազվագեղութուն: Այդ կառակցությամբ նա հերթապահ քարտուղարին գրել է.

«Խնդրում եմ

դանպահարել

Մալկինին (Կենտրոնական

մամուլ)

և իմ գրադարանավարուհուն,

արդյոք չեն կարող ինձ համար

հիմա ճարել

մեկ օրով

իմ բրոշյուրը՝

«Զեկուցում ՌՍԴԲՊ Ստոկհոլմի

(1906) համագումարի մասին»<sup>2</sup>:

Թերթելով գրքերի մասին լենինյան երկտողերը, մենք կրկին ու կրկին համոզվում ենք, թե Վլադիմիր Իլիչը որքան շատ բան էր կարողում, թե նա իր բազմակողմանի գործու-

<sup>1</sup> Տե՛ս Լենինյան ժողովածու XXXV, 347:

<sup>2</sup> ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական պարտիական արխիվ, ֆ. 2, ց. 1, պ. մ. 19398:



Նեոթյուն մեջ որքան հմտորեն էր օգտվում լայնածավալ  
գրականությունից: Վ. Ի. Լենինի գիտական աշխատանքի մե-  
թոդները, ստեղծագործական լաբորատորիան մեծագույն հե-  
տաքրքրություն են ներկայացնում: Այդ կարևոր պրոբլեմի  
ուսումնասիրումը, աշխատանքի կազմակերպման լենինյան  
փորձի հետ ծանոթանալն անսահմանորեն հարստացնում են  
գիտական և հասարակական-քաղաքական աշխատողներին  
մեր բոլոր կողմերին:

## ԼԵՆԻՆԸ ԸՆԹԵՐՑՈՂ, ԵՎ, ՀԵՂԻՆԱԿ

**Փ**ողկոմսովետի նիստերի օրերին Վլադիմիր Իլյիչը հետ-  
ճաշյա հանգստից հետո իր աշխատասենյակին էր դալիս  
սովորականից հինգ-վեց բուպի շուտ: Անհրաժեշտ նյութերի  
հետ մեկտեղ նա իր հետ վերցնում էր նոր գրքեր ու ժուռնալ-  
ներ, որոնք հասցնում էր նիստերի ժամանակ ոչ միայն աչքի  
անցկացնել, այլև դրանց վրա կատարել իր նշումները:

Լենինը կարդում էր շատ և խիստ արագ: Պատահում էր,  
որ նիստերի ժամանակ ելույթ ունեցողներից որևէ մեկը Վլա-  
դիմիր Իլյիչին տեսնելով խորասուզված ընթերցանության  
մեջ, լուում էր, բայց նա հանդիստ կերպով այդ ընկերոջը  
առաջարկում էր շարունակել, կրկնելով նրա արտասանած  
վերջին բառերը:

Արագ ընթերցելու սովորությունը Վ. Ի. Լենինի մոտ մշակ-  
վել էր, հավանաբար, վաղուց:

Հին բուլղերի Օ. Բ. Լեպեշինսկայան իր հիշողություններում  
բերում է հետևյալ էպիզոդը: Լենինի հետ միասին նրան հարկ  
է եղել սիբիրյան արսորի ժամանակ նախով Ենիսեյի վրայով  
Նրասնոյարսկից դնալ Մինուսինսկ: Ենիսեյի շրջակայքի հրա-

շալի տեսարաններով զմայլվելուց հետո, Վլադիմիր Իլյիչը սկսում է կարդալ: Գիրք է վերցնում նաև Լեպեշինսկայան: ՌԵԱ, — պատմում է Օլգա Բորիսովնան, — ակամայից ուշադրութուն պարձրեցի այն բանի վրա, որ Իլյիչը իր ընթերցած հաստ գրքի էջերը շատ արագ էր թերթում: Ես իմ գրքում հաղիվ էի կարողանում 5—6 տող կարդալ, իսկ կողքիս Իլյիչի գրքի էջը արդեն շրջվում էր... Ես նայեցի Իլյիչի ձեռքի բացած գրքին: Տեսնում եմ գիրքը օտար լեզվով է:

— Վլադիմիր Իլյիչ, — հարցնում եմ ես, — ի՞նչ եք անում: Իլյիչը զարմացած բարձրացնում է աչքերը:

— Ինչպե՞ս թե ինչ: Կարդում եմ...

— Մի՞թե այդպես են կարդում, — ասացի ես: — Դուք բոլոր՞նե եք կարդում, թե միայն աչքի եք անցկացնում գիրքը:

— Իհարկե բոլորը, և շատ ուշադիր:

— Բայց մի՞թե կարելի է այդպես արագ կարդալ, — զարմացա ես:

— Ահա թե ինչ, — ժպտաց Իլյիչը: — Դուք իրավացի եք. ես արագ եմ կարդում: Բայց այդպես է պետք, ես ինձ վարժեցրել եմ դրան: Ինձ անհրաժեշտ է շատ-շատ կարդալ: Ուստի ինձ դանդաղ կարդալ չի կարելի...»<sup>1</sup>:

Գրականության հետ արագ ծանոթանալու, բազմաթիվ գրքերի միջից առավել անհրաժեշտն ընտրելու հմտութունը Լենինի մոտ զուգակցվում էր հավաքած նյութը խորապես ուսումնասիրելու հետ: Դեռևս պատանի հասակից նա սիրում էր ընթերցել մասիտը ձեռքին և գրքերի ու ժուռնալների վրա

---

<sup>1</sup> Օ. Լեպեշինսկայա: Հանդիպումներ Իլյիչի հետ (Հին Բուլճեկի հիշողութունները): Պետրադհրաստ Մ., 1957, էջ 8 (ռուսերեն):

համապատասխան նշումներ կատարել. դրանցից բնորոշ են. սիրած NB (nota bene — լատինական «լավ նկատել»), մեկ, երկու, երեք հորիզոնական ու ղուգահեռ գծերով, ավերավոր գծերով ընդգծելը, sic (լատինական «այսպես»), հա, հա, հմ, ալո, ալո, բու, biendit (ֆրանսիական «լավ է ասված»), <!??, պերլ ??, ցնդաբանություն, tres bien (ֆրանսիական «շատ լավ» է), օհ, օհ, !!>, richtig (գերմանական «ճիշտ է») և այլ մակագրություններ:

Վլադիմիր Իլյիչը նշումներ էր կատարում գրքերի, ժուռնալների լուսանցքներում և տեքստի վրա, շապիկների ու մաքուր թերթերի վրա, դիտողություններ էր գրում:

Այսպես, օրինակ, «ՌՍՖՍՌ էլեկտրիֆիկացման պլանը» 669 էջանոց ծավալուն հատորի գրեթե յուրաքանչյուր էջը պահպանում է Վ. Ի. Լենինի նշումներն ու ընդգծումները: Այդ գիրքը՝ ԳՕԷԼՌՈ-ի հանձնաժողովի ղեկուցումը սովետների VIII համագումարին, Վլադիմիր Իլյիչը ուշադրությամբ ուսումնասիրել էր:

Լենինի անձնական գրադարանում նրա կատարած նշումներով զրքերի թիվը հասնում է մոտ 500-ի: Եթե բնութագրենք այդ գրքերի թեմատիկան, ապա կարելի է ասել, որ այն ամենասերտ կերպով կապված էր այն ամենահրատապ հարցերի հետ, որոնք ծառացած էին պարտիայի և երկրի առջև:

Վլադիմիր Իլյիչի նշումներով գրքերը, ժուռնալներն ու թերթերը պահվում են ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտում (գրանց թիվը հասնում է մոտ 900-ի): Դրանք ուսումնասիրվում են շատ հետազոտողների կողմից: Լենինի ընթերցողական հետաքրքրություններն այնքան լայն էին, իսկ գրքերի վրա աշխատելու նրա մեթոդներն

այնքան բազմազան ու հարուստ, որ դիտնականների, գրա-  
դարանավարների, հրապարակախոսների համատեղ ջանքեր  
են պահանջվում այդ պրոբլեմն իր ամբողջ լիակատարու-  
թյամբ լուսաբանելու համար: Ստորև ես կնշեմ իմ հիշած որոշ  
շտրիխներ միայն, որոնք բնութագրում են Լենինին՝ որպես  
ընթերցողի և որպես հեղինակի:

Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս բիրլիոգրա-  
ֆիային:

Մեր ժամանակներում, երբ այնքան շատ գրքեր են հրա-  
տարակվում գիտելիքների ամենատարբեր ճյուղերի գծով,  
բիրլիոգրաֆիական գործի դրվածքը և նոր հրապարակումների  
մասին տեղեկություններից օգտվելու հմտությունը խիստ կա-  
րևոր է:

Վլադիմիր Իլյիչը կանոնավոր կերպով նայում էր տպագիր  
գրացուցակները, բիրլիոգրաֆիական ցանկերը և «Գրքային  
տարեգրությունը»: Սրա բոլոր պրակները նա կարդում էր  
մատիտը ձեռքին: Հայտնի է, թե ինչպես Լենինը բարձր էր  
գնահատում Ն. Ա. Ռուբակինի «Գրքերի աշխարհում» աշխա-  
տությունը, որը ներկայացնում է «ռուսական գրքի հարստու-  
թյան տեսության մի փորձ դիտական-փիլիսոփայական և  
գրական-հասարակական գաղափարների պատմության կա-  
պակցությամբ»: Այս գրքի վերաբերյալ իր գրախոսությունում  
Լենինը նշում է, որ «նման տիպի հրատարակությունը հսկա-  
յական հետաքրքրություն է ներկայացնում», որ հեղինակը  
«հսկայական աշխատանք է թափել և սկսել է չափազանց ար-  
ժեքավոր մի ձեռնարկում, որին սրտանց պետք է ցանկանալ,  
որ նա աճի ու զարգանա ըստ լայնքի ու խորության»<sup>1</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 315—316:



Աղբի անցկացնելով Բեռլինում հրատարակվող «Ռուսակայա կնիգա» քննադատական բիբլիոգրաֆիական ժուռնալը, Վլադիմիր Իլյիչը հաճախ դրա շապկի վրա նշում էր իրեն հարկավոր երկի անունը։ Աշխատելով «Ձախուժյան» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գրքի վրա, նա հատուկ կերպով հետաքրքրվում էր այն գործերով, որոնք հրատարակվում էին արտասահմանում այն խմբերի ու քաղաքական հոսանքների կողմից, որոնք իրենց ներկայացնում էին որպես սոցիալիստական, բայց գործնականում բուրժուազիայի աջակիցներ էին։ Վ. Ի. Լենինը Կոպենհագեն Մ. Մ. Լիտվինովին գրել է. «Մեզ համար ծայր աստիճան կարևոր են այն բոլոր փաստաթղթերը, բանաձևերը, բրոշյուրները, թերթային հոդվածներն ու ճառերը, որոնք վերաբերում են պաշտպանական հոսանքներին՝ ձախ սոցիալիզմի և կոմունիզմի մեջ, հատկապես կոմունիզմի անարխո-սինդիկալիստական խեղաթյուրումներին կամ կոմունիզմի դեմ ուղղվածություններին»<sup>1</sup>։

Սովետական նշանավոր բիբլիոգրաֆ Ն. Վ. Ջոդենովը, խոսելով գրքի վրա Վլադիմիր Իլյիչի կատարած աշխատանքի մասին, նշել է. «Կարելի է ամբողջ կտրականությամբ և լիակատար պատասխանատվությամբ հաստատել, որ Լենինը իր գիտական ու հրապարակախոսական աշխատանքների, ինչպես նաև իր քաղաքական պրակտիկ պայքարի համար, իր ամբողջ կյանքի ընթացքում, որպես դարաշրջանի ամենակուլտուրական մարդը, լայնորեն օգտվում էր ամեն տեսակի բիբլիոգրաֆիական աղբյուրներից»։

Վլադիմիր Իլյիչի բնորոշ գծերից մեկը գիտելիքների, ա-

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXV, էջ 91—92։

մենից առաջ ռեուլյուցիոն տեսության տիրապետման նպատակասլացությունն էր, համառությունն ու սիստեմատիկությունը:

Վ. Ի. Լենինի սեղանի գրքերն էին գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի աշխատությունները: Նա մշտապես դիմում էր դրանց, կարդում բնագրից: «Լենինի համար,— գրել է Ն. Կ. Կրուպսկայան,— Մարքսի ուսմունքը ոչ թե դոգմա էր, այլ գործողության ծրագիր: Նա մի անգամ թույլ տվեց այսպիսի մի արտահայտություն. «Ով ուզում է խորհրդակցել Մարքսի հետ...»: Արտահայտությունը շատ բնորոշ է: Նա ինքը մշտապես «խորհրդակցում էր» Մարքսի հետ: Ռեուլյուցիայի ամենադժվար, բեկումնային պահերին նա նորից ձեռնամուխ եղավ Մարքսի վերընթերցմանը: Պատահում էր, մտնում էիր նրա առանձնասենյակը՝ շուրջը բոլոր հուզվում են, իսկ Իլյիչը կարդում է Մարքսին և պատահում էր, որ դժվարությամբ էր կտրվում նրանից»<sup>1</sup>:

Լենինի անձնական գրադարանում կար Մարքսի և էնգելսի մոտ 200 անուն գիրք (ռուսերեն և օտար լեզուներով): Առանձնապես խնամքով պահվում էին «Կապիտալի» հատորները (1872, 1885 և 1894 թվականների գերմանական հրատարակությունները, 1872, 1885 թվականների ռուսական հրատարակությունները): Դրանց վրա կատարված բազմաթիվ նշումները վերաբերում էին, ինչպես պարզվել է ձեռագրից, Վլադիմիր Իլյիչի գործունեության վաղ շրջանին:

Գիտական կոմունիզմի հիմնադիրների երկերի բոլոր հրատարակությունների նկատմամբ Վ. Ի. Լենինի հսկայական

<sup>1</sup> Ն. Կ. Կրուպսկայա, Մանկավարժական երկեր, հատ. 9. Մ., 1960, էջ 495—496 (ռուս.):

աշադրության մասին վկայում են, օրինակ, հետեւյալ փաստերը: Ես նրան առաջարկեցի գտնել Մարքսի և էնգելսի «Զհրատարակված հոգւածներ (1852, 1853, 1854 թթ.)» գիրքը, որը 1919 թվականին լույս էր տեսել Խարկովում «Պատերազմ և ռեւոլյուցիա» սերիայով: Վլադիմիր Իլյիչը այդ հրատարակության մասին չգիտեր, և իմ հաղորդումը նրան շատ ուրախացրեց: Երբ գիրքը ստացվեց, նա ավելացրեց իրենց «Մարքսիզմի բիբլիոգրաֆիայի» մեջ, որը կցվեց Գրանատ Եղբայրների հանրագիտարանային բառարանի՝ 28-րդ հատորում առաջին անգամ հրապարակված նրա «Կարլ Մարքս» հոգւածին:

Մշակելով սոցիալիզմի և կոմունիզմի հաղթանակի մասին ուսմունքը, Վ. Ի. Լենինը հանգամանորեն ծանոթանում էր փիլիսոփայական, տնտեսական և քաղաքական գրականությանը:

Վ. Ի. Լենինի գրքերի մեջ փիլիսոփայական գրականությունը ներկայացված է բավականին ընդարձակ, սկսած անտիկ աշխարհի հեղինակների աշխատություններից: Այստեղ կան Բե՛ Զեգելի, Ֆոյերբախի, Սպենսերի և Թե՛ այլ փիլիսոփաների գրքեր: Մեծ տեղ են զբաղում ռուս հեղինակները՝ Ա. Ն. Ռադիշչևը, Ն. Ա. Դոբրոլյուբովը, Դ. Ի. Պիսարևը և Գ. Վ. Պլեխանովը, որի աշխատությունները Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում: Վլադիմիր Իլյիչի աշխատատեսնյակում էին Ա. Ի. Գերցենի երկերի 22 հատորները և Ն. Գ. Չերնիշևսկու երկերի 10 հատորյակը (11 գիրք): Ինչպես հայտնի է ռուս ռեւոլյուցիոն գեմոկրատների ստեղծագործությունները քիչ

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 92:

դեր չեն խաղացել Վ. Ի. Լենինի հայացքների ձևավորման գործում: Նա առանձնապես սիրում էր Նիկոլայ Գավրիլովիչ Չերնիշևսկուն, լավ գիտեր նրա ստեղծագործությունները:

Վլադիմիր Իլյիչը մշտապես հետևում էր իրեն ժամանակակից փիլիսոփայական գրականությանը, քննադատաբար ուսումնասիրում էր այն:

Լենինի զրադարանում կա մի հատուկ բաժին՝ «Սոցիոլոգիա»: Այստեղ կան այնպիսի հայտնի սոցիոլոգների աշխատություններ, ինչպես Լ. Բերթրանը, Ա. Բեբելը, Վ. Վեյտլինգը, Ժ. Գեդը, Թ. Կամպանելան, Կ. Կաուցկին, Պ. Լավրովը, Ֆ. Լասսալը, Վ. Լիբկնեխտը, Թ. Մորը և ուրիշներ: Այդ բաժնի գրքերից մեկը՝ «Ռեալիստական աշխարհայացքի ակնարկներ»-ը (Փիլիսոփայության, հասարակագիտության և կյանքի վերաբերյալ հողվածների ժողովածու, 1904), պետք է հասկնապես առանձնացնել: Դրա շատ էջերում Լենինը կարմիր և կապույտ մատիաներով նշումներ է կատարել:

Վլադիմիր Իլյիչը մեծ ուշադրություն էր դարձնում Ռուսաստանում հասարակական հարաբերությունների պատմությանը: Այդ սյուրբլեմն ուսումնասիրելու համար նրա օգտագործած գրքերի մեջ նշենք Վ. Օ. Կյուչևսկու «Ռուսական պատմության դասընթացը» (1918) և «Դասերի պատմությունը Ռուսաստանում» (1918), Ն. Ի. Կոստոմարովի «Մեր անցյալից»-ը (1922), 1910—1914 թվականների ֆրանս-ռուսական հարաբերությունների պատմության նյութերը:

Հետաքրքիր էին Ռուսաստանում ռեոլյուցիոն շարժման պատմության վերաբերյալ գրքերը: Ասենք Թեկուզ այնպիսիները, ինչպես «Աղատության մարտիկները» (Ալեքսանդր II-ի կողմից մահապատժի ենթարկված ռեոլյուցիոներների կեն-

սագրությունները), Ս. Վասիլշենկոյի և Ի. Ստավսկու «Սոս-  
ջին մարտը» (1902 թվականի նոյեմբերի 17-ի ռուստովյան  
գործադուլի 20-ամյակի առթիվ), Վ. Պ. Վորոնցովի «Կապի-  
տալիզմի ճակատագիրը Ռուսաստանում» (Պետերբուրգ, 1882):

Վլադիմիր Իլյիչը հատուկ ուշադրությամբ կարգում էր  
Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիային նվիրված  
գրքերը՝ «Բոլշևիկները իշխանության գլուխ» (Հոկտեմբերյան  
հեղաշրջման սոցիալ-քաղաքական արդյունքները: Հոգովածու-  
րի ժողովածու, 1918), Բ. Վոլին «Հոկտեմբերի ղեկրեւները»  
(1922), Վ. Ա. Կարպինսկի «Պայքարի երեք տարին: Հոկ-  
տեմբերյան մեծ ռևոլյուցիայի երրորդ տարեդարձը» (1920)  
և այլ գրքեր:

«Պարտիայի պատմություն» բաժնում ղեկնված էին  
ՄՄԿՊ պատմության կարևորագույն փաստաթղթերը, տեղի-  
բում պարտիական աշխատանքի փորձի մասին գրքերը, պար-  
տիական նշանավոր գործիչների կենսագրությունները:

Վ. Ի. Լենինը մշտապես հետաքրքրվում էր միջազգային  
իրադրությամբ: Նրա գրադարանի «Միջազգային քաղաքակա-  
նության» բաժնում ներկայացված էին այդ տարիների դի-  
վանագիտության փաստաթղթերը՝ «Հաազայի կոնֆերանսը:  
Հունիս-հուլիս, 1922 թ.» (Փաստաթղթերի ժողովածու, Մ.  
1922), «Ջենովայի կոնֆերանսը» (Վիճակագրական հաշվե-  
տրություն: Նյութեր և փաստաթղթեր, 1922), «Կապուլյոս  
գիրք» (Արտաքին գործերի նախկին մինիստրության արխի-  
վից վերցված դադունի փաստաթղթերի ժողովածու, Մ., 1918):

Սոցիալիզմի կառուցումը մեր երկրում, արդյունաբերական  
արտադրության ու կառավարման կազմակերպումը, գյուղա-  
տնտեսությունը, ազգային հարցը, մարդկանց դաստիարակու-



թյունը, աշխատանքի, առևտրի կաղմակերպումը, սովետական օրենսդրությունը, սոցիալական ապահովությունը, արհմիութենական շարժումը, միջազգային կոմունիստական շարժումը, կյանքը արտասահմանում՝ ահա այն թեմաները, որոնք, իմ կարծիքով, կարելի է առանձնացնել, հետևելով Վլադիմիր Իլյիչի ուսումնասիրած զրականությանը: Նա մեծ նշանակություն էր տալիս հայրենական գիտությանը և ուրախանում էր, երբ ուսսական նշանավոր գիտնականներն անցնում էին դեպի ուսուցչի ուղին: Գրադարանում կան Վ. Ի. Վերնադսկու, Կ. Ա. Տիմիրյազևի, Լ. Ս. Բերգի, Ա. Ե. Ֆերսմանի, Կ. Ի. Սկրյաբինի, Դ. Ն. Պրյանիշնիկովի և ուրիշների աշխատությունները:

1920 թվականի գարնանը Կ. Ա. Տիմիրյազևը Լենինին ուղարկեց իր «Գիտություն և դեմոկրատիա» գիրքը հետևյալ մակագրությամբ.

«Մեծարգո Վլադիմիր Իլյիչ Լենինին Կ. Տիմիրյազևից, որը երջանկություն է համարում լինել նրա ժամանակակիցը և նրա փառապանծ գործունեության վիշտ»:

Դրան Վլադիմիր Իլյիչը 1920 թվականի ապրիլի 27-ին պատասխանում է.

«Թանկագին Կլիմենտի Արկադևիչ, Շատ շնորհակալ եմ Ձեզանից՝ Ձեր գրքի և բարի խոսքերի համար: Ես ուղղակի հիացած էի, կարդալով Ձեր դատողությունները ընդդեմ բուրժուազիայի և հօգուտ սովետական իշխանության: Ամուրամուր սեղմում եմ Ձեր ձեռքը և ամբողջ հոգով Ձեզ ցանկանում առողջություն, առողջություն և առողջություն:

Ձեր Վ. Ուլյանով (Լենին)»<sup>1</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 482:

Զինված ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի տարիներին ղեկավարելով երկրի պաշտպանությունը, Վ. Ի. Լենինը տեղյակ էր ռազմական նորագույն դրականությունը: Նրա անձնական գրադարանում կան ավելի քան 200 զբոսայգիների և հալածական սարքերի հարցերի շուրջը, ինտերվենտների և ներքին հակառակույցի դեմ սովետական իշխանության պայքարի մասին գրականություն: 1921 թվականին Լենինին ուղարկեցին «Հյուսիսային Կովկասի ռազմական օկուպի տերիտորիայի վրա ապստամբական շարժման տեսություն՝ 1921 թվականի հուլիսին և օգոստոսին» գիրքը: Կազմի վրա մակագրված էր՝ «Վլադիմիր Իլյիչ Լենինին»: Գրքին կցված էր Հյուսիսային Կովկասի ռազմական օկուպի հրամանատար Կ. Ե. Վորոշիլովի 1921 թվականի հոկտեմբերի 7-ի նամակը Վ. Ի. Լենինին:

Վլադիմիր Իլյիչը շատ ուշագրություն էր դարձնում աշխատանքի զիտական կազմակերպման, նրա արտագրողականության բարձրացման, սովետական քաղաքացիների մոտ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք դաստիարակելու հարցերին: Վ. Ի. Լենինի առաջադրանքով հսկայական ջանքերի վերաբերյալ անհրաժեշտ գրականություն ընտրեցի:

1922 թվականի մայիսի 17-ին Վ. Ի. Լենինից ստացա հետևյալ նրկադրը.

«Խնդրում եմ Սոցիալիստական ակադեմիայից ինձ համար գտնել կից ցուցակում կապույտ մատիտով նշված գրքերը:

Վ. Ուլյանով (Լենին)

Ք. Տ. Իսկ եթե կա, ապա նաև այդ հարցի վերաբերյալ  
գրքերի ցուցակը:

Հենինս<sup>1</sup>,

Միաժամանակ առաջադրանք էր արված ժողկոմսովետի  
դորժերի կառավարիչ Ն .Պ. Գորբունովին՝ Ամերիկայից, Գեր-  
մանիայից և Անգլիայից դուրս գրել աշխատանքի թելոորաց-  
ման և գիտական կազմակերպման վերաբերյալ գրականու-  
թյուն:

Հետո Հենինը ոչ երկար ժամանակով գնաց քաղաքից դուրս՝  
Գորկա: Մեկնելուց առաջ նա ինձ ասաց, որ պետք է խմանալ  
նաև, թե աշխատանքի գիտական կազմակերպման վերաբեր-  
յալ ինչ գրքեր կան ժողկոմսովետի, Աշխատանքի կոմիտե-  
րիատի և այլ գրադարաններում:

— Ես ձեզ Գորկայի հեռախոսով կղանդահարեմ աշխա-  
տասենյակ, և դուք ինձ կպատմեք, թե ինչ է արված, — ավել-  
լացրեց Վլադիմիր Իլյիչը:

Մի քանի օր անց հեռախոսավարուհին ինձ հաղորդեց, թե  
Գորկայից զանգահարում է Հենինը: Ես մտա Վլադիմիր Իլյի-  
չի աշխատասենյակ և տեսա, որ ասարատի վրա վառվում է  
լույսը (այնտեղ հեռախոսազանգի փոխարեն վառվում էր լամ-  
պը): Վերցրի հեռախոսափողը, լսեցի Հենինի ձայնը և հայտ-  
նեցի իր առաջադրանքի կատարման մասին:

Գորկայից վերադառնալով, նա նայեց այն գրքերն ու ցու-  
ցակները, որոնք պատվիրել էր մեկնելուց առաջ: Խնդրեց զըր-  
բերի մի մասը թողնել աշխատասենյակում, իսկ մյուսները  
ևս տարա գրադարանային սենյակը:

<sup>1</sup> «Հիշողություններ Վ. Ի. Հենինի մասին», մ. 2, էջ 732:

Երբ Վլադիմիր Իլյիչը ծանոթացավ Սոցիալիստական ալա-  
դեմիայի գրադարանից ուղարկված աշխատանքի գիտա-  
կան կազմակերպման վերաբերյալ գրքերի ցուցակին, հարց-  
րեց.

— Արդյոք չի՞ կտրելի այս ցուցակը վերցնել և չվերա-  
դարձնել:

Ես պատասխանեցի.

— Ցուցակը կաղմված է ձեզ համար, և կարող եք այն  
չվերադարձնել:

Լենինը հաճախ մտնում էր այն սենյակը, ուր առանձնաց-  
վում էր նրան հարկավոր գրականությունը և աչքի անցկաց-  
նում այն: Գծրախառարար հիվանդության պատճառով աշխա-  
տանքի գիտական կազմակերպման վերաբերյալ մտահղա-  
ցած աշխատությունը նրան այդպես էլ չհաջողվեց սկսել: Նա  
հասցրեց միայն 1922 թվականի օգոստոս-սեպտեմբերին գրել  
«Մի գգալ կուպր մի տակառ մեզրի մեջ»<sup>1</sup> հոդվածը: Վերու-  
ծելով Օ. Ա. Երմանսկու «Աշխատանքի գիտական կազմակեր-  
պումը և Թեյլորի սխեման» (Պետհրատ, 1922) գրքի արժա-  
նիքներն ու լեռնությունները, Վլադիմիր Իլյիչը ընդգծում է.  
«Սովորել աշխատել, այս է այժմ սովետական ռեսուրսիկայի  
գլխավոր, իրոք համաժողովրդական խնդիրը»: Լենինը մատ-  
նանշում է, որ մեզ համար ծայր աստիճան կարևոր է «եվրո-  
պական և ամերիկյան գիտությունից ընդօրինակել իրոք  
արժեքավորը»:

Վ. Ի. Լենինի հոդվածը, որը, նրա արտահայտություն-  
ներով էր սովետական ժողովրդի «ամենաառաջնակարգ և  
ամենազգլխավոր խնդիրն», մնաց անավարտ:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 435—436:

Լենինը մեծ սեր էր տաժում ռուսական գեղարվեստական գրականության կլասիկների նկատմամբ: Հաղվադեպ ազատ ժամերին նա իր ձեռքն էր վերցնում Պուշկինի կամ Նեկրասովի, Գոգոլի կամ Սալտիկով-Շչեդրինի հատորները: Նրա գրադարանում կային Դոնչարովի, Գորկու, Լերմոնտովի, Կոլլովի, Կորոլենկոյի, Գրիբոեդովի, Դոստոևսկու, Լ. Տոլստոյի, Զեխովի, Տուրգենևի երկերը...

«Վլադիմիր Իլյիչը,— գրել է Ն. Կ. Կրուպսկայան,— ոչ միայն ընթերցում էր, այլև բազմիցս վերընթերցում էր Տուրգենևին, Լ. Տոլստոյին, Չերնիշևսկու «Ի՞նչ անել»-ը, ընդհանրապես հիանալի գիտեր և սիրում էր կլասիկներին...»<sup>1</sup>: «Ի՞նչ անել» վեպի ազդեցության տակ, նշել է Լենինը, հարյուրավոր մարդիկ դարձել են ռեվոլյուցիոներներ: Այդ հիանալի ստեղծագործության հեղինակին, Ն. Գ. Չերնիշևսկուն, Վլադիմիր Իլյիչը շափազանց հարգում ու սիրում էր: ««Սովբեմեննիկում» տպագրված ամեն ինչ,— պատմում էր նա,— ես կարդում էի մինչև վերջին տողը, այն էլ ոչ թե մեկ անգամ: Շնորհիվ Չերնիշևսկու տեղի ունեցավ իմ առաջին ծանոթացումը փիլիսոփայական մատերիալիզմի հետ: Հենց նա էր առաջինը, որ ինձ ցույց տվեց Հեգելի դերը փիլիսոփայական մտքի զարգացման գործում և նրանից եկավ դիալեկտիկական մեթոդի հասկացողությունը, որից հետո արդեն շատ հեշտ էր յուրացնել Մարքսի դիալեկտիկան»<sup>2</sup>:

Մի անգամ աշխատանքի գալով, Վլադիմիր Իլյիչի աշ-

<sup>1</sup> Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ Լենինի մասին: Պետրոգրատ, Մ. 1957, էջ 32 (ռուսերեն):

<sup>2</sup> Ն. Վալենտինովի «Հանդիպումներ Վ. Ի. Լենինի հետ» գրքից: «Վոպրոսի լիտերատուրի», Մ., 1957, № 8, էջ 133 (ռուսերեն):



խառնասենյակում գրասեղանին տեսա Լ. Ն. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» գիրքը: Շուտով Լենինը խնդրեց Ա. Մ. Գորկու «Լև Տոլստոյ» գիրքը:

Այդ կապակցությամբ ուղում եմ բերել Վ. Ի. Լենինի մասին Գորկու հիշողություններից մի հիանալի կտոր:

«Մի անգամ գնացի նրա մոտ և տեսնեմ՝ սեղանին դրված է «Պատերազմ և խաղաղություն» երկի մի հատորը:

— Այո՛, Տոլստոյ, Ցանկություն առաջացավ կարդալ որսի տեսարանը, բայց սհա հիշեցի, որ անհրաժեշտ է նամակ գրել մի ընկերոջ: Իսկ կարդալու համար բոլորովին ժամանակ չկա: Միայն այսօր գիշեր կարդացի ձեր գրքույկը Տոլստոյի մասին:

Ժպտալով, աչքերը կկոցելով, նա հաճույքով ձգվեց բազկաթոռում և, ձայնը ցածրացնելով, արագ շարունակեց.

— Ինչ ապառաժ է, հը՞: Ինչ վիթխարի մարդ է: Ա՛յ սա, սիրելի՛ս, գեղարվեստագետ է... Եվ գիտե՞ք, թե ինչն է դեռ դարձանալի: Մինչև այս կոմսը գրականության մեջ իսկական մոլժիկ չի եղել:

Ապա նայելով ինձ կկոցած աչքերով՝ հարցրեց.

— Ո՞ւմ կարելի է Եվրոպայում նրա կողքին դնել: Ինքն իրեն պատասխանեց.

— Ո՛չ ոքի:

Եվ, շփելով ձեռքերը, գոհունակությամբ ծիծաղեց<sup>1</sup>:

Արիստոֆանից մինչև Ուեյլը, Հոֆմանից մինչև Նեկսեն՝ ալսպիսին էր օտարերկրյա գեղարվեստական դրականության րնապավառում վլադիմիր Իլյիչի ընթերցասիրական հետա-

<sup>1</sup> «Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին», մաս 1, էջ 507:

բրբրությունների դիպագրումը: Գրադարանում ներկայացված են անտիկ աշխարհի պոետներն ու զրամատուրգները, մեր դարաշրջանից առաջ VII—IX դարերի շինական պոետները: Հիշում եմ, թե ինչպես մեկ անգամ Վ. Ի. Լենինը Ա. Վ. Լու- նաշարսկուն խնդրեց ճարել Հոմերոսի «Իլիականը»:

1923 թվականին հրապարակվեց Ջ. Լոնգոնի պատմվածք- ների ժողովածուն «Սեր կյանքի նկատմամբ» վերնագրով՝ Ժողովածուում հրապարակված ամերիկյան դրողի հիանալի ստեղծագործություններից մեկի անունով: Ն. Կ. Կրուպսկա- յան այդ պատմվածքը Վլադիմիր Իլյիչի համար կարդացել է նրա մահից երկու օր առաջ: Հետո նա ասել է, որ «այդ պատմվածքը Իլյիչին շափազանց դուր եկավ»:

Վլադիմիր Իլյիչը հետաքրքրվում էր նաև այդ ժամանակ ծնունդ առնող սովետական գրականության ստեղծագործու- թյուններով: Նա սիրում էր ռեուլուցիոն պոեզիան: Գրադարա- նում կար Գիմյան Բեդնու բանաստեղծությունների, առական- րի ու երգերի 10 ժողովածու, որոնք յույս էին տեսել 1917— 1922 թվականներին և Իլյիչին էր նվիրել բանաստեղծը: Ժո- ղովածուներից մեկի վրա հեղինակը արել է այսպիսի մի մա- կագրություն. «Նադեժդա Կոնստանտինովնային և Իլյիչին հիշատակ անցյալի և վստահությամբ ապագայի մասին՝ ջերմ սիրով»:

Ահա Վասիլի Կնյազևի «Ինչի մասին է երգում զանգակը» (Պետրոգրադ, 1920) բանաստեղծությունների փոքրիկ գրքույ- կը: Գրքույկի առաջին էջերից մեկում տպված է «Կոմունայի երգը».

Մենք չենք ընկճվի կարիքի հանդեպ,  
Վիշապ չի թնրի մեր մեջքը, երբեք.

Չի կարող ձնկի բերել իր առաջ  
Ճակատագիրը սին ու բմահաճ:  
Կոմունարները սարուկ չեն դառնա  
Օ, երբե՛ք, երբե՛ք,  
Օ, երբե՛ք, երբե՛ք...

Այդ գրքույկը նազեծղա Կոնստանտինովնան բազմիցո քարձրածայն կարգացել է հիվանդ Վլադիմիր Իլյիչին: «...Պատահում էր, որ նրա համար կարգում էի բանաստեղծություններ,— հիշում էր նա,— իսկ Իլյիչը պատուհանից մտասույշ նայում էր մայր մանող արեխին... Կարգում ես, կարծես երգում ես կրկնում Իլյիչին՝ երբեք, երբեք ռեուցիայի ոչ մի նվաճումը չենք տա...»<sup>1</sup>:

Վ. Ի. Լենինը հետաքրքրվում էր արվեստով, սիրում էր երաժշտությունը, թատրոնը: Նրա գրադարանի գրադարակնիքին մենք տեսնում ենք այդ տարիներին լույս տեսած բալետային հրատարակություններ, նվիրված համաշխարհային դասական երաժշտության լավագույն ներկայացուցիչների ստեղծագործություններին:

Ի Վլադիմիր Իլյիչը կրթոտ գրքասեր էր: Բայց գրքերը նրա համար երբեք ինքնանպատակ, դարդ չեն եղել: Նա գրքերի հետ վարվում էր ստեղծագործաբար, քննադատաբար էր գնահատում դրանց բովանդակությունը, դրանցից վերցնում էր այն, ինչը հարկավոր էր ստեղծագործական աշխատանքի և պրակտիկ գործունեության համար, քաղվածքներ անում: Լայնորեն հայտնի են նրա հռչակավոր «Փիլիսոփայական տեսարակները», «Իմպերիալիզմի մասին տեսարակները», «Նոթեր պատերազմի մասին»-ը: Նա մշտապես օգտվում էր ըն-

<sup>1</sup> Ն. Կ. Կուսակյա, Լենինի մասին: Պետրադհրոտ, 1960, էջ 74 (ռուսերեն):

թերցած երկերից իր վերցրած քաղվածքներից, բաղմիցս աչքի էր անցկացնում այդ գրառումները, դրանց վրա նոր նշումներ ու լրացումներ անում:

Լենինի սևագիր տետրերը պարզ ցույց են տալիս, թե նա ինչպես էր աշխատում գրքերի վրա: Վլադիմիր Իլյիչը համագամանալից կոնսպեկտ էր կազմում ընթերցածի վերաբերյալ: Նա տետրերի մեջ իր խոսքերով գրում էր հեղինակի հիմնական դրույթները կամ քաղվածքներ անում գրքերի կարևոր տեղերից:

Ուսումնասիրելով Մարքսի և էնգելսի ստեղծագործությունները, Լենինը մշտապես ընդգծում էր նրանց գաղափարների զարգացումը, մարքսիզմի սերտ կապը ռևոլյուցիոն շարժման հետ, մատնանշում էր, թե երբ, պատմական կոնկրետ ինչ պայմաններում է այս կամ այն երկը ստեղծվել:

Լենինյան կոնսպեկտները գրքերի շոր փոխադրություններ չէին: Կոնսպեկտի լուսանցքներում ու տեքստում կատարած բաղմաթիվ դիտողություններում և նշումներում Վլադիմիր Իլյիչը արտահայտում էր իր վերաբերմունքը դեպի շոշափած հարցը: Այնպիսի դիտողություններ, ինչպես «Շատ կարևոր է», «Հստակ է», «Սրամիտ է», «Հիանալի է», շատ կան Լենինյան տետրերի լուսանցքներում: Մեջբերելով, օրինակ, էնգելսի դրույթն այն մասին, որ ռևոլյուցիան ամենահեղինակավոր բանն է, Վլադիմիր Իլյիչը երկու անգամ ընդգծել է այն և լուսանցքում գրել. «Լա՛վ է ասված»:

Եթե Լենինի կարդացած գիրքը օտար լեզվով էր, ապա նա հաճախ առանձին տեղեր թարգմանում էր ռուսերեն, վառ արտահայտությունները գրում լուսանցքներում:

Վլադիմիր Իլյիչը տարբեր տեսակի ընդգծումներով ա-

ռանձնացնում էր իր կոնսպեկտի կարևորագույն ձևակերպումները: Որոշ տեղեր նա ընդգծում էր մեկ անգամ, մյուսները՝ երկու, երեք և ավելի. մեկը՝ ուղիղ գծով, մյուսը՝ ալիբավոր, բարակ կամ հաստ: Առանձին դրույքներ նա երբեմն վերցնում էր տարբեր մեծություն ու ձևի (ուղիղ, կլոր, ձևավոր) փակագծերի մեջ, որոշ բառեր էլ առնում էր շրջանակի մեջ, նշագծում: Այդ ամենը հնարավորություն էին տալիս հետագայում հեշտ ու արագ գտնելու անհրաժեշտ տեղը, հեշտացնում կոնսպեկտի վրա կատարվող հետագա աշխատանքը:

Մեր պարտիայի Կենտրոնական կոմիտեն մատնանշում է, որ մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրման գլխավոր մեթոդը ինքնազարգացումն է: Լենինից, բուլշևիկների հին սերնդից պետք է սովորել, թե ինչպես ինքնուրույն, ստեղծագործաբար տիրապետել ռևոլյուցիոն տեսությանը, թե ինչպես այն դարձնել պրակտիկ աշխատանքի զենք:

Գիրքը կարդալիս, — ասում էր Լենինը, պետք է ձգտել լրիվ յուրացնել դրա բովանդակությունը: Սակայն յուրացնել բովանդակությունը ամենեկին չի նշանակում հիշել պատրաստի ձևակերպումները: Անհրաժեշտ է թափանցել ուսումնասիրվող առարկայի էության մեջ, գիտակցաբար յուրացնել այն, համադրել պատմական կոնկրետ իրադրության հետ: Ընթերցելիս, դասախոսություններ և զեկուցումներ լսելիս ամենագլխավորը հարցին մոտենալու և այն ինքնուրույն կերպով մեկնաբանելու հմտությունն է: Միայն այդ դեպքում «դուք կարող եք ձեզ բավականաչափ հաստատ համարել ձեր համոզմունքներում, և դրանք բավականաչափ հաջող պաշտպանել ում հանդեսդ էլ ուղում է լինի և երբ էլ ուղում է լինի»<sup>1</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 580:



Մենք չենք վախենում, ընդդժում էր Վլադիմիր Իլյիչը, մեր ունեցություն տեսության և պրակտիկայի բախումից: Տեսությունը, հիպոթեզը մեղ համար ինչ որ սուրբ բան չէ, այն մեզ համար աշխատանքային գործիք է:

Լենինը միշտ հետաքրքրվում էր, թե Սովետական Ռուսաստանի մասին արտասահմանում ինչ և ինչպես են գրում: Նա հիմնավորապես ուսումնասիրում էր գաղափարական հակառակորդների ստեղծագործությունները, որպեսզի նրանց հետ հաջողությամբ սլաքարի: Դենիկինի «Ակնարկներ Ռուսական խռովության մասին» դրքի էջերից մեկի վրա Իլյիչը գրել է. «Հեղինակը դասակարգային սլաքարին մոտենում է որպես կույր քոթոթ»:

Վ. Ի. Լենինը աչքի էր անցկացնում վիթխարի քանակությամբ ամենատարբեր տեսակի գրականություն և կարողանում էր ժամանակին նկատել ամենակարեւորը, նորը, առաջադիմականը: Եվ ոչ միայն նկատել, այլև վճռականորեն աջակցել դրան:

Հայտնի է, թե Վլադիմիր Իլյիչը ինչ հետաքրքրությամբ էր վերաբերվում Ա. Թոգորսկու «Մի տարի հրացանով և գութանով» գրքին: Իր «Փոքրիկ պատկեր մեծ հարցեր պարզելու համար» հոդվածում նա գրել է, որ «այդ գրքի հետ պետք է ծանոթացնել որքան կարելի է շատ բանվորների ու ղյուղացիներին: Այդ գրքից պետք է ամենալուրջ դասեր քաղել սոցիալիստական շինարարության ամենակարեւոր հարցերի վերաբերյալ, որոնք հիանալի պարզաբանված են կենդանի օրինակներով»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 499:

Վլադիմիր Իլյիչն այդ գրքից բաղվածքներ է բերել ՌԿ(Բ)<sup>9</sup> Կենտկոմի գործունեության մասին պարտիայի XI համագումարում աված իր ղեկուցման մեջ:

Բերեմ մի օրինակ ևս, թե ինչպես էր Լենինը վերաբերվում «մանրունքներին», եթե ընդհանուր շահերի տեսակետից դրանք կարևոր էին:

«Սննդի եփումն առանց կրակի» բրոշյուրից նա վերցրել է այսպիսի բաղվածք.

«Ածխի ու նավթի բացակայության և փայտի անբավարար մթերման դեպքում թերմոսները մեծ դեր պետք է խաղան:

Հաշվի առնելով դրանց նշանակությունը, բանվորների և կարմիրբանականների ղեկուսատուների Մոսկվայի սովետի պարենային բաժինը հայտարարել է մեծ և փոքր շափերի թերմոսների կոնկուրս»:

Այնուհետև, 1920 թվականի հունիսի 29-ին Վլադիմիր Իլյիչը Մոսկվայի սովետի նախագահությանը երկտող է գրում, որոնղ ասվում է.

«Կցելով «Սննդի եփումն առանց կրակի» բրոշյուրից վերցված բաղվածքը (էջ 43, № 1 «Տնտեսուհու փոքրիկ գրադարան», հրատ. ԺՏԿԽ, Մոսկվա, 1918 թ.), խնդրում եմ ինձ հայտնել Մոսկվայի սովետի պարենային բաժնի հայտարարած թերմոսների կոնկուրսի արդյունքները:

Ժողովրդական կոմիսարների սովետի նախագահ՝  
Վ. Ուլյանով (Լենին)»:

Բնորոշ մի գիծ: Այդ փաստաթղթին Վլադիմիր Իլյիչը կցեց հետևյալ երկտողը. ««Եփում առանց կրակի» գրքույկը վերադարձնել ինձ»:

Հուլիսի 16-ին Վ. Ի. Լենինին ներկայացրած տեղեկանքի մեջ Մոսկվայի սպառմաթիւթյան վարչությունը հաշտւում է, որ թերմոսների կոնկուրսը ավարտվել է, լավ արդշունքներ է տվել, թերմոսները պատրաստվում են ու կիրառվում<sup>1</sup>:

Վլադիմիր Իլյիշը մեծ նշանակութլուն էր տալիս մամուլում հրապարակված նյութերի սխտեմավորմանն ու ուսումնասիրմանը: Նա Պետհրատին առաջարկեց գրքի պալատի միջոցով կազմակերպել ալքոմների հրատարակում՝ էկոնոմիկական, տնտեսական և արտադրական հարցերի վերաբերյալ կարևոր թերթերից վերցրած հատվածներով, ներառյալ նաև բոլոր հաշվարկներն ու վիճակագրական նյութերը:

Պարբերական մամուլի տվյալներին Լենինի լավ տեղյակ լինելը նրան օգնեց ավելի լավ հետազոտելու հասարակական-քաղաքական կյանքի երևույթները, ժամանակին տեսնել նորի, առաջադիմականի ծիւերը: Այդպես է հղել, օրինակ, Էրբ նա 1919 թվականի մայիսի 19-ի «Պրավդա» թերթում կարդացել է «Աշխատանք ուուլուցիոնորեն (կոմունիստական շաբաթ)» փոքրիկ հոդվածը, որը կորել էր մեծ նյութերի մեջ: Այն գրված էր, ինչպես ասում են լրագրողները, էջատակ, վերջին՝ յոթերորդ սյունակի աւմենատակը: Բայց Լենինը այն նկատեց: Նա կոմունիստական շաբաթօրյակում տեսավ արտակարգ մեծ երևույթ՝ աշխատանքի նկատումամբ ուոր, կոմունիստական վերաբերմունքի սկիզբը: Երևան հկավ Վ. Ի. Լենինի նշանավոր «Մեծ նախաձեռնութլուն» երկը:

Ես մոտիկից տեսնում էի, թե ինչպես Վլադիմիր Իլյիշը հանգամանորեն պատրաստվում էր ղեկուցումներին ու այլ

<sup>1</sup> Տե՛ս Լենինյան ժողովածու XXXV, էջ 135—136:

Եւույթներէ: Ինձ հանձնարարւած էր հետեւել, որ նրան անհրաժեշտ ամբողջ գրականությունը ժամանակին ընտրւած լինի: Պատրաստուելով, օրինակ, Կոմիտներնի IV կոնգրեսում ունենալիք իր ելույթին, նա խնդրեց Կոմիտներնի III կոնգրեսի սղագրական հաշվետւությունը և բանաձևը, նոր տնտեսական քաղաքականության վերաբերյալ իր զեկուցումը և պարենհարկի մասին բրոշյուրը:

Ամբողջ գրականությունն ընտրվեց գերմաներեն, որովհետեւ Լենինը կոնգրեսում զեկուցում տվեց այդ լեզվով:

Լենինը ռեֆերենտներ չունեւ և ելույթից առաջ ամբողջ նախապատրաստական աշխատանքը, որպէս կանոն, կատարում էր ինքը: Իրեն անհրաժեշտ տվյալների համար հանձնարարություններ էր տալիս ժողկոմսովետի գործերի կառավարչության աշխատողներին, անձամբ հեռախոսով հարցնում էր հիմնարկներին և առանձին անձանց, գրքերից, թերթերից ու ժուռնալներից քաղվածքներ անում:

Մի անգամ ևս Վլադիմիր Իլյիչին առաջարկեցի նրա համար անոտացիայի ենթարկել գրքերն ու ժուռնալային հոդվածները: Բայց նա հրաժարվեց, ընդ որում ասելով.

— Չարժէ ժամանակ կորցնել: Հավանաբար, ևս ինքս այդ բանն ավելի արագ կանեմ:— Եվ ժպտաց, որ չվիրավորի ինձ:

Հանդես գալով աշխատավորների առջև, Լենինը ոչ թէ կարդում էր նախապէս պատրաստած տեքստը, որպիսին նա հաճախ չէր էլ ունենում, այլ խոսում էր ազատ: Նա հիանալի տիրապետում էր այն տալիան, որի մասին խոսվում էր: Երբ Լենինը պատրաստվում էր մեծ զեկուցումների, ապա սովորաբար կաղմում էր համառոտ կոնսպեկտ կամ պլան: Եթէ Եւույթը խիստ կարևոր ու պատասխանատու էր, նախա-



*Georgian*  
*Amosov*  
*Kom*  
*W. G.*  
*of the*



Բնծայագիր Ա. Մ. Գորկուն, որ 1920 թվականի հունիսի 18-ին արել է Վ. Ի. Լենինը իր «Ձախտոբյան» մանկական հիվանդություններ կոմունիզմի մեջ» գրքի վրա:

պէս գրում էր թեղիսները, վերցնում մի քանի թվեր, այս կամ այն փաստական նյութը: Բայց երբ լսարանի առաջ սկսում էր խոսել, ապա իր դրառումներին հազվագեղ էր նայում:

Վլադիմիր Իլյիչը ոչ միայն շատ էր կարդում, այլ շատ էլ գրում էր: Զբաղված լինելով պետական և պարտիական Վիթխարի գործերով, վճռելով մեծ քանակությամբ անհետաձգելի գործնական խնդիրներ, նա չէր կտրվում դիտական աշխատանքից, անդադրում կերպով հարստացնում ու զար-



գաղնում էր ռեուլուցիոն տեսութիւնը: Նրա աշխատասենյակը, որտեղ Լենինը հաճախ նստում էր մինչև ուշ գիշերը, նաև ստեղծագործական լաբորատորիա էր: Այստեղ նա գրել է այնպիսի բացառիկ կարեւոր աշխատութիւններ, ինչպես «Մեծ նախաձեռնութիւն», «Պրոլետարիատի դիկտատուրայի մասին», ««Զախուլիան» մանկական հիվանդութիւնը կոմունիզմի մեջ», «Պարենհարկի մասին» և մի քանի այլ գործեր:

Հիշում եմ մի արտաոտոց դեպք, որը տեղի ունեցավ այն օրը, երբ ես առաջին անգամ եկա ժողովմասովետ: Լ. Ա. Յոտիևայի օգնական Ն. Գ. Կրասինան ինձ ասաց, թե վլադիմիր Իլյիչն այժմ աշխատութիւն է գրում մանկական հիվանդութիւնների մասին: Ես շատ զարմացա և մտածեցի. «Մի՞թե նա նաև այդ բնագավառի մասնագետ է»: Միայն հետո իմացա, որ գրքում խոսքը վերաբերում է կոմունիզմի մեջ «ձախուլիան» մանկական հիվանդութիւնը, որ այդ գրքում բացահայտվում են միջազգային կոմունիստական շարժման օրինաչափութիւնները, դատաւարւում են ձախ ֆրակցիոնութիւնը և կեղծ ռեուլուցիոնութիւնը:

Այդ գրքի սրբագրութիւնը Լենինը կատարում էր անձամբ, նա հետևում էր դրա ստագրման դրաֆիկին, ձգտում էր, որ այն լույս տեսնի կոմինտերնի II կոնգրեսի բացման նախօրյակին: Սրբագրութիւնն իր ուղղումներով Պետրոգրադ ուղարկելիս, նա գրում է. «...խնդրում եմ ինձ հեռախոսագրով հաղորդել այն ընկերոջ անունը, որը պատասխանատու է ստուգման և վերջնական լույս ընծայման համար (ինչպես նաև եւր. եւ լույս ընծայելու)»<sup>1</sup>:

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXXV, էջ 122:

1920 թվականի հունիս-հուլիսին դիրքը լույս տեսավ միա-  
ժամանակ ռուսերեն, անգլերեն, գերմաներեն ու ֆրանսերեն  
և բաժանվեց կոնգրեսի պատգամավորներին:

Հետաքրքիր է 1920 թվականի հոկտեմբերի 2-ին ՌԿԵՄ  
III համագումարում Վ. Ի. Լենինի «Ներիտասարգական միութ-  
նությունների խնդիրները» ճառի հրապարակման պատմություն-  
ը: Այն առաջին անգամ տպագրվեց 1920 թվականի հոկ-  
տեմբերի 5—7-ի «Պրավդա»-ում: Այդ նույն թվականին այն  
լույս ընծայվեց առանձին բրոշյուրով՝ «Գլխադրուսվարի  
գրադարան» սերիայով: Տիրաժը (200 հազար օրինակ) իս-  
կույն տաբանվեց: Կոմերիտականները մի քանի անգամ  
Ն. Կ. Կրուպսկայայի միջոցով Վ. Ի. Լենինից խնդրում են հա-  
մաձայնություն տալ բրոշյուրը վերահրատարակելու վաղի-  
մի՞ր Իլյիչը բոլոր խնդրանքներին պատասխանեց մերժումով,  
ասելով, թե ինքը ուզում է ընդլայնել բրոշյուրի նյութերը, որ-  
պեսզի լրիվ պատասխանի երիտասարդությանը հուզող հար-  
ցերին:

Մի անգամ կոմերիտականների պատգամավորությունը  
Կրուպսկայային հանձնեց «Ներիտասարգական միությունների  
խնդիրները» բրոշյուրի ձեռքով արտագրած օրինակները:  
Դրանք զարգարված էին գլխատառերով, դրադրվագներով,  
մանրանկարչությամբ և նրբաճաշակ գրված ենթավերնագրե-  
րով: Բրոշյուրի այդ ձևադիր օրինակները նաղեժդա Կոնս-  
տանտինովնան հանձնեց վաղիմի՞ր Իլյիչին: Նա ուշադրու-  
թյամբ ծանոթացավ կոմերիտականների աշխատանքի հետ  
և թույլ տվեց բրոշյուրը վերահրատարակել: Այն շարեցին  
ու էջերը կապեցին Մոսկվայի 26-րդ տպարանի կոմերիտա-  
կանները՝ իրենց կազմակերպած շաբաթօրյակների ժամանակ:

Արտատիպները (օտտիսկները) նայելով ու ստորագրելով, չենինը խորհուրդ տվեց բրոշյուրի շապկի վրա նշել այն կոմ-  
երիտականների ազգանունները, ովքեր շարել ու տպագրել են  
այն: Վլադիմիր Իլյիչի խորհուրդը կատարվեց:

Իր երկերն ստեղծելիս, Վ. Ի. չենինը լայնորեն օգտվում էր  
ասորեր աղբյուրներից ու նյութերից: Նվ ոչ միայն գրական,  
այլև փաստական տվյալները վերցվում էին աշխատավորու-  
թյան պրակտիկ գործունեությունից: Նա ուշագիտ կերպով  
ունենդրում էր կշանքի «ցուցմունքներին»:

Աշխատանքի մարդկանց փորձի ու կարծիքների վրա հեն-  
վելու ձգտումը Վլադիմիր Իլյիչի մոտ վառ կերպով դրսևոր-  
վել է պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու հար-  
ցը լուծելիս: Այդ իմաստով խիստ ուսանելի է նրա հանդի-  
սումը սիրիցի անպարտիական գյուղացի Օսիպ Իվանովիչ  
Չեռնովի հետ, որի մասին հիշում է Վ. Ա. Կարպինսկին<sup>1</sup>: Այն  
տեղի ունեցավ Կրեմլում 1921 թվականի փետրվարին: Չեռ-  
նովը, հաղթահարելով Սիրիցի մինչև Մոսկվա երկամսյա  
ճանապարհորդության հսկայական զժվարությունները, եկել  
էր չենինի մոտ, որպեսզի նրան հայտնի շատ գյուղացիների  
այն կարծիքը, որ ժամանակն է պարենմասնատրումը, որն  
արդեն արգելակում էր գյուղատնտեսության զարգացմանը,  
փոխարինել պարենային հարկով:

— Օ՜յ, Թանկագին ընկեր չենին,— ասաց Չեռնովը,—  
վատ, շատ վատ է մեր՝ գյուղացիներին դրությունը այդ  
անիծյալ պարենային մասնատրումից:

---

<sup>1</sup> Տե՛ս Վ. Կարպինսկի, Սիրիցյան գյուղացին չենինի մոտ «Պրավդա»,  
23 հոմվարի, 1964 թվական:

— Իսկ բանն ինչո՞ւմն է:

— Դատեցեք ինքներդ, Վլադիմիր Իլյիչ: Գալիս են այդ «մասնատրոդները» և պարենամասնատրոման անվան տակ գյուղացուց վերցնում թե՛ ցորենը, թե՛ գարին, թե՛ ձավարը, թե՛ յուղը և թե՛ կաթնատու ու բանաղ անասունները: Ուղղակի մնում է պառկել ու մեռնել:

— Դե նույնիսկ մեռնել,— Լենինը տարուբերեց գլուխը և փոքր-ինչ նկատելի քմծիծաղ տվեց... — Նկեր միասին մտածենք, թե ինչպես լուծենք այդ հարցը: Դուր ի՞նչ եք առաջարկում:

Ջեռնովը պատասխանում է, որ այժմ, երբ քաղաքացիական պատերազմը վերջացել է, գյուղացիները մտածում են, թե պարենային մասնատրոման փոխարեն պետք է մտցնել պարենային հարկ:

Լենինը համաձայնեց սիրիլյան գյուղացու փառատարկին և նրան ասաց, որ իրենք երկուսով գտան մի ընդհանուր որոշում: Նվ նրան խնդրեց իր մտքերը շարադրել թղթի վրա:

Մասնատրումը բնահարկով փոխարինելու մասին պարտիայի X համագումարում տրվելիք ղեկուցմանը պատրաստվելիս, Վլադիմիր Իլյիչը բազմիցս զրուցել է գյուղական պատվիրակների հետ, մանրադնին ծանոթացել մամուլում գետեղված նյութերի, առանձնապես «Բեդնոտա» թերթում հղած գյուղացիների նամակների հետ, ընդհանրացրել գյուղացիական համագումարների ու կոնֆերանսների արդյունքները:

Կյանքի երևույթների խոր վերլուծությունն է ընկած Վ. Ի. Լենինի «Պարենային հարկի մասին» հիանալի հրկի հիմքում, որտեղ պարզաբանվում է նոր տնտեսական քաղաքականությունն ինչպես նաև հարկային քաղաքականությունը:

Վլադիմիր Իլյիչը ինչ աշխատանք էլ որ ձեռնարկելիս լիներ, այն կատարում էր արտակարգ մանրազնիին, հանգամանալից ստուգելով բոլոր սովյալները: Լենինի արած յուրաքանչյուր հետեւութուն խարսխվում է հավաքված ու քննադատաբար իմաստավորված հսկայական փաստական նյութի վերլուծության վրա: Գիրք գրելու համար Վլադիմիր Իլյիչը ձեռնարկում էր ուսումնասիրել սովյալ պրոբլեմի վերաբերյալ ամբողջ գրականությունը, հաճախ շատ լեզուներով:

Ուզում եմ նշել, թե Լենինը ինչպես էր վերաբերվում իր ստեղծագործություններին: Վլադիմիր Իլյիչի խնդրանքով կազմվեցին նրա 1905—1907 և 1915—1919 թվականների շրջյուրները: Այդ գրքերը Վլադիմիր Իլյիչը պահում էր առանձին, հաճախ գրանցից օգտվում էր, նշումներ անում: Նոր աշխատություններ ստեղծելիս նա դիմում էր ավելի վաղ գրածներին: Պետք է ասել, որ Վլադիմիր Իլյիչը հոգատարությամբ և միաժամանակ ինքնաքննադատաբար էր վերաբերվում սեփական աշխատանքին, ստեղծագործական աշխատանքում պահպանում էր որոշակի հաշտակականություն և հետեւողականություն:

Համառորեն ու հետեւողականորեն, քանի ներում էր առողջությունը, Լենինը զբաղվում էր ստեղծագործական գործունեությամբ: Այդպես էր նաև նրա կյանքի վերջին շրջանում: Մանր հիվանդության պատճառով նա արդեն չէր կարողանում իր ստեղծագործություններն անձամբ գրել, գրանք թելագրում էր:

Քաջ գիտակցելով իր հիվանդության վտանգավորությունը, Վ. Ի. Լենինը շտապում էր օգտագործել ամեն մի հնարավորություն, արտահայտելու համար, ինչպես ինքն էր ասում,



«առավել կարևոր» նկատառումները պաշտիայի մասին, սոցիալիստական շինարարության խնդիրների մասին, համաշխարհային ազատագրական շարժման զարգացման ուղիների մասին: Երբ բժիշկները սկսեցին առարկել, որ նա չթիւլադրի իր գրառումները, Լենինը հարցը դրեց ուլտիմատիվ կերպով՝ կամ նրան կթուլատուրեն ամեն օր, գոնե կարճ ժամանակով թեւադրել իր «օրագիրը» (Վլադիմիր Իլյիչն այդպես էր անվանում իր գրառումները), կամ նա բոլորովին կհրաժարվի բովանդակել: 1922 թվականի դեկտեմբերի 24-ին բժիշկների հետ Կենտկոմի ղեկավար աշխատողների խորհրդակցությունից հետո որոշվեց Վլադիմիր Իլյիչին թույլ տալ օրական 5—10 բաժնի թեւադրելու, բայց դա նամակագրությունների բնույթ չպետք է կրի և նա այդ երկտողերի պատասխանին չպետք է սպասի:

Վլադիմիր Իլյիչի համար գրքերը և իր ձեռագրերի ընթերցանությունը հեշտացնելու համար նրա անկողնու սառկ դրվեց պլուսիտրանման հատուկ տակդիր:

Ինչպես հայտնի է, 1922 թվականի դեկտեմբերի 23-ից մինչև 1923 թվականի մարտի 3-ը Լենինը թեւադրեց մի քանի մեծ նամակներ և հինգ հոդված՝ «Նամակ համագումարին», «Օրենսդրական ֆունկցիաները Պետպլանին հանձնելու մասին», «Ազգությունների կամ «ամատոնմիւլացիայի» հարցի շուրջը», «Էջեր օրագրից», «Կոոպերացիայի մասին» «Մեր ռեյոլուցիայի մասին (Ն. Սուխանովի հուշերի առթիվ)», «Ինչպես վերակառուցել բանգյուղտեսչությունը (Առաջարկություններ պարտիայի XII համագումարին)», «Լավ է քիչ, բայց լավ»: Իր հոդվածների վրա աշխատելու ընթացքում նա պահանջեց հետևյալ գրականությունը՝ կոոպերացիայի, աշ-

խատանքի դիտական կազմակերպման, միջազգային հարաբերությունների, հայրենասիրության և այլ հարցերի մասին։

Դեկտեմբերի 29-ին Վ. Ի. Լենինը խնդրում է կազմել նոր գրքերի ցուցակ՝ ըստ բաժինների։ Բժիշկները նրան թույլ տվեցին կարդալ։ Նա կարդում էր, օրինակ, Սուխանովի «Նոթեր ու լուրջ հիշատակի մասին» (III և IV հատորները)։ 1923 թվականի հունվարի 5-ին Վլադիմիր Իլյիչը պահանջեց նոր գրքերի ցուցակը (հունվարի 3-ից սկսած) և Տիտլինովի «Նոր եկեղեցին» գիրքը։

Գրքեր բաց թողնելու մասյանում Տիտլինովի գրքի մասին նշումից հետո ես գրել եմ. «Հունվար ամսին նազեժդա Կոնստանտինովնան Վլադիմիր Իլյիչի համար պահանջեց կոոպերացիայի մասին գրականություն։ Խինչուկն տղարկեց հետևյալ գրքերը՝ 1) Մեշչերյակով. Կոոպերացիան և սոցիալիզմը։ 2) Շտաուդինգեր. Մարքսիզմը և սոցիալիզմը։ 3) Ջոսսեն. Կոոպերացիայի տեսության դարգացումը կապիտալիզմի դարաշրջանում։ 4) Շտաուդինգեր. Շուլց-Դելիչից դեպի կրեյցնախը։ 5) Չայանով. Գյուղացիական կոոպերացիայի կազմակերպման հիմնական գաղափարներն ու ձևերը։ 6) Տոգան-Բարանովսկի. Կոոպերացիայի սոցիալական հիմքերը։ 7) Պրոկոպովիչ. Կոոպերատիվ շարժումը Ռուսաստանում, նրա տեսությունն ու պրակտիկան»<sup>1</sup>։

1923 թվականի փետրվարի 10-ին Վ. Ի. Լենինը հանձնարարեց իր համար գտնել հետևյալ գրքերը, որոնց ցուցակը պահպանվել է հերթապահ քարտուղարների գրաստանների մեջ։

<sup>1</sup> «Վոպրոսի Խատորի ԿՊՍՍՁ, 1963, № 2, էջ 90։

Վ. Ս. Ռոմիցին. «Նոր գիտությունը և մարքսիզմը»: Խար-  
կով, 1922.

Ս. Յու. Սևեդովսկի. «Մարքսիզմը որպես դասավանդման  
առարկա»: Զեկուցում Համառվարախնական մանկավարժական  
էնսֆերանտում (Հուլիս, 1922 թ.): Խարկով, 1922.

Մ. Ալսկի. «Մեր ֆինանսները քաղաքացիական պատե-  
րազմի և ՆէՊ-ի ժամանակ»: Մոսկվա, 1923.

«Փողի տեսության հիմնական պրոբլեմները»: Հոգվածնե-  
րի ժողովածու:

Ս. Ա. Ֆալկենբ. «Բեկում համաշխարհային արդյունաբե-  
րական ճգնաժամի պարզացման մեջ»: Մոսկվա, 1923.

Գ. Յիպերովիչ. «Մենք ինքներս (Տնտեսական շինարա-  
բության արդյունքները 5 տարում)»: Պետրոգրադ, 1922.

Լ. Արսելյուդ (Օրթոդոկս). «Ընդգեմ իդեալիզմի: Փիլիսո-  
փայական մտքի իդեալիստական որոշ հոսանքների քննադա-  
սությունը»: Հոգվածների ժողովածու: Մոսկվա-Պետրոգրադ,  
1922.

Ա. Դրես. «Քրիստոսի մասին առասպելը»: Մոսկվա, 1923:

Պ. Գ. Կուտով. «Ռուսական ցարիզմի վախճանը: Ժանդար-  
մական կորուստի նախկին հրամանատարի հիշողություննե-  
րը»: Մոսկվա-Պետրոգրադ, 1920.

Ս. Ի. Կանատչիկով. «Օրվա թեմաներով (Պրոլետարական  
գաղափարախոսության էջեր)»: Պետրոգրադ, 1923.

Ի. Ա. Մոճալիսկի. «Պրոլետարական առասպելաոտիզմա-  
գործություն (Արդի պրոլետարական պոեզիայի գաղափա-  
րական շեղումների մասին)»: Սեմիպալատինսկ, 1922:

Փետրվարի 20-ի Լեհկոյան Վլադիմիր Իլյիչը ինդրեյ  
ՌՍՖՍՌ սովետների X համագումարի հաշվետվությունը: Հե-

տազա օրերին նա խնդրեց Սուխանովի «նոթեր ուղարկեցիս քեզ մասին» յոթերորդ հատորը:


Վ. Ի. Լենինը պետական, պարտիական և գիտա-թեորիական վիթխարի աշխատանքներ էր տանում: Բայց երբեք որևէ արտոնություն հավակնություն չունեիր: Այդ բոլորը նա կատարում էր ամենից առաջ անշահախնդիր, հանուն աշխատավորության:

Վ. Ի. Լենինի ստեղծագործություններն ամբողջ առաջագետ մարդկության սեփականությունն են: Մեծ մտածողը մեղ թողել է շատ հարուստ գաղափարա-թեորետիկական ժառանգություն: Ներկայումս արդեն հրապարակված են Լենինյան ավելի քան 10 և կես հազար ստեղծագործություններ ու փաստաթղթեր: Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի կենտրոնական պարտիական արխիվում այժմ պահպանվում են Վ. Ի. Լենինի ավելի քան 31 հազար փաստաթղթեր:

Մշտապես զբաղված լինելով աշխատանքով, Վլադիմիր Իլյիչը կարողանում էր նաև ուրիշներին ոգեշնչել ստեղծագործական աշխատանքի:

Դեմյան-Բեդնին բազմիցս ասել է այն մասին, թե նոր երկեր ստեղծելու գործում իր համար ինչպիսի խթան է հանդիսացել Լենինի հետ ունեցած զրույցը, որը նրան առաջարկել է «հին երգին հակադրել նոր երգը: Իր սովորական ժողովրդական ձևով՝ նոր բովանդակությամբ»:

Այն բանից հետո, երբ սովետների VIII համագումարը բեռնեց Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ կառավարական հանձնաժողովի մշակած Ռուսաստանի էլեկտրիֆիկացման պետական պլանը, Վլադիմիր Իլյիչը ծայրահեղ անհրաժեշտ համարեց այդ պլանի լայն պրոպագանդան: Նա



Զեմայական մակագրություն Վ. Ի. Լենինին՝ «ՌՍՖՍՌ էլեկտրիֆիկացիան»  
գրքի վրա, որը կատարել է գրքի հեղինակ Ի. Ստեպանովը:



պարտիական նշանավոր հրապարակախոս Ի. Ի. Սկվարցով-Ստեպանովին հանձնարարեց ղրկելու հանրամատչելի բրոշյուր ԳՕԷԼԻՈՒ-ի պլանի մասին: Ծանրաբեռնված լինելով աշխատանքով, Սկվարցով-Ստեպանովը համառորեն հրաժարվում էր, բայց Վլադիմիր Իլյիչը կարողացավ նրանից համաձայնություն վերցնել: Այդպիսով ստեղծվեց «ԲՍՖՍԲ էլեկտրիֆիկացիան համաշխարհային տնտեսության անցումնային փուլի կապակցությամբ» գիրքը: Այդ գրքին առաջաբան գրեցին Վ. Ի. Լենինը և Գ. Մ. Կրժիժանովսկին: Վլադիմիր Իլյիչը «ամբողջ հոգով» հանձնարարում է ընկ. Ստեպանովի ներկա աշխատությունը բոլոր կոմունիստների ուշադրությանը<sup>1</sup>:

Երբ այդ գիրքը տպագրությունից դուրս եկավ, Լենինը խնդրեց այն դնել «պտտանի» վրա:

Ստանալով հեղինակային օրինակները, Ի. Ի. Սկվարցով-Ստեպանովը Վլադիմիր Իլյիչին նվիրեց մի դիրք հետևյալ մակագրությամբ. «Թանկագին ընկ. Վ. Ի. Լենին-Ուլյանովին հեղինակ, որը աշխատելու է հստեցվել անխնա «հարկադրանքի» կարգով և անսպասելիորեն դրա մեջ գտել է իր «կոշումը»: Թող կեցցե՛ նման «հարկադրանքը»:

1922 թվականի դեկտեմբերին, երբ Վլադիմիր Իլյիչի առողջությունը սկսեց վատանալ և բժիշկները պնդում էին, որ նա նորից գնա Գորկա, Լենինը զրականության վերաբերյալ ցուցում տվեց: Այն հանգում էր հետևյալին. առանձնացնել տեխնիկական, բժշկական ու այլ գրքեր և դրանք ուղարկել ուրիշ զրադարաններ, գյուղատնտեսականը հանձնել Մարիա Իլյինիչնային, արգյունաբերական պրոպագանդալի, աշխա-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 288:

տանքի կազմակերպման և մանկավարժության վերաբերյալ գրքերը տալ նաղեժդա Կոնստանտինովնային. բելետրիստիկան պահել ցպահանջի. հրապարակաստությունը, բաղարտական, մեմուարները, հիշողությունները պահել իր համար:

Բնորոշ է, որ գրքերի վերաբերյալ կարգադրությունները չեն լինել կատարեց ղեկտեմբերի 15-ին, այն նույն օրը, երբ սովետների համառուսաստանյան X համագումարում ունենալիք ելույթի առթիվ թելագրեց Կենտկոմի անդամներին ուղղված հայտնի նամակը: Այդ նամակում ասվում էր. «Նս ալժմ ավարտել եմ իմ գործերի լիկվիդացիան և կարող եմ մեկնել հանդիստ կերպով»<sup>1</sup>:

Վլադիմիր Իլյիչի համար գրքերը եղել են նրա սլետական և սլարտիական բոլոր գործերի անկապտելի մասը: Նա, ինչպես ոչ այլ ոք, սիրում էր գրքերը, բարձր էր գնահատում դրանք, կարողանում էր նրանց վրա աշխատել:

---

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 33, էջ 547:

## «ԻՍԿ ԵՍ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՄ»

**Մ**ի անգամ Մարիա Իլյինիչնան ինձ հաղորդեց Վլադիմիր Իլյինի խնդրանքը՝ դասավորելու նրա սենյակի գրքերը, և հրավիրեց իր հետ գնալ իրենց տուն։ Այսպես առաջին անգամ ես եղա Ուլյանովների ընտանիքում։

Ինչպես և բոլորին, ուրիշներ եղել էին նրանց մոտ, ինձ ևս առաջինը եղա Վլադիմիր Իլյինի, Նադեժդա Կոնստանտինովնայի, Մարիա Իլյինիչնայի ոչ մեծ սենյակները և մի փոքր ճաշասենյակ։ Շուրջն ամեն ինչ հասարակ էր, շքեղության ոչ մի առարկա, ոչ մի ավելորդ բան, միայն կուլտուրական, շատ աշխատող ընտանիքի համար ամենաանհրաժեշտը։ Իր վրա ուշադրություն էր հրավիրում գրքերի մեծ քանակությունը։ Լենինի մեկ սլատուհան ունեցող սենյակում դրված էին մի գրասեղան՝ իր բազկաթուղով, գրքերով լի պահարան, մետաղե մահճակալ, իսկ սրա վերևում պատից կախված էր Լենինի և Կրուպսկայայի լուսանկարը՝ Կաշինո գյուղի էլեկտրակայանի բաղամանը։ Դռան ձախակողմում փոքրիկ բաղամոց, կլոր սեղան, մահճակալի մոտ տումբոշկա՝ վրան լամպա պա դրված։

Ավելի ուշ, երբ ես այդ մասին իմ տպավորությունները պատմում էի Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայային, նա նկատեց.

— Ուր էլ որ մենք ապրել ենք, Վլադիմիր Իլյիչը միշտ իր համար ընտրել է սենյակներից փոքրը, իսկ ավելի ընդարձակը ինձ է առաջարկել, հոգ տանելով, որ ինձ մոտ ավելի շատ արև ու օդ լինի։ Այդպես էր Կրեմլում, այդպես էր նաև Գորկայում։

Այն բանից հետո, երբ ես ծանոթացա Վլադիմիր Իլյիչի սենյակում եղած գրքերին, դրանք տեղափոխվեցին նրա աշխատասենյակը։

Հաջորդ օրը ես աշխատանքի եկա ու տեսա, որ աշխատասենյակի անկյունում դարսված է շատ գրականութուն։ Ներս մտաՎ Վլադիմիր Իլյիչը և, դիմելով ինձ, ասաց.

— Այդ գրքերը իմ սենյակից են։ Խնդրում եմ կարգավորել դրանք։

Հենինը գնաց ժողկոմսովետի նիստի, իսկ ես ձեռնամուխ եղա իմ գործին։ Ուզում էի ամեն ինչ վերջացնել մի երեկոյում և դրա համար էլ մնացի սովորականից ավելի երկար։ Ժամը տասներկուսին կամ գիշերվա ժամը մեկին վերադարձավ Վլադիմիր Իլյիչը։ Ինձ տեսնելով աշխատելիս, նա բարկացավ.

— Դուք դեռ աշատե՞ղ եք։ Մի՞թե չէր կարելի այդ ամիսը վաղը։

— Վլադիմիր Իլյիչ, բայց չէ՞ որ դուք էլ հենց նոր եք վերջացրել աշխատանքը։

Նա քմծիծաղ տվեց ու ասաց.

— Իսկ ես պարտավոր եմ։

Վլադիմիր Իլյիչ Լենինը աշխատում էր շատ և անձնուրաց, ընդհանուր գործի համար չէր խնայում ոչ իր ուժերը ոչ էլ առողջությունը:

Մի անգամ Վլադիմիր Իլյիչը, իրեն վատ զգալով, պնաց ժողկոմսովետի նիստից: Գալով իր աշխատասենյակը, նա նստեց գրասենդանի մոտ և ձեռը դրեց գլխին: Լենինը շատ վատ տեսք ուներ: Սրգեն ուշ ժամանակ էր:

— Վլադիմիր Իլյիչ, — դիմեցի ես նրան, — դուր խիստ հոգնել եք, գնայիք տուն՝ հանգստանայիք:

— Ո՛չ, ես դեռ պետք է ընդունեմ Գլխի Մաքսիմիլյանովիչ Կրժիժանովսկուն, — պատասխանեց նա:

Հետո նա ինձ ասաց, որ ես գնամ ժողկոմսովետի նիստերի զահլիճ և ընկեր Կրժիժանովսկուն խնդրեմ պա Լենինի բնակարան: Դրանից հետո Վլադիմիր Իլյիչը զնաց տուն:

Հաճախ է ինձ պատահել տեսնել, թե Վ. Ի. Լենինը ինչպես է աշխատում իր աշխատասենյակում: Նա ձգտում էր լրիվ ու արդյունավետ օգտագործել ժամանակը: Խիստ սահմանված կարգով էր ընդունում այցելուներին, աշխատելով խորթ թափանցել նրանց խնդրանքի մեջ, լավ օգնել նրանց, պարտիական և սովետական աշխատողներին տալիս էր արժեքավոր խորհուրդներ և հստակ ցուցումներ, հեռախոսով կարճ էր խոսում, շատ էր գրում ու կարդում:

Ժողկոմսովետի և Վ. Ի. Լենինի քարտուղարության աշխատակիցները աշխատում էին նիստերի դահլիճում: Իսկ ես այնտեղ նույնիսկ գրասենդան չունեի:

Հաճախ էի պրագարանային գործերով զբաղվում Լենինի աշխատասենյակում: Լինում էր, որ աշխատում էի ու նայում Վլադիմիր Իլյիչին: Իսկ նա արագ, արագ գրում էր կամ, ար-



մունկներով հենվելով սեղանին, ինչ-որ բան էր մտաժուռ։ Նա շատ էր տարվում իր աշխատանքով, դրա մեջ գտնելով մեծագույն բավականություն։

Աշխատասիրությունը, դորժի նկատմամբ խոր հետադուտական մոտեցումը — ահա այն դժբեր, որոնք հատուկ էին Լենինին։ Զբաղված լինելով մեծ աշխատանքով, նա նյարդայնություն չէր դրսևորում, հանգիստ էր, բշխոս, սիրալիր։

Մի անգամ ես գրեք էի դասավորում Վլադիմիր Իլյիչի աշխատասենյակում, նա ներս մտավ Ա. Վ. Լեժավայի հետ։ Ես պատրաստվում էի դուրս գալ, իսկ Լենինն ասում է.

— Մի ղնացեք, դուք մեզ չեք խանգարում։

Վլադիմիր Իլյիչը ալցեղուն նստեցրեց կաշվե բազկաթոռին, հարցրեց առողջության մասին, իսկ հետո սկսեց գործարար վրույցը։

Մի այլ անգամ, երբ Լենինի մոտ եկավ պարտիական աշխատողներից ինչ-որ մեկը, նա ինձ ասաց.

— Տասնհինգ րուպեից հետո դուք նորից կարող եք այստեղ աշխատել։

Ալցեղունների ընդունելության ժամանակ ես սովորաբար աշխատասենյակից դուրս էի գալիս։

Ինչպես հայտնի է, Վլադիմիր Իլյիչը խիստ պահպանում էր օրվա ռեժիմը։ Ուղիղ ժամը շորսին նա գնում էր ճաշելու, հետո մի փոքր հանգստանում էր, իսկ երեկոյան ժամը վեցի մոտ վերադառնում էր և աշխատում մինչև ուշ գիշեր։ Երեկոյան, մնալով մենակ, նա հանգցնում էր ջահը և վառում սեղանի լուսամփոփը։ Տուն գնալիս անպայման հանգցնում էր լույսը։

Պետական միջոցների խստագույն խնայողությունը, հաշ-

վենկատ վերաբերմունքը ժողովրդական բարիքների և այն ամենի նկատմամբ, ինչը ստեղծված էր բանվորների ու գյուղացիների աշխատանքով, Լենինի մոտ դրսևորվում էին միշտ՝ թե՛ մեծ և թե՛ փոքր հարցերում: Այդ միտքը հաստատելու համար ուղում եմ բերել Ֆ. է. Ջերժինսկուն պրած նրա երկատուից հետևյալ տեղը.

«Ընկ. Ջերժինսկի: Ինձ մոտ լուրջ երկյուղ է առաջանում. արդյոք «չափազանցում» չկա իմ գարաթի ծախսերի հարցում, որը վերցված է, կարծեմ, Պետքաղվարչության խիստ հսկողության տակ: Ժամանակը չէ՞ արդյոք «սեղմել» սույն հիմնարկը և կրճատել դրա վրա կատարվող ծախսերը: Բոլորը կատարվող ծախսերը սեղմում են:

Խնդրում եմ Ջեդ սույնը ցույց տալ «տեղակալներին»՝ Ռիկովին ու Ցյուրուպային, և հանձնարարել հուսալի, խելացի ու դիտակ մի մարդուն՝ ստուգելու, թե արդյոք չի՞ կարելի կրճատել ու սեղմել ծախսերն այդ հոգվածով և շատ կրճատել:

19/5 [1922]

Լենին»<sup>1</sup>:

Վլադիմիր Իլյիչը հատկապես ուշադիր էր մարդկանց՝ թե՛ «մերձավորների» և թե՛ «օտարների» նկատմամբ: Այդ մասին լավ է ասել Ս. Մ. Կիրովը. «Ավելի սրտացավ մարդ մեզանից ոչ ոք չի տեսել: Նա բազմակողմանի էր՝ նա գտնում էր մեզներից յուրաքանչյուրի սրտի բանալին»<sup>2</sup>:

Վ. Ի. Լենինը արտակարգ հոգատարությամբ էր վերաբերվում իր հավատարիմ բարեկամին, կնոջը՝ Նադեժդա

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXXVI, էջ 487—488:

<sup>2</sup> «Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին», մ. 2, էջ 57:

Կոնստանտինովնա Կրուպսկայային, Երբեմն Նադեժդա Կոնստանտինովնան ինձ խնդրում էր դառնա՞յիրեն անհրաժեշտ գրականությունը: Վլադիմիր Իլյիչը հետո հարցնում էր, մի տեսակ ինձ ստուգելով, թե արդյոք հաջողվել է կատարելու Նադեժդա Կոնստանտինովնայի խնդրանքը: Ստանալով դրական պատասխան, նա դո՛հ էր մնում ու շնորհակալություն հայտնում:

Երբեմն, Լուսժոդկոմատից տուն վերադառնալիս, Նադեժդա Կոնստանտինովնան նայում էր Լենինի աշխատասենյակից ներս: Դրանով նա ցույց էր տալիս, որ վերադարձել է աշխատանքից և ցանկանում է իմանալ, թե արդյո՞ք Վլադիմիր Իլյիչը ազատ է և կարո՞ղ է դնալ ճաշելու Պատահում էր, որ ներս էլ էր մտնում: Դիմելով ինձ, հարցնում էր, թե արդյոք իր համար զրքեր ճարել եմ:

Ես արդեն պատմեցի այն մասին, թե ինչպես Լենինը, հսկայական նշանակություն տալով Ռուսաստանի էլեկտրիֆիկացիայի պետական պլանի պրոպագանդմանը, այդ գործում ներգրավեց պարտիական խոշոր գործիչ և հրապարակախոս Ի. Ի. Սկվորցով-Ստեպանովին, նրան հանձնարարելով ԳՕէլՌՈ-ի պլանի մասին հանրամատչելի բրոշյուր գրելու:

Այժմ ավելացնեմ, թե Վլադիմիր Իլյիչը ինչ հուղիչ հոգսատարություն էր ցուցաբերում այդ մարդու նկատմամբ, նրա առողջության մասին, նրա ստեղծագործական աշխատանքների համար բարենպաստ պայմաններ ստեղծելով:

1921 թվականի հունիսին Վ. Ի. Լենինը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի կազմակերպի ընկ. Սկվորցով-Ստեպանովի ամառային հանդիսոր Մոսկվայի մոտերքում:

Այդ նույն թվականի հոկտեմբերի 21-ին Վլադիմիր Իլյի-  
չը ՌԿ (Բ)Պ Կենտկոմի Կազմբյուրոյին գրում է.

«Նկատի ունենալով Իվ. Իվ. Սկվորցովի (Ստեպանովի)  
խնդրանքը, խնդրում եմ փոխել նրա գործուղումը և այդ  
գործուղման փոխարեն նրան ուղարկել Մերձմուսկովյան սով-  
խոդներին մեկը՝ կաթի. որպեսզի նա մեկ-մեկ ու կես ամ-  
սում, որևէ այլ գործով չզբաղվելով, ավարտի իր ձեռնարկած  
գրական աշխատանքը...

Լենին»<sup>1</sup>

Երբ Ի. Ի. Ստեպանովի «ՌՍՖՍՌ էլեկտրիֆիկացիան հա-  
մաշխարհային տնտեսական փուլի կապակցությամբ» գիրքը  
ավարտվեց, Վ. Ի. Լենինը նրան գրեց. «Ողջունում ու շնոր-  
հավորում եմ հիանալի հաջողության համար»<sup>2</sup> և Կենտկոմին  
խնդրեց գրքի հեղինակին հանգիստ տալ «և հստակարարել  
Մոսկվայի կոմիտեին, որ նրան աշխատանքներ չտա... որով-  
հետև նա բացարձակապես հանգստի կարիք ունի»<sup>3</sup>:

Ուզում եմ ընդգծել, որ Վլադիմիր Իլյիչը ուշագիր, իսկա-  
կան մարդկային վերաբերմունք էր դրսևորում բոլոր աշխա-  
տավորների նկատմամբ: Նա ապրում էր նրանց հոգսերով,  
նրանց ուրախություններով ուրախանում, նրանց վշտերով  
տխրում: Մարդկանց նկատմամբ Լենինյան սերը անկեղծ էր  
ու սրտապին: Աշխատավոր մարդուն նա վերաբերվում էր ինչ-  
պես ընկերը ընկերոջը, ինչպես հավասարը հավասարին:

Վլադիմիր Իլյիչի բարությունն ու հոգատարությունը ևս  
ինքս էլ միշտ զգում էի:

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXXV, էջ 284:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 659:

<sup>3</sup> Լենինյան ժողովածու XXXV, էջ 341:

Մի անգամ, երբ ևս հիվանդացել էի, Վլադիմիր Իլյիչը, իմանալով այդ մասին, հետաքրքրվում է. «Ի՞նչ է պատահել նրա հետ, արդյոք նա որևէ բանի կարիք չունի»: Նա խնդրում է Լ. Ա. Ֆոտիևային հոգ տանել իմ մասին:

Իմ հիվանդության ժամանակ Լենինին հարկավոր է լինում ինչ-որ մի գիրք: Նրա խնդրանքով Ժողկոմսովետի քարտուղարությունից ղանգահարեցին ինձ՝ տուն: Ես ասացի, որ գիրքը գտնվում է այսինչ պահարանում, այսինչ գրադարակի վրա: Երբ այդ մասին հաղորդում են Վլադիմիր Իլյիչին, նա ասում է. «Զարմանալի է, թե նա ինչքան լավ է հիշում, թե գրադարանում որտեղ ինչ է գտնվում»:

Առողջանալուց հետո ևս վերադարձա Ժողկոմսովետ: Մեզ մոտ քարտուղարություն եկավ Նադեժդա Կոնստանտինովնան և ասաց.

— Իմանալով, որ իր գրադարանավարուհին վերադարձել է աշխատանքի, Վլադիմիր Իլյիչը ուրախացավ. այժմ, ասում է, նա ինձ լավ, հետաքրքիր գիրք կտա:

1922 թվականի փետրվարին ևս Պետհրատից դուրս եկա և գրանցվեցի Կենտկոմի ապարատի հաստիքում: Լենինն այդ մասին չգիտեր: Մի անգամ ինձ հարկ եղավ ինչ-որ հարցի վերաբերյալ հեռախոսով խոսել Լենինի հետ:

— Իսկ ո՞վ է ինձ հետ խոսում,— հարցրեց նա:

Պատասխանում եմ, որ այդ ևս եմ, Մանուչարյանը:

— Մի՞թե դուք աշխատում եք Կենտկոմի ապարատում: Իսկ ի՞նչ է լինելու գրադարանը,— անհանգստացավ Վլադիմիր Իլյիչը:

Ես ասացի, որ աշխատելու եմ նաև գրադարանում: Լենինը վշտացած նկատեց.



— Կարծում եմ, որ ձեզ համար այդպիսի համատեղումը գովար կլինի:

Շուտով Վլադիմիր Իլյիչի երկյուղը հաստատվեց: Կենտկոմի ապարատում հարկ էր լինում շատ աշխատել, հաճախ մնալ մինչև ուշ գիշեր: Գործը հասավ նրան, որ մի քանի երեկո շարունակ չէի կարողանում գնալ Ժողկոմսովետ՝ գրադարանավարուհու պարտականությունները կատարելու համար: Իլյիչը այդ նկատում է և է. Ա. Ֆոտիևային ասում. «Հաղորդեցիք գրադարանավարուհուն, որ ես նրա վրա կրարկանամ»: Երբ նա ինձ հաղորդեց այդ մասին, ես շատ վշտացա:

Շուտով, 1922 թվականի հոկտեմբերին, Կենտկոմի կազմբյուրոյի որոշմամբ ինձ թողեցին աշխատելու միայն Վ. Ի. Լենինի գրադարանում:

Բերեմ Լենինի ղգաջուն ու հողատար լինելու վերաբերյալ մի օրինակ ես:

1922 թվականի հունվարին Կենտկոմում քննարկվում էր Զենովայի կոնֆերանսին սովետական պատվիրակության կազմի հարցը: Վ. Վ. Վորովսկին հաստատվեց պատվիրակության գլխավոր քարտուղար: Նա գրավոր խնդրանքով դիմեց Վլադիմիր Իլյիչին, որպեսզի ինձ գործուղեն այդ պատվիրակության հետ, պատճառաբանելով, որ ես գիտեմ Խառլիան և իտալերեն լեզուն:

1922 թվականի հունվարի 28-ին Վ. Ի. Լենինին հասցեագրած երկաթուղում Վորովսկին գրում է.

«Թանկազին Վլադիմիր Իլյիչ, Ձեր հայրական ուշադրություներն եմ հրավիրում Շուշանիկա Մանուշարյանցի՝ Ձեր գրադարանավարուհու վրա... Երաշխավորում եմ նրան վերցնել

Ժողկոմսովետի քարտուղարություն. կունենաք նվիրված, հուսալի և շատ խելացի աշխատակից: Բայց դրանից առաջ օգտակար կլինե՞ր նրան գործուղել Ջենովայի կոնֆերանս (գիտի Իտալիան և Իտալերեն լեզուն)...»:

Լենինը Վորովսկուն պատասխանում է, որ եթե դա հանուն գործի է, չի առարկում:

Հաջորդ օրը Վլադիմիր Իլյիչը ինձ հարցրեց.

— Դուք Իտալիա՞ն եք գնում:

Ես կռահեցի, թե խոսքը ինչին է վերաբերում, որովհետև Վորովսկին ինձ պատմել էր Լենինին ուղարկած իր խնդրանքի մասին, և մտածմունքի մեջ ընկա... Գուցե իմ գրադարանային աշխատանքն այստեղ այնքա՞ն էլ պետք չէ:

Իսկ Վլադիմիր Իլյիչը շարունակեց.

— Գնացե՛ք, ուժեղ սնվեցե՛ք, թարմ ուժեր հավաքե՛ք, գնացե՛ք ոչ երկար ժամանակով:

— Վլադիմիր Իլյիչ,— ասացի ևս,— պետք է գնալ մեկ-երկու տարով, կարճ ժամանակով չեն վերցնում:

Նա ժպտաց:

— Իսկ մենք կսակարկենք, գուցե վերցնեն նաև մի քանի ամսով:

Ինձ որքան էլ հրապուրիչ թվար Իտալիա մեկնելը, բայց Լենինի մոտ աշխատելն ամեն ինչից թանկ էր, և ես չհամաձայնվեցի Վորովսկու առաջարկին:

Լենինի մասին թեման անսպառ է: Միանգամայն իրավացի էր Ա. Վ. Լոնաչարսկին՝ իր հիշողություններում Վ. Ի. Լենինին անվանելով «վիթխարի երևույթ»: Աշխատավորության առաջնորդի մասին շատ է ասվել ու գրվել: Բայց հիշողության մեջ հայտնվում են այնպիսի նոր փաստեր, որոնք

որպես բնորոշ գծեր լրացնում են այդ հիանալի մարդու, պարտիայի գործի համար անհաշտ մարտիկի կերպարը:

Վլադիմիր Իլյիչի խնդրանքով ևս ստանում էի նրա աշխատավարձը, և նրա հանձնարարությանմբ երբեմն մոռնում էի պարտիական ու արհմիութենական անդամավճարները: Փողերը և անդամավճարների մոռածման վերաբերյալ գրությունը սովորաբար թողնում էի նրա գրասենյանին: Դրանք ստանալով, նա ամեն անգամ հարցնում էր. «Իսկ պարտիական անդամավճարը, նշանակում է, մոռվա՞ծ է»:

Վլադիմիր Իլյիչը ղգայուն և ուշադիր էր մարդկանց նըկատմամբ, բայց միաժամանակ շատ խիստ էր ու պահանջկոտ հանուն գործի շահերի:

Հիշում եմ Վ. Ի. Լենինի այն երկտողը պետական հրատարակչությանը, որ ստացվեց 1919 թվականի հոկտեմբերին: Այն մեզ՝ հրատարակչության աշխատողներին, հուզեց և ստիպեց կարգի գալ, ավելի լուրջ վերաբերվել մեր պարտականություններին:

1919 թվականի մարտի սկզբին Մոսկվայում սեղի ունեցավ Կոմունիստական Ինտերնացիոնալի I կոնգրեսը: Այն III, Կոմունիստական Ինտերնացիոնալ ստեղծելու մասին պատմական որոշում ընդունեց, հավանություն տվեց բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին Լենինի թեզիսներին, հաստատեց Կոմինտերնի պլատֆորմը, և մանիֆեստով դիմեց ամբողջ աշխարհի պրոլետարներին: Պետհրատը լույս ընծայեց մի բրոշյուր՝ Կոմինտերնի կոնգրեսի նյութերով, բայց գրքույկն ուներ խոշոր, միանգամայն անթույլատրելի վրիպումներ:

«նայելով բրոշյուրը...», — գրել էր Վլադիմիր Իլյիչը Պետ-  
հրատ Վ. Վ. Վորովսկուն, — ես խիստ նկատողություն եմ հայ-  
տարարում նման հրատարակության համար և պահանջում  
եմ, որպեսզի պետական հրատարակչության կոլեգիայի բո-  
լոր անդամները կարդան իմ ներկա նամակը և մշակեն երաշ-  
խիքի լուրջ միջոցներ, որպեսզի այդպիսի խայտառակություն  
չկրկնվի:

Բրոշյուրը հրատարակված է զգվելի ձևով: Դա ինչ-որ աղ-  
տուտություն է: Զկա ցանկ: Ինչ-որ տխմարի կամ փնթիի, ակ-  
ներևորեն, անգրագետի մեկը, կարծես թե հարբած վիճակում,  
հավաքել է բոլոր «նյութերը», հոգվածները, ճառերը և ան-  
կարգ կերպով տպագրել:

Ո՛չ առաջաբան, ո՛չ արձանագրություններ, ո՛չ որոշում-  
ների ստույգ տեքստ, ո՛չ որոշումների անջատում ճառերից,  
հոգվածներից, թղթակցություններից, բոլորովին ոչինչ: Զլրս-  
ված խայտառակություն է:

Պատմական մեծ իրադարձությունը արատավորվել է նը-  
ման բրոշյուրով:

Պահանջում եմ՝ 1) Ուղղել կպցնելու միջոցով: (Մեղա-  
վորներին բանտ նստեցնել և ստիպել փակցնել բոլոր օրի-  
նակներում):

Հաղորդել ինձ՝

2 ա) Քանի՞ օրինակ է տպագրված:

2 բ) Քանի՞սն է տարածված:

3) Վերահրատարակություն պատշաճ ձևով: Սրբագրու-  
թյունը ցույց տալ ինձ:

4) Այնպիսի կանոնների սահմանում, որպեսզի լույս ըն-  
ծալվող ամեն մի բանի համար պատասխանատու լինի որո-

շակի անձ (սլահել սլատասխանատու անձանց զբանցումնե-  
րի դիրք):

5) Կարգավորման այլ միջոցներ. այդպիսիք մշակել և  
ուղարկել ինձ:

Ժողովրդական կոմիսարների սովետի  
նախագահ՝ Վ. Ուլյանով (Լենին)»<sup>1</sup>:

Վլադիմիր Իլյիչի մոտ զրադարանում ավելի քան երեք  
տարի աշխատելիս ես բազմիցս համոզվել եմ, որ Լենինի  
«զայրույթը», նրա «խիստ» և «բարկացկոտ» խոսքերը առաջ  
էին գալիս միայն ծայրահեղ դեպքերում, երբ պահանջում էին  
գործի շահերը: Լենինի խստությունը արագ փոխվում էր նրա  
սովորական բարեհամբույրությամբ, բարեկամական ժպի-  
տով, ուրախ տրամադրությամբ: Երևում էր, որ նա վատ էր  
զգում իրեն, երբ հարկադրված էր լինում դիմել խիստ մի-  
ջոցների:

Լենինյան այդ գծերը շատ լավ է նկատել Ա. Վ. Լունա-  
չարսկին. «Նրա զայրույթը,— գրել է Անատոլի Վասիլևիչը  
Լենինի մասին,— նույնպես արտասովոր հաճելի է: Նա միշտ  
իշխում է իր զայրույթի վրա... Ես շատ անգամ եմ նշել ար-  
տաքին այդ ալեկոծումը, այդ բարկացկոտ խոսքերը, թունոտ  
հեգեանքի այդ նետերը, և կողքին նույն ծիծաղն աչքերում  
և բարկության այդ ամբողջ տեսարանը մեկ րոպեում վերջաց-  
նելու ընդունակությունը, տեսարան, որը կարծես թե ինքը՝  
Լենինն է ստեղծում, որովհետև այդպես է հարկավոր: Ներք-  
նապես նա մնում է ոչ միայն հանգիստ, այլև ուրախ»<sup>2</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35 էջ 464—465:

<sup>2</sup> Ա. Լունաչարսկի, Պատմվածքներ Լենինի մասին, Պետքաղհրատ, 1959,  
էջ 5 (ռուսերեն):



Լենինը կարողանում էր հասկանալ կատակը, սիրում էր նաև կատակել:

Իմ աշխատանքի առաջին օրերին Վլադիմիր Իլյիչը Լ. Ս. Ֆոտիևային հարցրել է.

— Ի՞նչ է իմ դրադարանաձարուհու անունը:

Նա պատասխանել է.

— Շուշա, Շուշանիկա:

Գրանից քիչ ժամանակ անց, իր աշխատասենյակից նիստերի դահլիճ գնալիս, Լենինը մոտեցավ Ֆոտիևայի գրասեղանին և իմ ներկայությամբ ասաց.

— Ես եղել եմ արսորում, Շուշենսկում, այնտեղ կար Շուշա գետ, իսկ Շուշանիկան, երեխ, նրա վտակն է,— նա նայեց ինձ և ուրախ ծիծաղեց, իսկ ես շփոթվեցի և չգիտեի, թե ինչ պատասխանեմ այդ կատակին:

Գրադարան մտնող նոր գրականությունը, որպես կանոն, դարսվում էր Լենինի կարիներտում վառարանի կողքին դրված պահարանի ամենաներքևի արկղում: Վլադիմիր Իլյիչը քանիցս այն աչքի է անցկացրել պաղած վիճակում:

Մի անգամ ստացվեց շատ մեծ քանակությամբ գրականություն: Մի երեկո հաստակին փռելով գրքերն ու ժուռնալները, ես սկսեցի ջոկել դրանք, շկարծելով, որ Վլադիմիր Իլյիչը այդքան ուշ կարող է մտնել իր աշխատասենյակը: Հանկարծ բացվեց դուռը և երևաց Լենինը: Նա անցավ սեղանի մյուս կողմից և, ինձ տեսնելով հատակին նստած, ասաց.

— Քիչ էր մնում, որ կպչեի ձեզ:

Ինձ թվաց, թե Վլադիմիր Իլյիչը մի փոքր շփոթվեց. ուսերից կախված էին հրացան և որսորդական պայուսակ: Ես

սկսեցի հատակից արագորեն հավաքել գրքերը, իսկ նա ինձ ասում է.

— Մի գնացեք, ես հիմա մեկնում եմ քաղաքից դուրս:

Վ. Ի. Լենինը զանգահարեց գարաժ՝ շոֆեր Ս. Կ. Գիլին և խնդրեց մեքենա: (Անձնական գործով Վլադիմիր Իլյիչը միշտ ինքն էր զանգահարում գարաժ):

Հիշում եմ նաև այսպիսի ծիծաղաշարժ մի փաստ: Քարտուղարության աշխատակիցներից մեկին՝ Նասաշա Լեպկաշինսկայաին, ինչ-որ մեկը հեռախոսով զանգահարեց և խնդրեց, թե արդյոք ինքը կարո՞ղ է խոսել Լենինի հետ: Նատաշան, ինչպես սովորաբար նման դեպքերում, պատասխանում է, որ հիմա կիմանա, թե արդյոք Վլադիմիր Իլյիչը իր տեղում է: Նա մտնում է աշխատասենյակ: Լենինը կենտրոնացած աշխատում էր գրասենյակի առջև նստած և, չկտրվելով գործից, խնդրեց ասել, որ նա այստեղ չէ:

Վերադառնալով նիստերի դահլիճ, Նատաշան վերցնում է հեռախոսափողը և պատասխանում.

— Վլադիմիր Իլյիչը խնդրեց ասել, որ նա այստեղ չէ:

Հասկանալով, թե ինչ արեց, Նատաշան հուզվեց և շփոթվածությունից լսափողը դրեց ոչ թե ասպարատի վրա, այլ կողքին: Այդ ժամանակ ես նրանից ոչ հեռու գրքերն էի վերադասավորում և, տեսնելով դռնատված Նատաշային, հարցրեցի. «Ի՞նչ է պատահել»: Նրա պատմեց, ես խորհուրդ տվեցի գնալ և ամեն ինչ պատմել Վլադիմիր Իլյիչին: Նատաշան երկշտորեն մտավ Լենինի աշխատասենյակը... Վերադարձավ և ասում է.

— Կանգնել եմ Վլադիմիր Իլյիչի առջև և ձգում եմ թաշկինակիս պոչերը: Նա բարձրացրեց գլուխը և, ինձ տեսնելով՝

գունատված ու շփոթված, հարցնում է. «Ի՞նչ է տեղի ունեցել: Ինչո՞ւ եք այդպես շփոթվել»: Ես նրան բոլորը պատմեցի, և նա սկսեց այնպես քրքջալ, որ երկար ժամանակ չէր կարողանում հանգստանալ, և հետո ինձ ասաց. «Ուշինչ, ևս գիտեմ այդ ընկերոջը և երեկոյան ինքս կվանգահարեմ նրան: Մի հուզվեք: Գնացեք աշխատելու»:

Այդ դեպքը մեկ անգամ ևս ասում է Լենինի հիանալի հոգու մասին: Եվ այն հիանալի էր, որովհետև իսկական մարդկային էր բառիս բարձրագույն իմաստով: Մտածելով նրա մասին, հիշելով նրան կենդանի վիճակում այնպես, ինչպես նա եղել է, ուզում եմ բերել ն. Կ. Կրուպսկայայի այն հիանալի խոսքերը, որ նա արտասանել է 1924 թվականին կոմերիտմիության VI համագումարում, «Պետք չէ Լենինին սրբապատկեր դարձնել: Հարկավոր է, որ նրա գաղափարները ծառայեն որպես դործողության ղեկավարություն: Այդ միտքը, ինձ թվում է, պետք է լինի ղեկավար գաղափար այն կոմերիտականների համար, ովքեր ուզում են դառնալ լենինյաններ»<sup>1</sup>:

Բոլոր նրանք, ովքեր անձամբ ճանաչում են Վ. Ի. Լենինին, նշում են նրա մատչելի լինելը և համեստությունը: Այդպիսին էլ նա մնացել է իմ հիշողության մեջ: Վլադիմիր Իլյիչը տանել չէր կարող գովաբանությունը, շաղակրատանքը, նրան նողկանք էր պատճառում իրեն ուրիշներից վեր դասելու, նրա հասունիկ դերը ընդգծելու ամեն մի փորձը: Նա իսկական դեմոկրատ էր և թե՛ իր ու թե՛ ուրիշների համար անհիթեթու-

---

<sup>1</sup> Ն. Կ. Կրուպսկայա—երիտասարդության կոմունիստական դաստիարակության հարցերը: Պետրադհրատ, 1959, էջ 19 (ռուս.)

թյուն, ծիծաղելի, վիրավորական ու ստորացուցիչ էր համարում իր անձի սոմեն մի փաթաթումը ուրիշին: Վտանգավոր վիրավորվելուց հետո առողջանալու օրերին Վլադիմիր Իլյիչը իր մոտ կանչեց մերձավոր ընկերներին և նրանց ասաց.

«Մեծագույն դժգոհությամբ նկատում եմ, որ իմ անձնավորությունը սկսում են մեծարել: Դա ցավալի է ու վնասակար: Մենք բոլորս դիտենք, որ բանը անձնավորության մեջ չէ: Ինձ համար անհամար է արգելել նման կարգի երևույթները: Դրա մեջ ևս ինչ-որ ծիծաղելի ու հավակնոտ բան կլինի: Բայց դուք սկսեք է տակից արգելքներ դնեք այդ ամբողջ պատմության վրա»<sup>1</sup>:

Ժողովոմսովետի և ոչ մի սենյակում նա թույլ չէր տալիս կախիլու իր դիմանկարները: Երբ 1920 թվականի մայիսի 1-ին Լենինը մեզ՝ ԺԿՍ-ի աշխատակիցներին, բանվորների ու կարմիրբանակայինների հետ մեկտեղ մասնակցեց Ցարզանգի մոտ եղած շաբաթօրյակին և ինչ-որ լուսանկարիչ փորձում էր նկարել, Վլադիմիր Իլյիչն ասաց, որ ինքը եկել է ոչ թե նկարվելու, այլ աշխատելու, և անմիջապես հեռացավ լուսանկարչից:

Վ. Ի. Լենինը շատ ու լարված էր աշխատում, բայց աշխատանքից ազատ ժամանակ սիրում էր և կարողանում էր լավ հանգստանալ: Նա զնում էր քաղաքից դուրս, որսորդության, հազվագեղ լսում էր երաժշտություն և հաճախում թատրոններ:

<sup>1</sup> «Լենինը որպես ընկեր, մարդ»: Պետրազհրատ, 1963, էջ 179 (ռուս.):

Մի անգամ Զիմինի թատրոնում (Մեծ թատրոնի ֆիլիալը) համերգ էին տալիս Բեթհովենի ստեղծագործություններից: Ընդմիջման ժամանակ ինձ մոտեցավ Ա. Մ. Գորկին ու ասաց, որ համերգին ներկա է լենինը, նա նստած է դիրեկցիայի օթյակում, բայց խնդրեց այդ մասին ոչ ոքի չասել:

Մեկ ուրիշ անգամ ես Վ. Ի. Լենինին և Ա. Մ. Գորկուն միասին տեսա Միությանների տան համերգին: Հանդես եկան շատ արտիստներ: Վլադիմիր Իլյիչը հաճախ դիմում էր Ալեքսեյ Մաքսիմովիչին և ուրախ, վարակիչ ծիծաղում...

Վ. Ի. Լենինը ընծայական մակագրություններով շատ գրքեր էր ստանում: Ահա դրանցից մի քանիսը:

Հայտնի փիլիսոփա և սոցիոլոգ Բերտրան Ռասսելը (Անգլիա) 1920 թվականին Վլադիմիր Իլյիչին նվիրել է երկու գիրք: Դրանցից յուրաքանչյուրի վրա նա գրել է. «Ընկեր լենինին՝ հեղինակից»:

Լենինի նկատմամբ խոր հարգանք է արտահայտել անդլիական գրող Բեռնարդ Շոուն: Նա լենինին է ուղարկել իր «Ետ դեպի Մաֆուսաիլը» գիրքը այսպիսի մակագրությամբ. «Նիկոլայ Լենինին, Նվրոսայի միակ պետական գործչին, որը օժտված է այնպիսի տաղանդով, բնավորությամբ ու գիտելիքներով, որոնք համապատասխանում են նրա պատասխանատու դիրքին... 16 հունիսի, 1921»:

Հուգոյի խոսքեր է գրել Կլարա Ցետկինը իր «Մենք դատապարտում ենք» գրքի վրա. «Երկու լավագույն մարտիկ-կոմունիստներին և մարդկանց՝ ընկեր Լենինին և ընկեր Լենին-Կրուպսկայային: Խորին սիրով ու հարգանքով: Կլարա Ցետկին»:

Գեորգի Դիմիտրովը Բուլղարական կոմունիստական պար-



տիայի Կենտկոմի անունից Վլադիմիր Իլյիչին է նվիրում Բուլղարա-Ֆրանսիական և Ֆրանս-բուլղարական բառարանի առաջին մասը: Նրա վրա արված է հետևյալ մակագրությունը. «Մեր սիրելի ուսուցիչ և համաշխարհային պրոլետարական ռեվոլյուցիայի անփոխարինելի առաջնորդ ընկեր Լենինին Քուլդարական] Կոմունիստական] պարտիայի Կենտկոմից: Կենտկոմի փոխարեն՝ Գ. Դիմիտրով: Մոսկվա, 5. III. 1921»:

Ա. Վ. Լոնաշարսկին «Ժողովրդական կրթության պրոբլեմները» գրքի, որը նվիրված է «Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայային (Ուլանովային)», անվանաթերթի վրա գրել է. «Խանկազին Վլադիմիր Իլյիչին՝ շուտափույթ առողջանալու ցանկություններով»:

Վ. Ի. Լենինին նվիրելով իր «Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Ռեսպուբլիկայի զինված ուժերի միլիցիական կազմակերպության մասին» բրոշյուրը, Ն. Ի. Պոդվոյսկին գրա՝ վրա արել է հետևյալ մակագրությունը. «Իմ լիանկագին ուսուցիչ Վլադիմիր Իլյիչին: Ն. Պոդվոյսկի»:

Անկեղծ սիրով ու հարգանքով են իրենց աշխատանքները Վ. Ի. Լենինին նվիրում բանվորները «Պետական նորոգման տանյան կոմբինացված ձեռնարկություն» ժողովածուի (Յուզովկա, 1921) կազմի երկրորդ էջի վրա մենք կարդում ենք. «Խանկազին ընկեր Վ. Ի. Լենինին՝ Յուզովկայի մետաղագործներից»:

Տպարանային մակագրություն ունի նաև «Զերեմխովյան հնոցարանը» [Զերեմխովո (Իրկուտսկի մարզ), 1921] բյուլետենի շաղկի վրա. «Մոսկվա: Ժողովրդական կոմիսարների

ւովետի նախագահ Վլադիմիր Իլյիչ Ընկ. Լենինին՝ կոլեկտիվ աշխատանքի մասնակիցներին»:

«Դինամո»: Ռեուլուցիոն պայքարի 25 տարին» գրքի հինգերորդ էջի վրա կա սուլարանական մակագրություն. «Մեր սիրելի ուսուցչին և առաջնորդին, Վլադիմիր Իլյիչ Լենինին են նվիրում իրենց կյանքի ու պայքարի էջերը «Դինամո» գործարանի բանվորները»:

Պատանի պիոներների «Բարաբան» ժուռնալի (1923, № 5) շապկի վրա կարգում ենք. «Թանկագին Իլյիչին՝ Զամոսկվորեչյեի պիոներներից: 19/1—24՝ ի հիշատակ «Մենք գնում ենք հերթափոխի» շրջանային ցուցահանդեսի բացմանը»:

Աշխատելով անմիջականորեն Լենինի ղեկավարության ներքո, ես ինչ-որ չէի զգում նրա մեծությունը: Բայց հրե հարկ էր լինում մասնակցել պարտիայի համագումարներին կամ այլ մեծ ժողովների, որտեղ ելույթ էր ունենում Վլադիմիր Իլյիչը, և տեսնել նրան ուղղված աշխատամիությունների խանդավառ ողջույնները, գիտակցում էի, թե որքան մեծ է այդ հասարակ մարդը, և միշտ խիստ հուզվում էի ուրախությամբ:

Այո՛, Լենինը մեծ է ու փառահեղ: Նա փառահեղ է իր ռեուլուցիոն գործերով, մեծ՝ դեպի ժողովրդական երջանկությունը տանող ուղին լուսավորող անմահ զազափարներով:

Մենք պետք է Վլադիմիր Իլյիչից սովորենք համեստություն, կոմունիզմի գործին անձնուրաց նվիրվածություն: Լենինաբար ապրել և լենինաբար պայքարել՝ ահա այն նշանաբանը, որը մեզ ոգևորում, օգնում է մեր կյանքը զուգակցելու հասարակական կյանքի հետ և այն լիովին տալու հանուն մարդկության առաջադիմության:

## ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Ժ**ողովմասովևտի և ԱՊԽ-ի քարտուղար Հիդիա Ալեքսանդրով-  
նա Ֆոտիեան մի բանի օգնականներ ունեւ: Դրանք էին  
Ն. Ս. Ալլիլուեան, Մ. Ա. Վոլոդիչեան, Մ. Ի. Գլյասերը, Ն. Ս.  
Հեղեշինսկայան, Ն. Կ. Մինինան և ուրիշներ: Կատարելով  
որոշակի աշխատանք (Ժողովմասովևտի և ԱՊԽ-ի նիստերի  
օրակարգերի կազմումը, նիստերի արձանագրությունների  
ձևակերպումը, որոշումների կատարման հսկողությունը և  
այլն), նրանք հերթով հերթադահում էին որպէս Հենինի քար-  
տուղարներ: 1922 թվականի վերջին հերթադահների ցուցա-  
կում մտցրին նաև ինձ:

Հերթադահը առավոտյան գալիս էր մշուաներից տվելի  
շուտ: Նա ստուգում էր, թե արդյոք Վլադիմիր Իլյիչի աշխա-  
տասենյակում ամեն ինչ կարգին է, ինչպիսին է օդի ջերմաս-  
տիճանը (այն 14 աստիճան տաքությունից բարձր չպետք է  
լիներ), արդյոք ստացվել են թարմ թերթերը, որտեղ են դըր-  
ված երեկվանները, լավ են աշխատում հեռախոսները:

Հերթադահ քարտուղարը գտնվում էր Ժողովմասովևտի  
նիստերի դահլիճում, երբ նիստեր չկային, իսկ նիստերի ժա-

մանակ՝ հարեան սենյակում: Վլադիմիր Իլյիչի կանչով կամ անհրաժեշտության դեպքում նրան ընթացիկ դորժների մասին հաղորդելու, ԺԿՍ-ի և ԱՊԽ-ի նիստերի արձանագրություններն ստորագրելու, անհրաժեշտ թղթեր հանձնելու համար ինքնին մոտ աշխատասենյակ էր մտնում իր դիա Ալեքսանդրովնան:

Ժողկոմսովետի որոշումները սովորաբար ձևակերպում էր ինքնը և գրի առնում Ֆոտիկան: Հետագայում այդ անում էր սղագրուհին: Հաճախ Վլադիմիր Իլյիչը արձանագրողին հարցնում էր. «Հասցրեցի՞ք գրել»: Համոզվելով, որ ամեն ինչ կարգին է, նա շարունակում էր վարել նիստը:

Երբ ներկաներից որեէ մեկը առաջարկում էր իր որոշումը, ինքնը արագորեն գնահատում էր այն և եթե գտնում լէր, որ այդ որոշումը նպատակահարմար է, ասլա տվյալ ընկերոջը խնդրում էր թելադրել այդ որոշումը:

Սղագրուհու գրած և Լ. Ա. Ֆոտիկայի ստուգած ԺԿՍ-ի որոշումը հանձնվում էր մեքենագրուհուն և նրա ձևակերպումից հետո, երբեմն տեղն ու տեղը նիստի ժամանակ, հանձնվում էր ում որ պետք է, կամ հասցեատիրոջն էր ուղարկվում հեծանվորդի՝ միջոցով: Այսպիսով, կառավարության նիստի արձանագրությունը կատարվում էր շափաղանց օպերատիվ:

Վ. Ի. ինքնին հերթապահ քարտուղարների աշխատանքները շատ էին: Նրանք կաղմում էին ինքնին մոտ ընդունելության ցանկացող ընկերների ցուցակը, նրան ղեկուցում էին

---

<sup>1</sup> Այն կարմիրքանակայինները, որոնք այդ ժամանակ հեծանվաներով առարում էին կառավարական փոստը:

այդ մասին, հետևում էին հաճախորդների ընդունելության կարգին, կատարում էին Վլադիմիր Իլյիչի հանձնարարությունները: Մեղ բուրբիս՝ ԺԿՍ-ի քարտուղարության աշխատողներին համար Լենինի անմիջական առաջադրանքների կատարումը շատ հաճելի էր և ուրախալի:

Լինում էր, որ Վլադիմիր Իլյիչն իր մոտ էր կանչում և ասում.

— Ընկեր, խնդրում եմ այս ծրարը ուղարկեք և որքան կարելի է արագ:

Սմեն անգամ, երբ ուղարկվում էր դադանի փոստ, նա հիշեցնում էր, որ անհրաժեշտ է ծրարը կարել և զմուռսով կնքել: Ժպտալով, սովորաբար հարցնում էր.

— Իսկ դուք այդ կարո՞ղ եք անել:

Հետո անպայման ավելացնում էր.

— Իմացեք, թե հիմա որտեղ է հասցեատերը, որպեսզի հեռանվորդը զուր տեղը չշարժարվի: Ուղարկեցեք անձնական ստորագրությամբ և անպայման ստուգեցեք, թե արդյոք ըստացվել է:

Խիստ պաշտոնի ծրարները Վլադիմիր Իլյիչը սոսնձում էր ինքը: Դրա համար նրա սեղանին դրված էր. սոսնձի շիշը՝ «թիկով»:

Մեկ անգամ հերթապահության ժամանակ Լենինը ինձ խնդրեց մի ժողովմասի կուլեգիայի անդամներին պահել ճեռախոսային հեռախոսի վրա: Իսկ չգիտեի, թե դա ինչպես հասկանալ, բայց չհարցրեցի՝ նրանից ժամանակ չխլելու համար: Իսկ քարտուղարությունում ինձ բացատրեցին, որ դա նշանակում է իմանալ, թե օրվա ընթացքում և երեկոյան



որաեղ են լինելու այդ ընկերները, որպեսզի ամեն բուպե հնարավոր լինի հեռախոսով կանչել Վլադիմիր Իլյիչի մոտ:

Վ. Ի. Լենինի աշխատանքային օրը շատ լարված էր. հրակայական քանակությամբ տարբեր տեսակի նյութերի, նոր գրքերի, ժուռնալների և թերթերի նայում, նամակների պատասխանում, հեռախոսով դործարար խոսակցությունների վարում, հաճախորդների ընդունում, հրապարակային ելույթներ, գիտա-տեսական աշխատանք և այլն: Վլադիմիր Իլյիչից մեծ էներգիա էին պահանջում ԺԿՍ-ի և ԱՊԽ-ի նիստերը, որոնք անձամբ էր վարում: Լենինը լսում էր զեկուցողներին, ինքն էր հանդես գալիս, հասցնում էր աչքի անցկացնել նյութերը, ստորագրում էր որոշումները, պատասխանում գրություններին:

Նիստերի ժամանակ խոսակցությունները խիստ արգելվում էին, բոլորն իրար հետ խոսում էին գրություններով միայն:

1922 թվականի հոկտեմբերի 24-ին Վլադիմիր Իլյիչը ԺԿՍ-ի և ԱՊԽ-ի նիստերին հերթապահող քարտուղարներին կարգադրում է.

«Հանձնարարում եմ ձեզ խստորեն հետևել, որ նիստերին մասնավոր խոսակցություններ չլինեն և խոսողներին ընդհատել:

ԺԿՍ-ի նախագահ

Վ. Ուլյանով (Լենին)»<sup>1</sup>:

Հիշում եմ 1922 թվականի նոյեմբերի 20-ի հերթապահությունը: Այդ օրը Վլադիմիր Իլյիչը ճառով հանդես եկավ

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXXV, էջ 355:

Մոսկվայի սովետի պլենումում, որը համատեղ նիստ էր տնում մայրաքաղաքի բոլոր շրջանային սովետների պլենումների հետ։ Նիստի գնալուց առաջ նա ինձ կանչեց իր մոտ աշխատասենյակ և հարցրեց.

— Դուք դեռ երկա՞ր կմնաք ժողովոմսովետում:

Պատասխանեցի, որ այսօր հերթադաս էմ և, իհարկե, երկար կմնամ:

— Մեկ ու կես ժամից հետո ես կվերադառնամ:— Եվ գնաց:

Քիչ էր մնում, որ ես նրան ասեի. «Արդյոք չի՞ կարելի, որ ես էլ գնամ Մոսսովետ։ Այնպես եմ ուզում լսել ձեր ճառը»:

Վլադիմիր Իլյիչն այդ ժամանակ արդեն իրեն այնքան էլ առողջ չէր զգում և հազվադեպ էր ելույթ ունենում:

Մոսսովետի նիստում նրա ճառը վերջին ելույթն փր ժողովրդի առջև։ Այն, ինչպես հայտնի է, ավարտվեց մարգարեական խոսքերով այն մասին, որ նոր հասարակության կառուցման խնդիրը մեր երկրի աշխատավորները հաջողությամբ կլուծեն, որ «նեպական Ռուսաստանը կդառնա սոցիալիստական Ռուսաստան»<sup>1</sup>:

1922 թվականի նոյեմբերից հերթադաս քարտուղարները հատուկ օրագիր էին պահում։ Այնտեղ շորս սչանակ կար. ամսաթիվը, հերթադասի ուղղանունը, հանձնարարությունը, նշումներ կատարման մասին։ Անվանաթերթի վրա գրված էր. «Խնդրվում է այս օրագրում գրանցել բոլոր հանձնարարությունները և հերթադասության ժամերին հղած բոլոր իրա-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 528:

դարձությունները՝ նշելով հանձնարարությունների կատարման մասին...»:

Օրագիրը սկսվում է 1922 թվականի նոյեմբերի 21-ից, այն օրվանից, երբ Վլադիմիր Իլյիչը, որը հիվանդութունից հետո աշխատանքի էր անցել 1922 թվականի հոկտեմբերի առաջին օրերին, առողջութունը նորից սկսեց վատանալ: Գրառումներն ընդհատվում են 1923 թվականի մարտի 6-ից: Այդ օրը Վ. Ի. Լենինը ծանր հիվանդացավ:

Օրագրի մեջ ևս արել եմ սուսը գրառում: Կարդում եմ ավելի քան 40 տարի առաջ գրվածը և հիշողությանս մեջ վեր են հառնում այն արդեն հեռավոր, բայց սրտին այնքան մոտ ժամանակների առանձին իրադարձությունները:

Առաջին գրառման մեջ, որն արված է 1922 թվականի նոյեմբերի 23-ի երեկոյան, ասված է.

«Ժամի 5-ն անց 40 րոպե: Վլադիմիր Իլյիչը աշխատում էնչակում էր: Հարցրեց Սկլյանսկուց սպասվող ծրարի և այն մասին, թե երբ պատրաստ կլինի Քաղցյուրոյի արձանագրությունը և այդ տեխնիկայես ինչպես է արվում: Ես հարցրեցի Սկլյանսկուն, որը խոստացավ ծրարն ուղարկել նոյեմբերի 24-ի առավոտյան:

Ժամը 6-ն անց 45 րոպե. ծրար Սսկունիկովին:

Ժամը 8-ն անց 5 րոպե. Վլադիմիր Իլյիչը ուզեց խոսել Ստալինի հետ, որը զբաղված էր Կենտրոնական կոմիտեի բարաուղարության նիստով: Վլադիմիր Իլյիչն ասաց. «Կա՛մ երեկոյան կա՛մ առավոտյան, իսկ հիմա անհանգստացնել չարժի...»:

Վլադիմիր Իլյիչն աչքի անցկացրեց բոլոր նոր գրքերը: Վլադիմիր Իլյիչին հանձնեցի Զինովկից ստացված ծրարը և

Ձախից ստացված նյութերը: Վլադիմիր Իլյիչը հարցրեց նիստի... Ժողովրդական կոմիսարների սովետի, օրակարգը, նամակ ավեց թարգմանելու ուսանողներից անգլերեն: Ժամի 10-ն անց 5 րոպե. Վլադիմիր Իլյիչը գնաց»<sup>1</sup>:

Նոյեմբերի 24-ի երեկոյան ես օրագրում կատարեցի հետևյալ գրառումը. «...քվեարկելու համար Քաղբյուրոյից Վլադիմիր Իլյիչին հանձնեցին Վրաստանի Կենտկոմի հայտարարության առթիվ հանձնաժողովի կազմի մասին հարցը Վլադիմիր Իլյիչը չքվեարկեց»<sup>2</sup>:

Բանն ահա թե ինչումն էր: Ռե(բ)Պ Անդրկովկասյան երկրային կոմիտեի, որին ղեկավարում էր Գ. Կ. Օրջոնիկիձեն, և Վրաստանի կոմպարտիայի Բ. Մդիվանու խմբի միջև 1922 թվականի վերջերին կոնֆլիկտ էր ծագել: 1922 թվականի նոյեմբերի 25-ին Ռե(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոն որոշում ընդունեց Վրաստան ուղարկել մի հանձնաժողով Ֆ. է. Ջերժինսկու գլխավորությամբ: Լենինն անհամբեր սպասում էր նրա վերադարձին, և երբ նա վերադարձավ, նրանից սկսվեց «վրացական հարցի» վերաբերյալ նյութերը Վլադիմիր Իլյիչը Լ. Ա. Ֆոտիևային, Ն. Պ. Գորբունովին և Մ. Ի. Գլյուսսերին հանձնարարեց ուսումնասիրել զրանք և ղեկուցել, ասելով, որ դա իրեն «հարկավոր է պարտիական համադրման համար»:

Փետրվարի 5-ին, ստուգելով, թե ինչպես է ընթանում վրացական հանձնաժողովի նյութերի ուսումնասիրումը, Վլադիմիր Իլյիչն ասաց, որ կարիքի գեպքում կարելի է «աշխա-

<sup>1</sup> «Վապրոսի խտորի ԿՊՍՍ», 1963, № 2, էջ 70—71:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 71:

տանքի մեջ ներգրավել Վոլոդիլչևին և Շուշանիկա Մանուշարյանցիին»<sup>1</sup>։

Ուզում եմ նորից նկատել, որ պետական խոշոր գործերի հետ մեկտեղ Վ. Ի. Լենինը մշտապես շատ ուշադրություն էր նվիրում գրքերին։ Դրանք միշտ նրա ղինանոցումն էին, նրան օգնում էին գիտական և հասարակական-քաղաքական գործունեության մեջ։

Նոյեմբերի 26-ի առավոտյան ես գրի առա, որ Վլադիմիր Իլյիչը, նայելով գրքերը, մի քանիսը վերցրեց իր հետ։ Նոյեմբերի 30-ի երեկոյան նա խնդրեց նոր գրքեր տանել իրեն։ Վերադարձրեց «Պոսլեդնիե նովոստի» թերթի հոկտեմբերի 13-ի համարը և հանձնեց արդեն նայված նորույթները։ Խնդրեց հատուկ կերպով պահել Ֆ. էնգելսի «Քաղաքական կտակ» գիրքը։ Վերջինիս շապկի վրա նա գրել էր. «Պահել գրադարակի վրա։ 30/9—1922։ Լենին»։

Այդ նույն երեկոյան ես օրագրի մեջ գրեցի. «Ժամը 7-ն անց 55 րոպեին Վլադիմիր Իլյիչի մոտ եկավ Ադորատսկին, նստեց մինչև ժամը 8-ն անց 40 րոպե»<sup>2</sup>։

Վ. Վ. Ադորատսկին Լենինի հանձնարարությամբ պատրաստում էր Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի ընտիր նամակների ժողովածուն։ Վլադիմիր Իլյիչը նրան թույլ էր տվել գրքեր վերցնել իր գրադարանից, բայց պայմանով, որ նա թողնի համապատասխան գրություն։

---

<sup>1</sup> «Վոպրոսի իստորիի Կովի», 1963, № 2, էջ 82։

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 73։



Դեկտեմբերի 4-ի երեկոյան Վ. Ի. Լենինը ինձ հանձնեց իսպանացի Յ. Ռեյեսի «Նոր և հին ճանապարհներ» գիրքը և խնդրեց, որ դրա վերնագիրը և բովանդակութիւնը թարգմանվի ռուսերեն:

— Այ, իսպաներեն,— ասաց Լենինը,— ես չգիտեմ:

Յ. Ռեյեսի գիրքը Վլադիմիր Իլյիչին էր ուղարկել Կոմինտերնի գործկոմի քարտուղարութիւնը: Դեկտեմբերի 7-ին այն վերադարձրինք Կոմինտերնի գործկոմին՝ թարգմանելու համար:

Հերթապահ քարտուղարների օրագրում իմ վերջին գրառումը արվել է 1922 թվականի դեկտեմբերի 11-ի երեկոյան. «Ո՛չ մի հանձնարարութիւն չի եղել: Վլադիմիր Իլյիչը ո՛չ մի անգամ չի զանգահարել»<sup>1</sup>:

Վ. Ի. Լենինն այդ ժամանակ Գորկայում էր: Հաջորդ օրը առավոտյան ժամը 11-ին նա եկավ Մոսկվա և վերջին անգամ աշխատեց իր առանձնասենյակում: Նա եկավ ժամը տասնմեկն անց տասնհինգ րոպեին, մնաց ոչ երկար և զնաց իր բնակարանը: Հետո Վլադիմիր Իլյիչը վերադարձավ և ժամը տասներկուսից մինչև ցերեկվա երկուսը զրուցեց ԺԿՍ-ի և ԱՊԽ-ի իր տեղակալների հետ: Երեկոյան, ժամը հինգն անց երեսուն րոպեին, նա աշխատասենյակում զբաղվում էր հերթական գործերով, իսկ ժամը ութն անց տասնհինգ րոպեին իրեն վատ զգաց, հանդցրեց լույսը և սուռն գնաց: Մինչև հիմա Վլադիմիր Իլյիչի աշխատասենյակի ժամացույցը ցույց է տալիս այդ ցավալի ժամանակը՝ ժամը քսանն անց տասընհինգ րոպե:

<sup>1</sup> «Լուպրոսի իստորիի ԿԳՍՍՏ, 1963, № 2, էջ 76»

Դեկտեմբերի 13-ի առավոտյան նա ունեցավ հիվանդութ-  
յան երկու նոսր: Բժիշկները մեծ դժվարությամբ կարողա-  
ցան Վլադիմիր Իլյիչին համողել բուրրովին հրաժարվել աշ-  
խատանքից և գնալ քաղաքից դուրս: Վերջ ի վերջո նա հա-  
մաձայնեց մեկնելու և ասաց, որ «հենց այսօր սկսում է  
վերացնել իր գործերը»<sup>1</sup>:

---


<sup>1</sup> Վոպրոսի իստորիի ԿՊՍՍՔ, 1963, № 3, էջ 39:

## ԳԻՐՔԸ ՎԵՐԵՆԵԼԻ ՈՒՎ Է

**Վ**աղիմիր Իլյիչի մահից հետո նրա աշխատասենյակը պահում են որպես պատմական մասունք։ Նրա գրադարանից ղեկեա երկար տարիներ օգտվում էին Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան և Մարիա Իլյինիչնա Ուլյանովան։ Նրանք ապրում էին կրեմլյան բնակարանում։

Ես մասնակցել եմ լենինյան նշումներով զբաղվող պատրաստմանը՝ պարտիայի Կենտրոնական կոմիտեին կից Լենինի ինստիտուտին հանձնելու համար։ Այնուհետև Ն. Կ. Կրուպսկայայի խնդրանքով նրա մոտ աշխատեցի որպես գրադարանավարուհի, ինչպես նաև նրան օգնում էի նամակները նայելու դորժում, որ հսկայական քանակությամբ երկրի տարբեր ժայրերից նրան էին ուղարկում աշխատավորները։

1930 թվականին «Վ. Ի. Լենինի կյանքի ու գործունեության տարեթվերը» գրքի նախապատրաստման կապակցությամբ ինձ առաջադրեցին աշխատանքի անցնել Լենինի ինստիտուտում։ Այստեղ Լս որպես գիտաշխատող ծառայեցի 25 տարի։



Լոնդոնի րիտանական քանդաւանի զլխավոր դանլինը, որտեղ  
Վլադիմիր Իլյիչը աշխատում էր իր ստեղծագործութիւնների վրա:

*Մի անգամ ինձ հետ պրուցելիս Ն. Կ. Կրուպսկայան  
նկատեց.*

— Գրբերը Լենինի կյանքում վիթխարի դեր են խաղա-  
ցել: Դրանք նրան օգնեցին այն հսկայական աշխատանքում,  
որ նա կատարում էր, գրբերը նրան տվեցին այն գիտելիք-  
ները, որոնցով նա հիանալի զինված էր: Իսկ առանց դրա  
նրանից չէր կարող դուրս գալ այն Լենինը, որին մենք բո-  
լորս գիտենք:

Վլադիմիր Իլյիչը, որտեղ էլ գտնվելիս լիներ, միշտ լաշն կերպով օգտվում էր գրադարանից, շատ էր կարդում։ Այդպես էր Սիմբիրսկում և Սամարայում։ Պիտերում նա ամբողջ օրերով նստում էր հանրային գրադարանում։ Նույնիսկ բանտում եղած ժամանակ նրա քույրը՝ Աննա Իլյինիչնան, գրադարանից նրա համար գրքեր էր տանում։ Սիբիրյան արսորում Վլադիմիր Իլյիչը օգտվում էր Կրասնոյարսկում հայտնի վաճառական Յուդինի գրադարանից։ Ապրելով Շուշենսկոյն գյուղում, նա կազմակերպել էր գրքերի ստացումը մոսկովյան գրադարաններից։ Արտասահմանում էմիգրացիայի ժամանակ՝ Շվեյցարիայում, Շվեդիայում, Լեհաստանում, Ֆրանսիայում, Անգլիայում, Լենինը էլ ալվելի եռանդով էր օգտվում գրադարաններից։

«Երբ 1902—1903 թթ. մենք ապրում էինք Լոնդոնում,— հիշում է Ն. Կ. Կրուպսկայան,— Վլադիմիր Իլյիչը ժամանակի կեսը անց էր կացնում Բրիտանական թանգարանում, որտեղ գտնվում է աշխարհում ամենահարուստ գրադարանը... Երկրորդ էմիգրացիայի ժամանակ, երբ սաք վեճեր էին գընում փիլիսոփայական հարցերի շուրջը և Վլադիմիր Իլյիչը նստեց գրելու «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը, 1908 թվականի մայիսին նա Ժնևից դնաց Լոնդոն, որտեղ ալվելի քան մեկ ամիս մնաց հատկապես Բրիտանական թանգարանում աշխատելու համար։ Ժնևում... Իլյիչը ամբողջ օրերով անց էր կացնում «Ընթերցման ընկերութուն» (Société de lecture) գրադարանում... Օգտվում էր... նաև Կուկլինի անվան ռուսական հարուստ գրադարանից, որի վարիչն էր ընկ. Կարպինսկին... Փարիզում Իլյիչը օգտվում էր



գլխավորապես ազգային գրադարանից (Bibliothèque Nationale)»<sup>1</sup>:


Մինչև ռեուլյուցիան Մոսկվայում Հենինս աշխատում էր Ռեուլյանցկյան թանգարանի գրադարանում: Ռեուլյուցիայից հետո զբաղված լինելով պետական մեծ աշխատանքով, նա չէր մոռանում հանրային գրադարանի մասին և 1919 թվականի գարնանը նա գրադարանին որպես նվեր ուղարկեց իր գրքերը: (Վ. Ի. Հենինսի մահից հետո այդ գրադարանը կոչվեց նրա անունով. այն այժմ ճանաչված է ամբողջ աշխարհում):

Գրքերը, և ամենից առաջ Մարքսի ու Էնգելսի ստեղծագործությունները, եղել են Վլադիմիր Իլյիչի մշտական ուղեկիցները: Դրանք վկայում են դեպի գրականությունն ունեցած Վլադիմիր Իլյիչի վիթխարի սիրտ, նրա արտասովոր մեծ կուլտուրայի մասին: Դրանք ծառայում են և անվերջ կծառայեն մարդկանց բազմաթիվ սերունդների համար՝ որպես հիշեցում Հենինսի լայն ու բազմակողմանի կրթության, դեպի գիտելիքները, անխոնջ աշխատանքը նրա ունեցած ձգտման, իսկական ստեղծագործական, ռեուլյուցիոն աշխատանքային ոճի մասին:

Հիանալի իմանալով լավ գրքի մեծագույն օգտակարությունը, Վլադիմիր Իլյիչը բուռն ցանկություն ուներ, որ բոլոր աշխատավորները կարողանան իրենց մտավոր զարգացման, հոգևոր հարստացման, բեղմնավոր աշխատանքի համար որքան կարելի է լրիվ կերպով օգտվել այդ դանձից: Նա բազմիցս նշել է, որ գրականությունը և արվեստը մարդ-

---

<sup>1</sup> Ն. Կ. Կուլսկայա, Ի՞նչ է գրել և ասել Հենինս գրադարանների մասին: Մ., 1955, էջ 20—21 (ռուս.):



Մոսկվայի Ռուսական թանգարանի շենքի և նրա այն ընթերցարանի  
ընդհանուր տեսքը, որտեղ պարապել է Վ. Ի. Լենինը:

կանց վրա ներգործելու ուժեղագույն գործոններ են, որ գրա-  
դարանները մասսաների բաղաքական դաստիարակության  
կարեւոր աղբյուր են:

Գտնվելով էմիգրացիայում և արտասահմանում տեսնելով  
գրադարանային գործի լավ դրվածքը, կենինը երազում էր  
այն ժամանակների մասին, երբ Ռուսաստանում գրքերը  
կդառնան լայն մասսաների համար մատչելի: Իր «Ի՞նչ կա-  
րելի է անել ժողովրդական կրթության համար» հոդվածում,  
որը գրել է 1913 թվականին, նա պատմում է աշխարհի լա-  
վագույն գրադարանների մասին, որոնց հստակորեն է կազ-  
մակերպված ընթերցողների սպասարկումը, գրքերը մեծ  
շրջանառություն ունեն, դրանցից շատերը դրված են բաց  
դրադարանների վրա՝ ազատ ընդհանուր օգտագործման  
համար, դրադարանային շենքերում կազմակերպվում են հրե-  
կոյան դասախոսություններ, ժողովրդական հավաքներ, խե-  
լացի ժամանցներ: Նշելով այդ կարգ ու կանոնը Արեւմուտ-  
քում, նա սրտի ցավով հարցնում էր. «Իսկ մե՞ղ մոտ»:

Այդ նույն հոդվածում Վլադիմիր Իլյիչը ձեռնարկում է  
հայտնի գրույթը՝ «Հանրային գրադարանի փառքն ու պատի-  
վը տեսնել ո՞չ թե այն բանում, թե ինչքան հազվագյուտ բա-  
ներ կան այդտեղ, ինչքան XVI դարի հրատարակություններ  
կամ X դարի ձեռագրեր կան, այլ նրանում, թե որքան լայն  
շրջանառություն ունեն գրքերը ժողովրդի մեջ, ինչքան նոր  
ընթերցողներ են ներգրավված, որչափ արագ է բավարար-  
վում գրքի ամեն մի պահանջ...»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 334—335:

Միանգամայն հասկանալի է, որ, դառնալով սովետական կառավարության ղեկավարը, Լենինը չի մոռանում գրադարանային աշխատանքը: Նա ձևոր է առնում բոլոր միջոցները, որպեսզի այն դրվի նոր ձևով, սոցիալիստական ձևով: Վլադիմիր Իլյիչը ոչ թե պարզապես օգտակար մտքեր էր արտահայտում, լուզունգներ բաց թողնում, այլ ուշադիր ուսումնասիրում էր հարցը, խորհրդակցում մասնագետների հետ, հասնում ունի արդյունքների: Եվ այդ շատ հատկանշական էր նրա համար, գործի և ոչ խոսքի մարդու համար:

Ա. Վ. Լուճաշարսկու հետ ունեցած զրույցի ժամանակ, որը տեղի է ունեցել սովետական իշխանության առաջին օրերին, Վլադիմիր Իլյիչն ասել է.

«Նա մեծ նշանակություն էմ տալիս գրադարաններին: Դուք պետք է այդ գործի վրա աշխատեք ինքնիրո: Հավաքեցեք գրադարանագետներին... Գիրքը վիթխարի ուժ է: Ռևոլյուցիայի հետևանքով դեպի այն ձգտումը խիստ մեծացել է: Լենթերցողին պետք է ապահովել թե՛ մեծ ընթերցասրահներով և թե՛ գրքերի շարժունակությամբ...»<sup>1</sup>:

Վլադիմիր Իլյիչի նախաձեռնությամբ Ժողկոմսովետը մի շարք դեկրետներ է ընդունել՝ ուղղված գրադարանների աշխատանքների արմատական բարելավմանը: Այսպես, ԺԿՍ-ի 1919 թվականի հունվարի 30-ի նիստում Վ. Ի. Լենինը դրեց սովետական ռեսպուբլիկայում գրադարանային գործի դրությամբ մասին հարցը: Կառավարության որոշմամբ, որն ստորագրել էր Լենինը, լուսԺողկոմատին հանձնարարվեց ամեն

<sup>1</sup> Ա. Լուճաշարսկի. Պատմվածք Լենինի մասին, Պետրադհրատ, 1959, էջ 22 (ռուս.):



ամիս հրապարակել և ժողովոմսովետ ներկայացնել գրադարանների ու ընթերցարանների քանակն ընդլայնելու և բնակչության մեջ գրքերի տարածման աճի վերաբերյալ համառոտ փաստական տվյալները:

Վ. Ի. Լենինը ուշադիր կերպով ծանոթանում էր գրադարանային գործի վերաբերյալ գրականությանը: 1921 թվականի փետրվարի 5-ին, ընթերցելով Ֆ. Է. Դորլերի «Արդի գրադարանային ցանցը» հոդվածը, որը նախօրյակին հրապարակվել էր «Պրավդա»-ում, նա գրա վրա կատարեց բազմաթիվ նշումներ ու ընդգծումներ: «Լուսժողովմատի աշխատանքի մասին» իր հոդվածում, որը գրել էր դրանից երկու օր անց, Վլադիմիր Իլյիչը դրական արտահայտվեց շարժական գրադարաններ կազմակերպելու Դորլերի առաջարկի՝ վերաբերյալ:

Վ. Ի. Լենինի հանձնարարությունների գրառումների տեղում, որ կատարում էր ԺԿՍ գործերի կառավարիչ Ն. Պ. Գորբունովը, 1922 թվականի մարտի 10-ին արվել է ալսպիսի նշում:

«1) Հասնել Հանրային գրադարանը հետագա բայթայումից փրկելուն և նրան հնարավորությունն ընձեռել նորմալ աշխատանք կատարելու համար:

2) Հասնել գրքերի փոխանակման կազմակերպմանը՝ թե՛ որպես սեփականություն և թե՛ օգտագործման համար (Հանրային գրադարանի և Ռումյանցևի թանգարանի գծով)»<sup>1</sup>:

1922 թվականի մարտի 17-ին Վլադիմիր Իլյիչի հանձնարարությունների տեղում գրված է.

---

<sup>1</sup> «Իստորիչեսկի արխիվ», 1961, № 5, էջ 55:



«Հասնել Ռումյանցեի թանգարանի գրքերի կուտակվածության վերացմանը»<sup>1</sup>։

Այդ գրառման պատմությունն այսպիսին է։ Մի անգամ Վլադիմիր Իլյիչն ինձ խնդրեց իմանալ, թե Ռումյանցեի թանգարանի գրադարանում չկարգավորված ինչքան գրքեր կան։ Հաստատված տեղեկություններով, այդպիսի գրքերի թիվը հասնում էր մոտ մեկ միլիոն օրինակի։ Ես այդ մասին հայտնեցի Վլադիմիր Իլյիչին։ Նա առաջարկեց կազմակերպել շաբաթօրյակ, բայց ևս ասացի, որ գրքերի կարգավորման համար լավ կլինի ներգրավել մասնագետ մարդկանց, այլապես կարելի է այնպես «կարդի բերել», որ հետո լաց լինես։ Վլադիմիր Իլյիչը լիաթոք ծիծաղեց, համաձայնվեց իմ առաջարկությանը և համապատասխան կարգադրություն արեց Ժողովոսովսկայի գործերի կառավարչին։

Լենինը առանձնապես խիստ էր վերաբերվում քաղաքական գրականությանը, գիտական աշխատություններին, համարամատչելի հրատարակություններին։ «Հանրամատչելի դիրքը, — ասում էր նա, — պետք է գրված լինի պարզ ու սեղմ, առանց օտար բառերի, պետք է հասկանալի լինի ամենահասարակ, ոչ հմուտ ընթերցողին»<sup>2</sup>։

Գրքի դերը անասելիորեն աճել է մեր օրերում այն ժամանակ, երբ կոմունիզմի կառուցման պատմական խնդիրների կատարումը պահանջում է սովետական յուրաքանչյուր մարդու ըստ ամենայնի ակտիվացում։

Ինձ՝ հին սերնդի գրադարանավարուհու համար, շատ հաճելի է այժմ տեսնել, թի մեր երկրում գրքի ինչ հսկայա-

<sup>1</sup> «Խառոդիչեսկի արխիվ», 1961, № 5, էջ 56։

<sup>2</sup> Գ. Կրժիժանովսկի, Մեծ Լենինը, Պետքաղհրատ, 1956, էջ 31 (ռուս.)։

կան հարստություններ կան: ՍՍՌՄ-ում գործում են ավելի քան 380 հազար գրադարաններ: Դրանց ֆոնդը կազմում է մոտ երկու միլիարդ գիրք: 1959 թվականին ՍՄԿՊ կենտկոմը որոշում ընդունեց «Երկրում գրադարանային գործի վիճակի և բարելավման միջոցառումների մասին»: Կատարելով այդ որոշումը, պարտիական և սովետական կազմակերպությունները սկսեցին է՛լ ավելի մեծ ուշադրություն դարձնել գրադարանների վրա, շատ բան է արվում դրանց նյութատեխնիկական բազան ամրապնդելու համար:

Բայց սովետական մարդկանց պահանջարկը գրքի նկատմամբ օրըստօրե աճում է: Դա պարտավորեցնում է մշտապես բարելավել գրադարանների աշխատանքը, այն սերտորեն կապել ժողովրդի կողմից լուծվող արտադրական ու քաղաքական հրատապ խնդիրների հետ: Պարտիան սովորեցնում է, որ գրադարանները պետք է ավելի ակտիվորեն օգնեն աշխատավորությանը՝ գտնելու իրենց հետաքրքրող հարցերի պատասխանը, նպաստելու նրանց մոտ կոմունիստական աշխարհայացքի ձևավորմանը, կուլտուրական ու գիտական հորիզոնի ընդլայնմանը, օգնելու ավելի լավ, արտադրողաբար աշխատելու, հաջողությամբ ներդնելու բոլոր նորը, առաջավորը:

Իմ ամբողջ կյանքը ես նվիրել եմ գրքերին: Աշխատել եմ վլադիմիր Իլյիչի գրադարանում: Եվ ամբողջ սրտով ուզում եմ մեր սովետական բոլոր մարդկանց և հատկապես երիտասարդությանը ցանկանալ՝ լենինի նման սիրեք գիրքը, միշտ բարեկամացեք նրա հետ, նրանից վերցրեք որքան կարելի է ավելի շատ գիտելիքներ և համարձակ, ստեղծագործաբար դրանք կիրառեք ձեր կյանքում, ձեր աշխատանքում, լուսա-

վոր ապագայի, կոմունիզմի համար մղվող պայքարում։ Ուշադիր ուսումնասիրեցեք լենինյան ստեղծագործությունները։ Դրանք ձեզ կօգնեն տիրապետելու իրականության նկատմամբ ցուցաբերվող գիտական, ուսուլուցիկ մոտեցմանը, ինքնուրույն կերպով գտնելու մեր արդիականության բարդ հարցերի ճիշտ պատասխանները, ավելի լավ հասկանալու ձեր տեղն ու դերը համաժողովրդական գործում։

Եվ ոչ միայն ուսումնասիրեցեք լենինին, այլև աշխատեցեք ապրել լենինի նման ազնիվ, անձնուրաց կերպով. լենինի նման աշխատեցեք ժողովրդի համար՝ հանուն կոմունիստական իդեալների լիակատար հաղթանակի։



Լենինի՝ մեծ ու իմաստուն մարդու ղեկավարության ներքո աշխատելը հեշտ էր ու հաճելի։ Նրա առաջադրանքներն աչքի էին ընկնում իրենց պարզությամբ ու լակոնիկությամբ։ Նա երբեմն հարցնում էր, թե արդյոք կարիք չկա ինձ օգնել իրեն հարկավոր գիրքը որոնելու գործում։ Ինձ հետ միասին ուրախանում էր, երբ հաջողվում էր արագորեն ստանալու նրան հետաքրքրող նոր դրականությունը։

— Հենց երեկ գրեցի, իսկ այսօր արդեն ստացա, — ասում էր Վլադիմիր Իլյիչը գոհունակությամբ։

Իսկ ես երջանիկ էի այն գիտակցությունից, որ իմ փոքր, համեստ լուման էի ներդնում այն վիթխարի գործի մեջ, որով դբաղվում էր Վ. Ի. Լենինը։

Մենք բոլորս՝ Ժողկոմսովետի ապարատի աշխատողներս, նրանից սովորում էինք կազմակերպվածություն և աշխատա-

սիրություն, զգայուն և ուշադիր վերաբերմունք աշխատավորության կարիքներին ու պահանջմունքներին:

Ես այժմ շատ անգամ եմ հանդիպում Հիդիա Ալեքսանդրովնա Ֆոտիկայի, Ելիզավետա Կոնստանտինովնա Մինինայի և Վ. Ի. Լենինի քարտուղարության մյուս աշխատակիցների հետ: Ամեն անգամ մենք նոր ուրախությամբ ենք հիշում մեր աշխատանքի օրերը լենինյան Ժողկոմսովետում, և նորից կենդանի վլադիմիր Իլյիչը կանգնում է մեր մտահայացքի առջև՝ արդարացի ու պահանջկոտ, կենսախիստ ու գործնական, հասարակ ու մեծ, ամբողջությամբ դեպի առաջ մղվող:

Լենինի գործերն ու գաղափարները հաղթանակում են, որովհետև դրանք արտահայտում են աշխատանքի մարդկանց ամենանվիրական ցանկությունները: Լենինի հիշատակը դարեր կապրի, այն անմահ է, ինչպես անմահ է երկրի վրա նոր լուսավոր կյանք ստեղծող ամբողջ առաջադեմ մարդկությունը:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                     |     |
|-------------------------------------|-----|
| Առաջաբանի փոխարեն . . . . .         | 3   |
| Անմոռանալի օր . . . . .             | 7   |
| «Ի՞նչ եմ քան կա». . . . .           | 14  |
| Վաղիմիր Իլիչի երկտողերը . . . . .   | 29  |
| Լենինը ընթերցող և հեղինակ . . . . . | 55  |
| «Իսկ ես պարտավոր եմ» . . . . .      | 91  |
| Հերթապահությունում . . . . .        | 111 |
| Գիրքը վիթխարի ուժ է . . . . .       | 121 |







Շուշանիկա Նիկիտիչնա Մանուչարյանց  
Վլադիմիր Իլիչի գրադարանում

Թարգմանիչ՝ Ս. Կ. Խաչատրյան  
Խմբագիր՝ Ա. Ա. Լյուդիկյան  
Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Խուդիկյան  
Տեխ. խմբագիր՝ ՈՆ. Ս. Փանիկյան  
Վերստ. սրբագրիչ՝ Ա. Պ. Հակոբյան

Պատվեր 1003

Տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 24/V 1966 թ.,

Ստորագրված է տպագրության 8/VIII 1966 թ.,

Քուղթ՝ № 1,  $70 \times 108^{1/32}$ , հրատ. 4,7

մամ., տպագր. 4,25 մամ. = տպւմ. 5,82

մամ. + 1 ներդիր: Դինը՝ 16 կոպ.

«Հայաստան» հրատարակչություն,

Երևան—9, Տեղյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական

կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր

վարչության Պոլիգրաֆկոմբինատ,

Երևան, Տեղյան 91:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0046386



Շուշանիկտ Նիկիտիչնա  
Մանուշտայանցը ծնվել է  
1888 թվականի սեպտեմբե-  
րի 15-ին: Կոմսոմոլսկոյե  
այստիայի ամրամ է 1918  
թվականի նոյեմբ: Կյան-  
քում նրան մեծ պատվով է  
վրձակվել. Էրեմ տարի շա-  
բուսով նա աշխատել է  
Վ. Ի. Լենինի մոտ քաղա-  
ցադարանավարձին: Հետո  
էղել է ՍՄԿՊ Անտի-սեմ-  
կից Մուսոնիզմ-լենինիզմի  
ինստիտուտի գլխավոր աշ-  
խատող:

Շ. Ն. Մանուշտայանցը  
պարգևատրվել է Աշխա-  
տանքային կարմիր դրոշի  
շքանշանով: Այժմ, լինելով  
վոստանյան բոլորակառ, նա  
նույնպես կան ի ստեղծա-  
գործական մեծ աշխատանք  
է տանում:



ԳԻՆԸ 16 Կ.

“ՀԱՅԱՍՏԱՆ”